


Հեղինակ  
ՄՈՋԱՄՍԵՂ ՄՈՋԱՄՍԵՂԻ ԷՇԹԵՀԱՐԻ



# ՄՈՒՆԱՎԻ

ՄԱՍՆԱՎԻԻ ՊԱՏՈՒՄՆԵՐ

Գրված է Մուսնա Չալալ եղ-Ռին Մոհամմադ  
Ծննդյան 800 տոնակին

672

ՄՈՂԱՍՏԵՂԻ ՄՈՂԱՍՏԵՂԻ ԷՇԹԵՀԱՐԴԻ

ՄՈՂԱՎԻ

ՄԱՍՆԱՎԻԻ ՊԱՏՈՒՄՆԵՐ

داستان شکر

نوشتہ: محمد محمدی اشتہاردی

به مناسبت هشتصدمین سالگرد تولد مولانا جلال الدین محمد بلخی (مولوی)

6740

Պարսկերենից թարգմանեց  
Էդուարդ Հախվերդյանը  
Classic Persian Poetry  
Translated from Persian  
by Edward Hakhverdian



Երևան 2007



ՀՏԳ 891.5 Մոհամմեդ  
Մոհամմեդի Էջբեհարդի  
ԳՄԴ 84.5 Իրան  
Մ 868

این کتاب به همت  
رایزنی فرهنگی سفارت ج.ا.ایران در ارمنستان  
ترجمه و چاپ شده است

این اثر در سال ۱۳۸۵

که مرزین به نام رسول اعظم (صلی الله علیه و آله وسلم) می باشد به زیور طبع  
آراسته می گردد

به مناسبت هشتصدمین سالگرد تولد مولانا جلال الدین محمد بلخی (مولوی)

**Գիրքը քարգմանել և հրատարակել է Հայաստանում ԻԻՀ  
ղեկավարության մշակույթի կենտրոնը**

Գիրքը հրատարակվում է արեգակնային 1385  
թվականին (2006-2007 թթ.), որը հոչակված է  
իսլամի մեծ մարգարեի տարի

Գիրքը նվիրվում է Մոլանա Ջալալ էդ-Գին Մոհամմադ Բալլիի  
(Մոլավի) ծննդյան 800 ամյակին

Մ 868 Մոհամմեդ Մոհամմեդի Էջբեհարդի. Մոլավի (Մասնավիի պատումներ)  
(Պարսկ. քարգմ. Էդ. Հախվերդյան) / Եր., «Գրական հայրենիք» (Հայաստան),  
2007թ., 128 էջ:  
Իրանի միջնադարի հոչակավոր քանաստեղծ, գիտնական և միստիկ  
Ջալալ էդ-Գին Մոհամմեդի (Մասնավիե Մանովի) հանրահայտ դի-  
վանը՝ 26000 երկտող, համակցված, չընդհատվող երկար պատմվա-  
ծաշար է, որը ներկա գրքում վերածվել է պարզ արձակի: Մոլանան  
այս պատմությունների միջոցով իր միստիկ ճշգրիտ արվեստով նկա-  
րագրել է մարդկայնության վեհ իմաստը:



AL-HODA

Մ 4703020100 արտ  
70(01)2007

ISBN 964-439-188-8

ISBN 978-5-540-02049-7

© Էդ. Հախվերդյան, քարգմ., 2007թ.:

بسمه تعالی

مقدمه

واژه های زیبای «زبان فارسی» و «ایران» همواره یادآور ادبیاتی  
غنی و فرهنگ و تمدنی دیرین و فاخر می باشد، به ویژه آنکه متصل به فرهنگ  
اسلامی و معارف لایزال قرآنی گشته است.

تاریخ پر افتخار ایران سرشار از شاعران، نویسندگان و ادیبانی است  
که کارهای مانای آنها همیشه در سینه ادبیات در گستره جهانی خواهد  
درخشید.

یکی از این نام آوران بزرگ، شاعر پارسی گوی مولانا محمد جلال

الدین بلخی، مشهور به مولوی می باشد.

بدون تردید آثار مانای مولوی از ذخایر عظیم فرهنگ بشری و

گنجینه ای گرانسنگ برای اندیشمندان و تشنگان معنویت ناب و ادبیات انسان

ساز است و به همین جهت در سراسر گیتی نام و آوازه او طنین افکن گردیده و

میلیون ها نسخه از آثار فارسی و یا ترجمه شده آن در کشورهای مختلف

انتشار یافته است. بی سبب نیست که بسیاری از بزرگان ادب جهانی به جهت

درک بهتر مفاهیم عمیق آثار مولوی و خصوصاً مثنوی مولوی، ابتدا زبان

فارسی را آموخته اند و هم اینک شرق شناسان و ایران شناسان و حتی

سال ۲۰۰۷ میلادی، هشتصدمین سال تولد این شاعر و عارف بزرگ ایرانی است و به همین دلیل راینزنی فرهنگی ج.ا. ایران در ارمنستان اقدام به ترجمه و چاپ کتابی ارزشمند در رابطه با مولوی نمود و برای این مهم جلد اول کتاب داستان های مثنوی نوشته مرحوم محمد محمدی اشتیاردی را انتخاب کردیم و اینک این اثر روح نواز و اثر بخش پیش روی شماست و انشاء... متعاقباً سایر جلدهای این اثر مهم نیز ترجمه و منتشر خواهد گردید.

در خاتمه وظیفه خود می دانم از مترجم بزرگ و مشهور ارمنی ایرانی ادوارد حق وردیان که همکاری گسترده ای با این مرکز فرهنگی داشته و خدمات فراوانی به فرهنگ ایران و ارمنستان داشته اند و مترجم ارمنی اثر فوق نیز می باشند تشکر نمایم.

رضا عطوفی

راینزنی فرهنگی سفارت جمهوری اسلامی ایران در ارمنستان

اسفند ۱۳۸۵

فیلسوفان و دین شناسان بزرگی در غرب و شرق به تحقیق و پژوهش درباره اندیشه های این شاعر پارسی گوی پرداخته اند.

در ارمنستان نیز که دارای تمدن و فرهنگی غنی می باشد اندیشمندان و ایران شناسان بزرگی به بررسی و تحقیق و مطالعه در آثار مولوی اهتمام داشته و دارند.

مولانا جلال الدین محمد مولوی در روز ششم ربیع الاول سال ۶۰۴ هجری قمری (۱۲۰۷ میلادی) در شهر بلخ که اکنون یکی از شهرهای افغانستان است و در زمان مولانا، یکی از مراکز فرهنگ و ادبیات ایران در خراسان به شمار می آمد به دنیا آمد و در روز ۵ جمادی الاخره سال ۶۷۲ هجری قمری (۱۲۷۳ میلادی) در شهر قونیه (یکی از شهرهای جنوبی ترکیه فعلی) از دنیا رفت.

پایه و اساس گسترش وسیع تأثیر مولوی و همچنین نفوذ افکار و اشعار وی در سراسر جهان را، باید در مشرب عرفان اسلامی ایرانی و وسعت نظر خاص عارفانی دانست که قائل به حقیقت واحد همه ادیان آسمانی است.

عرفان مبتنی بر عشق مولانا یکی رابطه بین عارف و معشوق (خداوند) و دیگری رابطه بین عارف با محیط اطرافش را (اعم از انسانها و طبیعت) تفسیر می کند.

## Հանուն Աստծո

«Պարսից լեզու» և «Պարսկաստան» գեղեցիկ բառերը բոլորին հիշեցնում են հարուստ գրականության և մշակույթի, ինչպես նաև՝ հնագույն և շքեղ քաղաքակրթության մասին, հատկապես նրանց, ովքեր շփվել են իսլամական մշակույթի և Ղուրանի մշտնջենական գաղափարների հետ:

Իրանի պանծալի պատմությունը ողողված է մեծ պոետներով և բանաստեղծներով, որոնց մնայուն ստեղծագործությունները հավերժ փայլում են համաշխարհային գրական ասպարեզում:

Իրանցի մեծ և ականավոր գրողներից մեկն էլ Մոլանա Մոհամմեդ Ջալալ էդ-Ղին Բալխին է, որը հայտնի է Մոլավի գրական անվամբ:

Անկասկած, Մոլավիի մնայուն ստեղծագործությունները, որոնք մարդկային քաղաքակրթության ահռելի ժառանգության մի մասն ու անգին գանձ են՝ մարդ կերտող գականության ու մաքուր բանականության ծարավ գիտնականների համար, ամբողջ աշխարհում մեծ հռչակ ու ճանաչում են վայելում: Բավականաչափ ճանաչված հրատարակիչների կողմից դրանք միլիոնավոր օրինակներով քարգմանվել և հրատարակվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով: Պատահական չէ, որ աշխարհի մեծ գրականագետներից շատերը Մոլավիի ստեղծագործությունների վեհ գաղափարների, հատկապես նրա «Մասնավի» ստեղծագործության առավել խորը ընկալման նպատակով նախապես պարսկերեն սովորելով, այժմ համարվում են արևելքի և արևմուտքի մեծ արևելագետներից, իրանագետներից, կրոնագետներից ու անգամ փիլիսոփաներից՝ զբաղվելով պարսից գրականության և հատկապես այս մեծ պոետի գաղափարների ուսումնասիրությամբ և քննությամբ:

Հարուստ քաղաքակրթության և մշակույթի տեր Հայաստանում մույնպես եղել են և կան մեծ իրանագետներ և գրականագետներ, որոնք զբաղվել և զբաղվում են Մոլավիի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ:

Մոլանա Ջալալ էդ-Ղին Մոհամմեդ Մոլավին ծնվել է արեգ. օր. ռաբի օլավալ ամսվա 6-ին (մ.թ.1207) Բալխ քաղաքում, որը ներկայումս Աֆղանստանի քաղաքներից մեկն է: Մոլանայի լույս աշխարհ գալու ժամանակ այն համարվում էր Իրանի Խորասան շրջանի մշակութային ու գրական կենտրոններից մեկը: Մոլավին կյանքից հեռացավ արեգ. օր. 672 թվ. ջամադի օլախար ամսվա 5-ին (մ. թ. 1273) Ղունիե քաղաքում (ներկայիս

Թուրքիայի հարավային շրջանում):

Ամբողջ աշխարհում Մոլավիի մեծ համբավի ձեռք բերման և նրա ստեղծագործությունների ու գաղափարների ազդեցիկ ներգործության հիմնական գրավականն է իրանական իսլամական միստիցիզմը, իսկ նրա հեռատես միստիկական գաղափարները տաճում էին դեպի բոլոր աստվածային կրոնների մեկ ընդհանուր ճշմարտություն:

Մոլանայի սիրով պայմանավորված միստիկական մեկնաբանում էր արեֆի և սիրեցյալի (Աստծո), ինչպես նաև՝ արեֆի և շրջակա միջավայրի (մարդկանց և բնության) միջև գոյություն ունեցող կապը:

2007 թվականին լրանում է իրանցի մեծ միստիկ և բանաստեղծ Մոլավիի ծննդյան 800-ամյակը, ուստի՝ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի կենտրոնը ձեռնամուխ եղավ Մոլավիի կյանքին և ստեղծագործությանը նվիրված այս արժեքավոր գրքի քարգմանությանն ու հրատարակմանը: Որպես սկիզբ՝ մշակույթի կենտրոնն ընտրեց երջանկահիշատակ Մոհամմեդ Մոհամմեդի Էշբեհարդիի կազմած «Մոլավիի մասնավիներ» գրքի առաջին հատորը և այժմ այդ հոգերով և ազդեցիկ ստեղծագործությունը գտնվում է ձեռք առջև: Աստծու կամոք հաջորդաբար կքարգմանվեն և կհրատարակվեն նաև այս արժեքավոր գրքի մյուս հատորները:

Վերջում իմ պատքն են համարում շնորհակալանքս ու երախտիքս հայտնել իրանահայ մեծ և անվանի քարգմանիչ Էդուարդ Հախվերդյանին, որը լայն համագործակցություն է ծավալում մեր կենտրոնի հետ և մեծ ծառայություն է մատուցում իրանական և հայկական մշակույթներին: Այս գրքի հայերեն քարգմանությունը մույնպես իրականացվել է վերջինիս կողմից:

## ՌԵԶԱ ԱԹՈՒՖԻ

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության  
մշակույթի խորհրդական  
Գարուն-2007

**Ճաղկեփնջի գինը միայն հավքը գիտի այգեպանի,**

**Եվ ոչ թե նա, ով որ կարդաց, բայց չըմբռնեց միտքը բանի:**

**Հաֆեզ**

**ՀԱՆՈՒՆ ԱՍՏՃՈ**

**ՆԱԽԱԲԱՆ**

*Թե հոգու խոսքին դու ծարավեցիր,  
Մասնավիճերում հագուրդ առ, անցիր:*

**Ա. հյանցիկ հայացք Մոլավիի կյանքին:**

Միջնադարի մեծանուն բանաստեղծ, իսլամական աշխարհի հռչակավոր գիտնական և միատիկ Ջալալ էդ-դին Մոհամմեդը, ում անունը դարեր շարունակ հորովվել և հռչակվել է Մոլանա\*\* անվանատիրոջ, ծնվել է 604 թ. /1225թ./ Բալխ քաղաքում: Բալխը, որն այժմ Աֆղանստանի հեռավոր քաղաքներից է, Մոլանայի ժամանակ գտնվել է Խորասանի նահանգի մեջ և համարվել է գրականության ու մշակույթի կենտրոններից մեկը: Մոլանայի հայրը՝ Բահ էդ-դին Վալադը, որի անունն էր Մոհամմեդ- իբն Հոսեյն Խարիբի, հռչակված էր որպես «Մութան օլ- օլամա\*\*\*»:

Մոլանան այնքան ընդունակ էր, որ հինգ տարեկանում զբաղվեց ինքնատիրապետման և հոգեկրթության արվեստով:

Հայրը՝ Բահա էդ-դին Վալադը, Բալխի բնակիչների հետ ունեցած տարաձայնության և Խարազն շահի թշնամության պատճառով ստիպված է լինում գաղթել Բալխ քաղաքից: Նա իր 13-ամյա որդու՝ Ջալալ էդ-դին Մոլանայի հետ միասին, Հաջջի ծխահանդեսին մասնակցելու նպատակով դուրս եկավ Բալխ քաղաքից: Ճանապարհին Նեյշաբուր քաղաքին հասնելով՝ շտապում են այցելել Օեյխ Ֆարիդ էդ -դին Աթթարին\*\*\*\*:

Օեյխ Աթթարը գրկում է Ջալալ էդ- դինին, աղոթում է նրա համար և իր «Ասրար նամե»\*\*\*\*\* մասնավի գիրքը ընծայում է նրան:

Մոլանան իր հոր հետ միասին Բաղդադից անցնելուց և հաջջի

\* Հանգավորված երկտող:

\*\*Սեր տեր:

\*\*\*Իմաստունների սուլթան:

\*\*\*\*Աթթար Նեյշաբուրի՝ միստիկ, խոշոր բանաստեղծ:

\*\*\*\*\* Գաղտնիքների գիրքը

ուխտագնացությունից հետո հասավ Մալաթիե քաղաք, ուր մնաց չորս տարի, այնուհետև՝ յոթ տարի բնակվեց Վարանդեհում:

Ի վերջո Արգանջանի արքա /Արևմտահայաստան/ Ֆախ էդ-դին Բահրամ շահը և իր որդին՝ Ալա էդ-դին Դավուդ շահը, իրենց ուշադրությանն են արժանացնում Մոլանայի հորը, այնուհետև Բուժի /Փոքր Ասիա/ սելջուկյան արքա Բեդլոբադը նրան հրավիրում է Դուռնի քաղաքը, և նա իր որդու հետ ընդունում է հրավերը:

Ջալալ էդ-դին Մոհամմեդը, ըստ որոշ պատումների, Վարենդ քաղաքում հոր առաջարկությամբ ամուսնանում է Սամարղանդի Խաջե Լալայի դուստր Գոհար խաթունի հետ և ունենում երեք արու զավակ ու մի դուստր: Հայրը Դուռնիում խրատական քարոզներով մինչև իր կյանքի վերջը՝ 1312թ., զբաղվեց մարդկանց խորհրդատվությամբ: Հոր մահից հետո քսանչորսամյա Մոլանան, շարունակելով հոր աշխատանքը, սկսեց մարդկանց խրատական քարոզներ տալ:

Մոլանան որոշ ժամանակ Դուռնիից Հալեպ մեկնեց և, չորսից-հինգ տարի մնալով այնտեղ, ծանոթություն հաստատեց այն օրերի հռչակավոր միստիկ գիտնական Մահի էդ-դին Արաբի հետ: Այնուհետև մեկնեց Դամասկոս և այնտեղ ևս զբաղվելով ուսումնառությամբ՝ որոշ ժամանակ անց վերադարձավ Դուռնի:

Մոհադեդ Թորմոզի մահից հետո, շուրջ հինգ տարի, կրոնագիտություն դասավանդեց: Ինչպես նշվում է, նրա լսարանը 400-ից ավելի աշակերտ է ունեցել:

Նա հոգևոր առաջնորդ-գիտնականների մեծան՝ իր փաթեթը գլխին էր փաթաթում և վերջնամասը կախում էր պարանոցին, և լայնաթև թիկնոց էր կրում և այն օրերում հռչակվում է որպես Ահմադի կրոնի առաջնորդ:

Մոլանայի հանդիպումը Շամս էդ-դին Մոհամմեդ իբն Ալիի հետ /1263/՝ հռչակված որպես Շամս Թաբրիզի,\* նրա կյանքի ցնցող էջերից մեկն է, որը առանձին մի պատում է:

Մոհամմեդ Ջալալ էդ-դին Մոհամմեդը /որին կոչել են նաև Մոլա-

.....  
\* Միջնադարյան խոշորագույն միստիկ բանաստեղծ:

վի, Մոլանայե Ռումի/ վախճանվեց 1293թ՝. հանկարծահաս հիվանդությունից: Դուռնիե քաղաքի ողջ բնակչությունը՝ մեծ թե փոքր, ներկա եղան նրա հուղարկավորությամբ: Նրա մահը հավասարապես սգում էին թե՛ քրիստոնյաները և թե՛ հրեաները: Նրա աճյունը հողին հանձնեցին Դուռնիում: Նրա գերեզմանի վրա՝ ընտանեկան գերեզմանոցում, մեծահարուստ համախոհները դամբարան կառուցեցին, որը հայտնի է «Լոբեհե Խեզրա» անվանումով:

**Բ. Մոլանայի գիտական աշխատությունները:**

1. «Մասնավիե մանավի»-\* գրի է առնվել Բահրե Ռամալում, կազմված է վեց դավթարից, պարունակում է 26 հազար երկտող և մեծ է սուրբ գրքերին: Այն շարունակական, համակցված պոեմաչար է՝ միստիկական, կրոնական և բարոյական գաղափարապատումներով, որը հեքիաթների, առակաբանության միջոցով հետամուտ է առավել ըմբռնելի բացատրել իմաստասիրական ու միստիկական մտքերը:

2. «Գիվանե դազալաթե Շամս»-\*\* կազմված է 50 հազար միստիկական բարձրարժեք բեյթից և նվիրված է մեծ բանաստեղծ Շամս Թաբրիզիին:

3. «Ռ-որայաթ»-\*\*\* Շամսի գազելների հետ միասին հրատարակվել է Բադի օլզաման Ֆորուզանֆարի /համալսարան, Թ. ութերորդ հատոր/ միջոցով:

4. «Ֆիեհ- Մաֆիե»- ամփոփում է Մոլանայի պերճախոսությունները, որոնք գրառվել են որդու՝ Բահա էդ-դին Մոհամմեդի և Մոլանայի համախոհներից մեկի միջոցով:

5. «Մակթուբաթե Մոլանա»- գետեղված են Մոլավիի նամակները:

6. «Մաջլեսե սաբեե»- ճառեր, որոնք Մոլանան արտասանել է մզկիթի ամբիոնից:

.....  
\* Հոգևոր, բարոյական հանգավորված երկտողեր:

\*\* Շամսի գազելների դիվանը:

\*\*\* Բառյակներ:

**Գ. Մոլանայի անհատականությունը:**

Մոլանայի մասին տարակարծիք բաներ են ասվել. ոմանք նրա դիրքը անչափ վեհ են համարել, և ոմանք նրան վարկաբեկել են որպես սուֆիստ և զանդիլ\*:

Բոլոր այս դատողությունների հիմքը նրա հանրահռչակ «Մասնավիե Մանավի» գիրքն է, քանզի այս գրքում թե իմաստասիրական և ուսանելի շատ մտքեր կան, և թե՛ երբեմն չհիմնավորված...

Հակիրճ կարելի է ասել, որ Մոլանան ընդարձակ մտքի, անհուն և ալեկոծ հոգու տեր անձնավորություն էր, որը մերթընդմերթ սայթաքել է:

Նա մերթ ասում է.

Երբ ասում եմ ափ, ծովափն է իմ միտքը\*\*

Երբ ասում եմ լա,\*\*\*-էլա-ն է իմ միտքը:

Եվ մերթ.

Այրվեցի ես, այրվող կրակ ո՞վ է ուզում,  
Որ ինձանով կրակի տա հարդ ու ցողուն:

Եվ ծեր քրմապետի անունից պատմում է.

Երեք խոսք է արգասիքը իմ կյանքի.

Հում էի ես, թրծվեցի ու այրվեցի:

Եվ մերթ այսպես է նկարագրում իր անճարակությունն ու բառերի, տերմինների հակիրճությունը՝ մտքերի բացահայտման համար.

Երանի թե գոյությամբ քո ասուն լինեիր,

Որպեսզի դու գոյակներին քողազրկեիր:

Միաժամանակ արարչության հրաշքի առջև իրեն փոքր տեսնե-

\* Մանիքեական, Մանիի ուսմունքի հետևորդ, հերետիկոս:

\*\* Շուրթ, բառախաղ շուրթ, նաև եզր, ափ, ծովափ:

\*\*\* Լա- ժխտական մասնիկ/արար/ և էլա- բացի, միայն:

լով՝ զգուշավոր ու հնազանդորեն է քայլ վերցնում՝ ասելով.

Հգոր քամու ռազմաբեմում հարդացողուն եմ,

Ինքս էլ չգիտեմ, թե ես ու՞ր, ու՞ր պիտի քշվեմ:

Նրա ճգնավորությունն ու անքուն գիշերները վկայում են, որ նա միայն պերճախոս չէր, որպեսզի բանաստեղծելով ու հավաքագրելով մի շարք մտքեր ու կադապարներ՝ ներկայացներ մի ամբողջ դիվան, այլ էության մեջ ու հոգով գործի մարդ էր և հավատքի ու զիտության ասպարեզում՝ առաջամարտիկ: Նրա միտքը ճախարում էր հավիտենության ու հավերժության մեջ, և նրա աշխարհայացքի տեսարաշտը առավել հեռու է այս աշխարհից.

Նա ասում է.

Այս հեքիաթն ասվեց արարչությամբ երկրի՝

Անուտք ու գլուխ, ինչպես միտքը սիրահարի:

Գլուխ չունի, որ նախասկզբից առաջ է եղել,

Ոտք չունի, որ հավիտենորեն բնույթն է եղել:

**Գ. Մոլանայի նպատակը մասնավոր գրքից:**

Մոլավիի մասնավոր ամբողջական տեքստը հուշում է, որ հեղինակի նպատակը՝ գրառելով այս գիրքը /26 հազար երկտող վեց դավրարում/, եղել է կատարյալ՝ և՛ անբիծ խղճի, և՛ հոգու տեր մարդու / իր տեսանկյունից/, աստվածային անհատականության հզորացման ցուցադրումը, որի հիմքը անարատությունն ու բարոյակրթությունն է: Նա ցանկանում է մարդկանց ուշադրությունը սևեռել այն բանին, որ նրանց իրական կյանքը հոգու կատարելության և բարոյականության մեջ է, և ոչ թե՛ որկրամոլության, քնի, զայրույթի և կրքերի: Եվ ասում է.

Փուշը դու՛րս հանեք լողմանի ավիից:

Այսինքն՝ կրքերի, ցանկությունների փուշը դուրս հանեք լողմանի /մարդկային հոգու/ ավիից: Եվ մի այլ տեղ ասում է.

Էություն հոգին, որ վարդաստանն է միակ Աստծո՝

Էլ նրա խորքում ինչու՞ է առկա փուշը անհաճո՛:

Հարկ է ասել, որ էրֆանը\* երկու տեսակ է.

**Ա. Դրական էրֆան:**

**Բ. Բացասական էրֆան:**

Դրական էրֆանը այն է, որ մարդուն ասպարեզի հերոս է դարձնում և բոլոր առումներով իսլամական մարդուն ուսուցանում է անարատության, կրթության և կատարելության գիտական ուղիները:

Բացասական էրֆանը այն է, որ մարդուն անիրազեկ և հեռու է պահում արտաքին աշխարհից և կյանքի իրականություններից և մարդուն մղում է մեռության, անճարակության ու դատարկության:

Հարկ է նշել, որ Մոլանան մերժում է չոր և առանց սիրո ու նվիրվածության Աստվածաճանաչումը /էրֆանը/ և շարունակ գործնական էրֆանից է խոսում:

Ինչևէ, Մոլանայի մասնավի գիրքը ամփոփում է ոչ միայն հարյուրավոր, այլև հազարավոր իսլամական պատումներ ու պատգամներ, որոնք ներկայացնում են կյանքի շոշափելի իրողությունները:

Մոլանան իր բանաստեղծություններում նաև շատ է հենվել կյանքի իրատեսությանը, ինչպես նաև՝ հոգու և մարմնի ցանկությունների հագեցման առումով գործնական ջանքն ու եռանդը:

Այս ճանապարհին դու գինի քամիր ու գինի խմիր,  
Մինչ պահը վերջին ոչ մի ակնթարթ դու մի հապաղիր:

«Մոլանան ոչ հորդորում է հրաժարում շարիաթից\*\* և ոչ հնազանդում միստիկայի դատարկաբանություններին և ոչ էլ՝ փառա-

\* Միստիկա, ճանաչում, իմացություն, Աստծո ճանաչում:  
\*\* Իսլամական օրենք:

բանում է մղվածությունը չքավորության, մեռակեցության և ճգնվորության: Նա կատարյալ է համարում այն մարդուն, որը համապարփակ էություն է ու միտք: Նա կնոջ և երեխաների գոյությունը նույնպես չի ընդունում որպես ճանապարհի քող և բանախոսի պես ցանում է առաձախսության շնորհիվ և բանաստեղծական պատկերավոր նմանությամբ հաստատել ու ապացուցել Ղուրանի մտքերն ու մեկնաբանությունները իսլամական օրենքի օրինավորներին...», - գրում է գիտնական Չարին Զուրը:

«Մասնավիի ոչ մի պարագայում հնարավոր չէ տեսնել, որ Չալալ էդ-դինը փոքրագույն անտարբերություն է ցուցաբերել կրոնի հանդեպ և այն համարել սովորական մարդկանց մեռաշնորհը: Անշուշտ, մի շարք անձնական մեկնաբանություններ ու խեղաթյուրումներ ունի որոշ կրոնական մտքերի վերաբերյալ, որոնք անընդունելի են ոմանց համար», - գրում է բանասեր Մոհամմեդ Թաղի Ջաֆարին:

**Ե. Հեսամ էդ-դին և Շամս Թաբրիզի:**

Հատկանշական է, որ Մոլանան Շամսի դիվանը գրել է այն մեծ սիրուց ու նվիրվածությունից, որ տաժում էր Շամս Թաբրիզի նկատմամբ: Իսկ Մասնավիի գիրքը գրել և կազմել է Հեսամ էդ-դին Չալիբի սիրուց: Եվ, կարճ ասած, Մոլավիի մասնավի մեջ տասնյակ անգամներ հիշատակվել է Ջիա օլ հադ Հեսամ էդ -դին անունը. օրինակ, չորրորդ տետրի սկզբում կարդում ենք.

Ով Ջիա օլ-հադ, Հեսամ էդ-դինը դու ես,  
Քո լույսով միայն մշուշից անցավ մասնավին,  
Ով հուսավատ, քո վեհապանձ շնորհն է սա,  
Որ ձգում է գործն այս, թե ուր՝ Աստված գիտի,  
Կապել ես պարանոցը այս մասնավիի,  
Քաշում ես այն կողմ, ուր կամքն է քո:

Եվ չորրորդ դավթարի վերջնամասում կարդում ենք.

Գու՛րս հանիր. ո՛վ Ջիա օլ-հադ, Հեսամ էդ-դին  
Գլուխն ավանակի այս բանջարանոցից,  
Հեն անելը մեզանից, մարմինն ու հոգին քեզանից,  
Մխալ ասացի, թե այս քեզանից, թե այն քեզանից,  
Մասնավին դեմք էր, էությունը միայն դու ես,  
Թե՛ կողմը, թե՛ լույսը և հիմնահարցը դու ես:

Եվ չորրորդ դավթարում նույնպես /ընկուզենուն բարձրացած ծարավ մարդու հեքիաթում/ Հեսամ էդ-դինի անունը արտաբերելով՝ պարզաբանում է մասնավիի կազմելու նպատակը.

Միաժամանակ իմ նպատակը այս մասնավիից,  
Ով Ջիա օլ-հադ, Հեսամ էդ- դին՝ միմիայն դու ես,  
Մասնավին ճյուղավորված և սկզբունքով,  
Խոսքը դու ես, միտքը դու ես, թե ընդունես,  
Միտքս նրա բառերից գաղտնիքն է քո,  
Միտքս նրա շարադրանքից երզն է քո,  
Քո երզն ինձ համար՝ երզն է Աստծո,  
Երբ է եղել սիրահարը սիրեցյալից բաժանված:

Եվ վեցերորդ դավթարի սկզբում նրան հիշատակում է որպես «Մրտի կենսություն», «Հոգու հղկող» և «Առաջնորդող սուլթան»:

Այժմ այս հարցն է առաջանում, որ Մոլանայի հարաբերությունը այս երկուսի հետ ինչպիսի հարաբերություն է եղել:

Հակիրճ պատասխանն այս է:

Այս երկուսը, ըստ Մոլանայի, եղել են գոյության վեհ նպատակների մարմնացումը: Նրա նպատակը Հեսամ էդ-դին և Շամս էդ-դին անհատները չեն, այլ նրա նպատակը ճշմարտության ճանապարհի բոլոր ռահվիրաներն են, և այս երկուսը երկու ցայտուն մնուչներն են այդ ռահվիրաների: Այս երկու միասիկների ամբողջական հոգին Շամսի դիվանի կառուցողն է:

Չալալ էդ-դին Մոլանան նրանց ենթադրել է որպես ծաղիկ, իսկ իրեն՝ տխակ, որ ծաղիկ տեսնելով սկսում է երգել ու գեղգեղալ:

Հաֆեզն ասում է.

Սոխակը ասուն դարձավ միմիայն վարդի շնորհիվ,  
Թե չէ չէր լինի այսքան խոսք ու երգ փոքրիկ կտուցին:

Կարճ ասած՝ Մոլանան էրֆանի /աստվածաճանաչման/ վեհ միտքը գտնում էր այս երկուսի մեջ և ցանկանում էր՝ նրանց նկատի ունենալով, այս միտքը նաև այլոց էության մեջ կենդանացնել:

Ո՛վ իմ եղբայր, դու հոգին ես արարման,  
Մնացյալդ միս ու ոսկոր է միայն,  
Ո՛վ իմ եղբայր, ապա խորհիր դու մի պահ,  
Քո մեջ աշուն ու գարուն է պահ առ պահ:

Նա այս կերպ համընդհանուր կոչերով բոլոր մարդկանց է նկատի ունեցել և հրավիրում ու առաջնորդում է ճշմարիտ ճանապարհ:

«Ուշագրավ է նաև այն, որ Չալալ էդ- դին Մոլանան Այազի մասին /Մուլթան Մահմուդ Դազնավիի խելացի և ճարպիկ սիրեցյալը/ նույն հոգեկան տվայտանքն է զգում, ինչ որ Հեսամ էդ-դին Չալեբիի, և այս հուզումը հենց նույն այն հուզումն է, որ նկատում ենք նաև Շամս Թաբրիզի վերաբերյալ, և առավել վեհորեն այն արտահայտված է բարեպաշտների՝ Էմիր, Ալի մարգարեին ուղղված տողերում.

Միակ կշեռքը դու ինքդ ես եղել,  
Եվ նժարները դու ինքդ ես եղել,  
Ով դու սուրբ Ալի, դու աչք ու միտք ես,  
Պատմիր մեզ մի քիչ, ինչ որ տեսել ես,  
Բաց եղիր, ո՛վ դուռ, դուռ փնտրողներին,  
Որ քեզնով հասնեն արմատին խորին:

Եվ ուրեմն Չալալ էդ-դինի հոգեկան վիճակը չպետք է միայն փնտրել ու մեկնաբանել Շամս Թաբրիզի նկատմամբ տաժած սի-

րո մեջ: Նա հրաշալի ու վեհ մի հորիզոնից նայում է մարդու հարա-  
բերությանը Աստծո հետ, և նա, ով ի գորու է եղել ըմբռնել այդ հա-  
րաբերությունը և հակվել է դեպի Աստված, Ջալալ էդ-դինի համար  
դառնում է Ռաբօլնոն էնսանի\* /մարդկային Աստված/, գրում է  
գրականագետ Օսթադ Մոհամմեդ Թադի Ջաֆարին:

**Ձ. Ուշագրավ է ևս մի ճշմարտություն:**

Եթե նույնիսկ ենթադրենք, որ Մոլանան ճիշտ ընտրություն չի  
արել իսլամի մշակույթից և յուրօրինակ ձևով է այս ճանապարհը  
ընթացել, հնարավոր չէ սակայն անտեսել իմաստուն և վեհ այն  
մտքերը, որոնք գետեղվել են մասնավիի գրքում, եթե անգամ մերթ  
ընդմերթ ոչ ճիշտ խոսքեր են առկա: Եվ ինչպես կասեր մեծ գիտ-  
նական Շեյխ Բահային. «Ոմանց առաջնորդող և ոմանց մոլորեց-  
նող»:

Ի դեպ, այս խնդիրը արծարծվել է մասնավիում:

Ուրեմն բառանախշերից մասնավիի  
Գեմքը շփոթ է, և ուղեցույցը՝ մանավի,  
Եվ մեկն ասաց, թե այս Դուրանը սրտերում  
Ոմանց ուղղորդում է, իսկ ոմանց էլ՝ շեղում:

Ինչևէ, հիշենք այն խոսքը, որ ասել է Աամե Աղեբեյթը. «Իմաս-  
տությունը բարեպաշտի կորցրածն է, որտեղ այն գտնում՝ վերց-  
նում է, որքան էլ որ ասեն՝ այն հեթանոսական է կամ ոչ աստվա-  
ծային»: Այս մասին բարեպաշտների էմիրը՝ սուրբ Ալի մարգարեն,  
ասում է. «Ուր էլ որ կլինեք, իմաստությունը և գիտությունը ուսում-  
նառեք, քանզի իմաստությունը երբեմն անաստվածների կրծքում է  
և դադար չունի, քանի դեռ դուրս չի եկել այնտեղից, և իր ընկերնե-  
րի կողքին՝ բարեպաշտների կրծքում չի հանգրվանել»:

Եվ մի այլ տեղ ասում է. «Մրտերը մարմինների պես հոգնում ու  
տրտնում են, այդ պահին նրանց համար ընտրեք գեղեցիկ և հոգեգ-

\*Մարդկային հեթանոսական Աստված:

մայլ իմաստունություններ»:

Այստեղ պետք է նկատի ունենալ ևս մի հանգամանք, որ մաս-  
նավիում օգտագործված մեյ /գինի/, շարաբ /խմիչք/, մոթրեք /երա-  
ժիշտ, նվագածու, գուսան, սագանդար/, խոմա /խումար/ և այլն,  
նրանց արտաքին և ուղիղ իմաստը չէ, այլ նպատակը էրֆանի /միս-  
տիկական/ իմաստն է: Ինքը Մոլանան ասում է.

Ալլահ, Ալլահ, երբ արեֆը «գինի» ասաց,  
Արեֆի մոտ ե՞րբ է եղել մի իր շրջված,  
Ջի ըմբռնումը քո գինին էր սատանայի,  
Գինու ըմբռնումը ե՞րբ է եղել քեզ ողորմած:

Կարճ ասած, այս աշխարհում ոչ մի մարդ արարած, որքան էլ  
քարճրաբերձ իմաստության գագաթին հասնի, ի գորու չէ հասնել  
քացարձակին և գերծ մնալ սխալներից Մոլավին ինքն է ասում.

Ով կասի խոսքն է ճշմարիտ՝ հիմար է մի,  
Ով կասի խոսք անվավեր՝ վատթար է մի:

**Է. Մոլավիի անբարեհաճությունն ու անբարյացակամությունը:**

Թեև Մասնավի գրքի բարձրարժեք թեմաները արժանի են, որ  
Մոլանան դասվի իսլամի պատմության խոշոր գիտնականների  
շարքին, սակայն ընթերցողի մտքում շարունակ անպատասխան է  
մնում այն հարցը, թե ինչու Ջալալ էդ-դին Մոլանան, ունենալով  
այդքան հզոր գրիչ, բառերի ու մտքերի ընտրության այդքան մեծ  
տիրապետում և խնդիրների ու թեմաների պարզաբանման վարպե-  
տություն, ինչու՞ կախարդական իր խոսքը իսլամի պատմության լե-  
գենդներ կերտող հերոսների սխրագործություններին չի ուղղել և ո-  
չինչ չի ասել /բացառությամբ երկու-երեք տեղ, այն էլ թերի/:

Նա կարող էր Զարբալայի հերոս անձնագոհներից և Խարազն-  
շահի, և՛ Մուլթան Մահմուդի, և՛ Այազի ու Յագիդի, և՛ Էդհամ Էբրա-  
հիմի, և՛ Դադուդի և՛ նմանատիպերի փոխարեն խոսք բացել այն-  
պիսի մարդկանց մասին, ինչպիսիք են Աբուգարը, Մադդադը, Մա-

լեք Աշքարը, Հագրաթ Աբուլֆազլ Ալաբբասը և եթե ցանկանում էր խոսել անարատության ու բարոյականության վերաբերյալ, կարող էր այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Բորիբը և Հաբիբ Մազահերը, Սալմանն ու օմարը առասպելներ հյուսել, վեր խոյանալ և իր խոսքը զագաթների հասցնել: Իրականում նա այս առումով ոչ թե անբարեհաճություն, այլ անբարյացակամություն է ցուցաբերել: Նա պետք է իր արվեստի ու գրչի և հզոր խոսքի պատասխանատուն լիներ, քանզի աստվածային այս մեծ շնորհների փառաբանումը պետք է լավագույն ձևով կատարեր, ինչը որ չի կատարել:

**Ը. Մի քանի խոսք ներկա գրքի մասին:**

Տարիներ շարունակ հուզումնառատ հարաբերություն են ունեցել Մոլավիի մասնավորի հետ, նրա պատմությունների արտաքինն ու ներքինը յուրատեսակ ազդեցություն էին բողոնում իմ էության ու հոգու վրա, այդիսկ պատճառով վճռեցի, նրա իմաստուն պատմությունները ընտրել և սեղմ ձևով բանաստեղծությունից վերածել պարզ արձակի այն հույսով, որ բոլորի համար մատչելի, հաճելի և օգտավետ կլինեն: Եվ ուրեմն, ամենայն զգուշավորությամբ, իմ կարողությունների սահմանում, ձեռնարկեցի այս աշխատանքը:

Մասնավորի դիվանը համակցված, չընդհատվող, երկար պատմմանաշար է, և այս համակցվածությունը այն հանրահայտ խոսքն է հիշեցնում, որ «խոսքը խոսք է քաշում, /խոսքը խոսք է բերում/: Մոլանան իր «Մոլթանի ստրուկի նախանձողները» պատումի շարունակության մեջ ասում է.

Հեռու մնաց ձգձգվող խոսքերից ունայն,  
Պետք է կրկին վերադառնալ ու ավարտել այն:

Մոլանան այս պատմությունների միջոցով իր միտքի ճշգրիտ արվեստով նկարագրել է մարդկայնության վեհ իմաստը:

Այս պատմություններից որոշները գոյություն չունեն իսլամական տեքստերում, և դրանց հորինված լինելը անվիճելի է, ինչպես Հարութի և Մարութի պատմությունը, /որ ընդգրկված է երկրորդ և

երրորդ դավթարներում/ և սուրբ Ալիի և Էբն Մոլաջամի պատմու

թյունը, /որ զետեղված է մասնավորի առաջին հատորի վերջում/: Մինչև այնտեղ, ուր ասում է.

Դու անհոգ եղիր, ես եմ քո միակ բարեխոսը մեծ  
Հոգու տերն եմ ես, ոչ թե ստրուկը սնանկ մարմնի մեջ:

Ուշադիր զննելով կարելի է եզրակացնել, որ Մոլանան, պատմումները գրառելով, այնքան էլ հոգածություն չի ցուցաբերել պատմական իրողություններին և հեքիաթի ձևը բացառապես ծառայեցրել է մտքերի արտահայտման նպատակին: Եվ, ի վերջո, եթե այս պատմությունները գոյություն չունեն իսլամական տեքստերում, ապա նրանց ոգին և նմանատիպը գոյություն ունի իսլամական տեքստերում:

Ինչևէ, այս պատմությունների մեծ մասի արտաքին և ներքին էությունը այնպես ինձ հուզեց, որ ձեզ, սիրելի ընթերցող, ավստասցի նրանից գրկել: Մյուս կողմից՝ նկատեցի, որ որոշ պատմություններ չափազանց երկարաշունչ են և ընդգրկում են նաև այլ պատմություններ, և հենց այս ծավալի երկարությունը, և իրար մեջ և կից պատմությունները, անհամբեր ընթերցողի համար հոգնեցուցիչ ու ձանձրալի կարող են դիտվել: Մոլանայի այս երկտողը հիշեցի, որ ըստ մեր մարգարեի ասվել է.

Թե դու չես կարող ծովը դատարկել,  
Ծարավիդ չափով պետք է ճաշակել:

Հենց այս հիմունքով ձեռնարկվեց մասնավորի պատումների սեղմ ընտրանին:

Մոլավիի մասնավորում այս պատումների և առակների թիվը շատ է ոմանք այն 200 են համարել, որ ճիշտ չէ: Պատումների անվանական բովանդակությունից ելնելով՝ /գլխավոր և երկրորդա-

կան/ շուրջ 647 փոքր ու մեծ պատումներ են ընդգրկված մասնավորի գրքում. նկատի ունենալով, որ սովորաբար երկարաշունչ մի պատմության մեջ ընդգրկված են մի քանի պատմություններ ու առակներ:

Ինչևէ, ներկա գիրքը ընդգրկում է Մոլավիի մասնավոր գրքի 230 պատմություն՝ ընտրված և սեղմված առակներից ու պատումներից, որոնք կազմվել են մասնավորի վեց դավթարի հերթականությամբ և վերածվել պարզ և սահուն պարսկերեն արձակի, և բանաստեղծական հմայքն ու քաղցրությունը պահպանելու նպատակով՝ յուրաքանչյուր պատմությունից մեկ կամ մի քանի բանաստեղծական ընդգրկված տողեր ենք ներառել:

Անշուշտ, պետք է մաս նշել, որ մենք այս գրքում աշխատել ենք զերծ մնալ սուֆիստական ու միստիկական թանձր վիճահարույց տեքստերից, ինչպես մաս որոշ հավատալիքի խնդիրներից, որոնք Մոլանայի անձնական կարծիքն է, ինչպես մաս որոշ պարսավելի պատմություններից, որոնք հեռու են պարկեշտությունից, քանզի այս գրքի կառույցը դաստիարակչական, դյուրին տեքստերն են, որոնց ընկալումը համընդհանուրի համար հեշտ և օգտակար կլինի այն հույսով, որ այս գիրքը կդառնա ուսուցողական և ազդեցիկ:

## Առաջին տեսք

### 1. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԳԵՂԵՑԻԿ ՍՏՐԿՈՒՀԻՆ

Հին ժամանակներում մի թագավոր որս անելու նպատակով դաշտ դուրս եկավ: Որսատեղում աչքն ընկավ մի գեղեցիկ ստրկուհու, և սիրտը ավետափ լցվեց նրա սիրով:

Թագավորը որսի և որս անելու նպատակով էր դուրս եկել, սակայն ստրկուհին որսաց նրա սիրտն ու հոգին:

Թագավորը, մեծ հարստության ու հզորության տեր լինելով, շատ դրամ ու ոսկի այս ճանապարհին ծախսեց, գնեց ստրկուհուն և իր պալատը բերեց:

Շատ չանցած, ստրկուհին հիվանդացավ, գունատվեց ու հալումաշ եղավ, այնպես որ թագավորը նրա հոգսից չափազանց ընկճվեց ու տրտմեց: Նրան ապաքինելու համար թագավորը իր ճանաչած մի քանի հմուտ բժիշկների պահանջեց, սակայն բոլոր բուժումները ապարդյուն եղան:

Ինչ արեցին հեքիմները դեղ ու դարմանից՝  
Ապարդյուն էր, ցավն հավելեց և կարիքը չմեղմեց:  
Ստրկուհին մազի նման ցավից բարակեց,  
Առու դարձավ աչքը շահի արյուն- արցունքից:

Այո՛, անհոգ մի՛ եղիր, երբ հազեցած ես բարիքներով, իմացի՛ր՝  
մի օր այդ բարիքը ձեռքիցդ կգնա, և ուրախության փոխարեն  
տրտմությունը կպատի քեզ:

Քացախաջուրը լեղին հավելեց,  
Իսկ նուշի յուղը այն իսպառ մարեց:

Թագավորը հուսահատվեց բժիշկների բուժումներից: Սարսա-

փահար շտապեց դեպի աղոթարանի խորանը և սկսեց իր աղոթ-  
քախոսքն ու աղերսը Աստծուն: Նա շատ արտասովեց և Աստծուց  
հայցեց ստրկուհու ապաքինումը:

Իր ողջ էությունը ցավից հառաչեց,  
Եվ աղոթք արեց ու ներում հայցեց:

Եվ այդ վիճակում քնով տարվեց ու քնեց: Երագուն տեսավ մի  
ծերունու, ծերունին նրան ավետեց, որ աղոթքդ ընդունվել է, և շու-  
տով մի հեքիմ և ուշիմ բժիշկ կգա և կբուժի ստրկուհուն:

Թագավորը քնից արթնանալով անչափ ուրախացավ և սպասեց  
հեքիմի ու բժշկի ժամանմանը: Շատ չանցած, թագավորը հեռվից  
նկատեց հեքիմին: Նա ինքը դռնապանի փոխարեն գնաց նրան դի-  
մավորելու:

Աստծուց կստանամ հաջողությունը իմ մեծ շնորհի,  
Ապաշնորհը միշտ գուրկ կմնա Աստծո շնորհից:

Այո, թագավորը հասկացավ, որ անկեղծորեն Աստծուն դիմելը  
արդյունավետ ու գործուն է: Եվ փառաբանեց ու երախտագետ ե-  
ղավ Բարձրյալին:

Թագավորը բժշկին մանրամասն բացատրեց ստրկուհու հի-  
վանդության, ինչպես նաև նրան ապաքինելու բժիշկների անհա-  
ջող փորձերի մասին և նրան ուղեկցեց ստրկուհու մոտ:

Բժիշկը ստուգումներից հետո հասկացավ, որ նրա հիվանդու-  
թյունը ֆիզիկական և մարմնական չէ, այլ՝ հոգեկան, և նրա ցավը  
սիրո ցավն է:

Բաժանված է պատճառներից պատճառը սիրահարի,  
Աստղաչափը սիրո գաղտնիքներից է միակ Աստծո,  
Միտքը մեկնելուց ցեխի մեջ թաղվեց ավանակի պես,  
Միրո և սիրահարվածության մեկնաբանումը հենց սերն է ասել.  
Արևը եկավ, պատճառն արևի...

Թե հետամուտ ես դու այս պատճառին՝  
Երես մի թեքիր վառ արեգակից:

Հեքիմ-բժիշկը հարցեր տվեց ստրկուհուն, և հարց ու պատասխանի ընթացքում ստրկուհու զարկերակը հեքիմի ձեռքի տակ էր: Նա ստրկուհուն հարցնում էր նրա ծննդավայրից, հարազատներից ու ընկերներից, և ստրկուհին պատասխանում էր բոլոր այս հարցերին մինչև այն պահը, երբ հեքիմը խոսք բացեց Մամար-դանդ քաղաքի մասին և հանկարծ զգաց, որ ստրկուհու զարկերակը կորցրեց բնականոն ռիթմը, և նա կարմրեց ու գունատվեց:

Բժիշկը հարցրեց Մամարդանդի փողոցներից, և երբ խոսք եղավ Ղաթֆեր փողոցից ու նրա բնակիչներից՝ ստրկուհու զարկերակի զարկերը արագացան, և այսպիսով բժիշկը հասկացավ, որ նա տառապում էն Ղաթֆեր քաղում բնակվող սամարդանդցի ոսկերչի նկատմամբ տաժած հոգեմաշ սիրով: Նա գտավ ստրկուհու հիվանդությունը և թագավորին պատմեց եղելությունը և այդ կերպ բուժեց նրան, իսկ թե ինչպես, կկարդաք հաջորդ պատումում:

## ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՍԻՐՈ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Բժիշկ-հեքիմը ստրկուհու հիվանդության ու տառապանքի զաղտնիքը պատմեց թագավորին: Թագավորը ելքը հարցրեց: Բժիշկն ասաց. «Դու քո ունեցած ոսկին ու արծաթը և հարստությունը դիր այս ճանապարհին և սամարդանդցի ոսկերչին բեր այստեղ, որպեսզի գործը գլուխ բերեմ»:

Թագավորը սամարդանդցի ոսկերչին բերելու համար շատ գումար ծախսեց, և ոսկերչին էլ, խաբվելով թագավորական արդու-զարդով, եկավ պալատ և թագավորի անձնական ոսկերիչը դարձավ և արքունիքում սկսեց մեծ հարգանք վայելել: Այդ ժամանակ բժիշկը թագավորին ասաց. «Այս ստրկուհուն նվիրիր ոսկերչին և նրա կինը դարձրու»:

Թագավորն արեց այդ բանը: Ստրկուհին իր երագած սիրո գիրկը վերադարձավ և վեց ամիս անց վերագտավ իր առողջությունը: Այնուհետև բժիշկը, որ այդ միջոցին խորամանկ ու չարաբնույթ էր դարձել, թունավոր օշարակ պատրաստեց ու հրամցրեց ոսկերչին: Ոսկերիչը թունավորվեց, տկարացավ ու գունատվեց, այնպես որ սիրտը կտրեց ստրկուհու սիրուց, և ստրկուհին էլ կամաց-կամաց նրա նկատմամբ անտարբեր դարձավ:

Մեր չեն բնավ, այն սերերը, որ գույնին են հետամուտ,  
Եվ վախճանը անարգանքն է խայտառակ,  
Միրամարգի թշնամին իր փետուրն էր անկասկած,  
Եվ շատ հաճախ փառքն սպանեց արքային,  
Ասաց՝ ես սլացող այն եղջերուն եմ, որի պորտից  
Մաքուր արյունս որսորդը հեղեց,  
Աշխարհն այս սար է, և գործը մեր՝ ձայն,

Մեր կողմն են գալիս արծազանքները ձայնի,  
Թեև պատը երկար ստվեր է գցում,  
Նրա մոտ է դառնում այդ ստվերը կրկին :

Այսպիսով, ստրկուհին իր մակերեսային սիրուց, որ անպատիվ ու գույնի սեր էր՝ բաժանվեց: Նա վերագտավ իր առողջությունը: Թագավորն էլ խաղաղվեց ստրկուհու տառապանքից, և ոսկերիչն էլ պատժվեց՝ տարվելով աշխարհի արդուզարդերով:

### ԹՈՒԹԱԿԻ ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի նպարավաճառ իր խանութում քաղցրահունչ ձայնով գեղեցիկ թութակ ուներ: Թութակը հսկում էր խանութը և իր սրտառուչ, քաղցր ձայնով գրավում էր հաճախորդներին, և նպարավաճառի առևտուրը թութակի շնորհիվ բարգավաճում էր:

Մի օր, երբ նպարավաճառը տուն էր գնացել, չգիտես որտեղից, մկանը հետապնդող մի կատու հայտնվեց խանութում: Թութակը սարսափահար սկսեց այս ու այն կողմ նետվել և...անգուշորեն դիպավ նուշի յուղով լի ապակյա տարաներին: Տարաները գետնին ընկան, փշրվեցին, և յուղը տարածվեց հատակին:

Երբ նպարավաճառը խանութ վերադարձավ և տեսավ կատարվածը, զայրության լեռնեց թութակին և ձեռնափայտով այնքան հարվածեց խեղճի գլխին, որ գլխի բմբուլները թափվեցին ու ճաղատացավ:

Դրանից հետո թութակը լռեց, այլևս չխոսեց և առավոտից իրիկուն տխուր տրտում խորասուզվեց իր ցավի մեջ:

Նպարավաճառը այնուհետև որքան թութակին շոյեց, որպեսզի խոսի և նախկինի պես հաճախորդներին դեպի խանութ գրավի, սակայն թութակը կտուցը չբացեց և շարունակեց լուռումուճ մնալ:

Նպարավաճառը շատ ապշեց ու տխրեց, և նույնիսկ, որպեսզի

թութակը խոսի, սկսեց ողորմություն տալ կարիքավորներին և Աստուծոց օգնություն հայցել, սակայն ապարդյուն:

Տալիս էր նա ճոխ բազում ընծաներ ամեն դերվիշի,  
Որ կարողանա վերահաստատել ձայնը իր հավքի,  
Միացել էր նա հազար հոգսերի ու ցավերի հետ,  
Եվ սպասում էր, թե այդ ե՞րբ պիտի իր հավքը երգի:

Անցան օրեր, և դեռևս խանութի մթնոլորտը լի էր հոգս ու տխրություն, մինչև այն օրը, երբ մի ջուլհակագործ, որ ի դեպ ճաղատ էր, խանութ մտավ: Հենց որ թութակի աչքը ճաղատ մարդուն ընկավ, հանկարծ կտուցը բացեց ու ձայնեց. «Հե՛յ, քաչալ, մի՞թե դու էլ ինձ մնան յուղ ես թափել և տերդ գլխիդ է խփել և դու ճաղատացել ես»:

Թութակը հանկարծ խոսեց բարձրաձայն,  
Չայնեց դերվիշին, որ ո՛վ դու նվաստ,  
Որ ո՛վ դու ճաղատ, միթե՞ դու էլ ես մեծիդ հետ վիճել,  
Եվ միթե դու էլ յուղն ես թափել մեծ տարաներից:

Մարդիկ թութակի մնան համեմատությունից ծիծաղեցին:

Համեմատությունից ներկաները ծիծաղեցին,  
Քանզի դերվիշին նա ենթադրեց նույն իր վիճակին:  
Թութակը, լինելով խոտոլ թռչուն և չունենալով միտք ու բանականություն, ներքինը համեմատելով արտաքինի հետ, մնան բարեհունչ, բայց ոչ հիմնավոր համեմատություն արեց.

Ազնիվների գործը մի չափիր բո արշինով,  
Որքան էլ որ նույնատառ լինի «շիրի\*» հետ «շիրը»:

Եվ ավելացնում.

Մեկը կաթ է Բադիեում\*\*  
Մյուսն առյուծ՝ Բադիեում,  
Մեկը շիր է, որ մարդն է խմում,  
Մյուսը շիր է, որ մարդ է ուտում:

Այսպիսով, Մոլավին շեշտում է, որ սխալ է արտաքինի համեմատությունը ներքինի հետ: Օրինակ, իշամեղուն և սովորական մեղուն և արտաքնապես նման են իրար և նույն ջրից ու բույսից են օգտվում, սակայն առաջինը թույն է արտադրում, իսկ երկրորդը՝ մեղր:

Եվ կամ սովորական այծյամն ու մշկայծյամը, արտաքնապես նման են և երկուսն էլ խմում են գետի ջուրը, սակայն մեկի արտադրանքը՝ գոմաղբ, իսկ մյուսինը՝ ընտիր և բուրավետ մուշկն է: Եվ եղեգնուտում երկու տեսակ եղեգ գոյություն ունի, երկուսն էլ օգտվում են նույն օդ ու ջրից, սակայն մեկը սնամեջ, իսկ մյուսը՝ շաքարեղեգը, լի է շաքարով:

Հարյուր հազար նմանատիպ նմանություններ ես տեսա  
Եվ տարբերությունները՝ երկնքից գետին, սար ու ձոր տեսա,  
Մեկը փռչի է ուտում և աղտոտություն արտազատում,  
Մյուսը փռչի է ուտում և Աստծո լույս արտազատում:

Մոլավիի ուսուցանող այս պատմության դասերից մեկն այն է, որ պետք է խուսափել անպետք և անարժեք ընկերոջ հետ ընկերակցելուց, և թող նրա գեղեցիկ տեսքը ձեզ չմոլորեցնի և ենթադրել չտա, որ նրա ներքինը նույնպես գեղեցիկ է: Ընկերոջ ընտրության ժամանակ պետք է աչալուրջ լինել:

Քանզի իմացի՛ր, շատ սատանաներ դեմքով են մարդկանց  
Ուրեմն պետք չէ ամեն մի ձեռքի ձեռք մեկնել սրտանց:

.....  
\*Առյուծ, կաթ, ծորակ:  
\*\* Աման, անապատ:

## ԼՈՒՉԻ ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ԿԱՍԿԱԾԱՄԻՏԸ

Հին ժամանակներում դաժան մի թագավոր է լինում: Նա դավանում էր հրեական ուսմունքին և իր մոլեռանդ համակրոնականների պատճառով սպանում էր քրիստոնյաներին, թեև հրեաների մարգարեն՝ Մովսեսը, և քրիստոնյաների մարգարեն՝ Հիսուսը, երկուսն էլ մի ուղղությամբ էին առաջ ընթանում, սակայն այդ թագավորը չափազանց կասկածամիտ էր և ենթադրում էր, որ Հիսուսը և Մովսեսը առանձնացած են միմյանցից:

Այս թագավորի օրինակը նման է կասկածամիտ Լուչի աշակերտին, որին վարպետը ասաց.

-Գնա այն սրվակը բեր:

Աշակերտը, կասկածամիտ լինելով, հարցնում է.

-Ո՞ր մի սրվակը բերեմ:

Վարպետը որքան նրան ասում է, թե մի սրվակից ավելին այնտեղ չկա, աշակերտը հակաճառելով ասում է.

-Ինձ մի՛ հեզնիր, քանզի այնտեղ երկու սրվակ է:

Ի վերջո վարպետը նրան ասում է.

-Լավ, գնա՛ մի սրվակը ջարդիր, իսկ մյուսը բեր:

Աշակերտը գնում մի սրվակը ջարդում է և այնուհետև նկատում, որ երկրորդ սրվակ գոյություն չունի:

Ո՛վ մարդ, ուշիմ եղիր, քանզի գայրույթն ու կիրքը քեզ դարձնում են կասկածամիտ և զանազանելու կարողությունը խլում են քեզանից: Եվ իրոք, եթե դատավորը կաշառակեր լինի, ինչպե՞ս կարող է մեղավորին անմեղից զանազանել:

Միտումը շահի արվեստն է ծածկում,  
Հարյուր քող սրտից դեպ աչքն է մղվում,  
Կիրք ու գայրույթ մարդուն շլացնում  
Եվ կայունությունից հոգին են փոխում:

### ԽԱՌՆԱԿԻՉ ԵՎ ԽՈՐԱՄԱՆԿ ՎԵՋԻՐԸ

Հրեաների թագավորը, որ վճռել էր սպանողի ենթարկել քրիստոնյաներին, մի շատ խորամանկ վեզիր ուներ: Նա թագավորին առաջարկեց և ասաց. «Քրիստոնյաները թաքցնում են իրենց կրոնը և հետևաբար քո թրից ողջ են պրծնում: Ես քրիստոնյա կձևանամ և նրանց մեջ կգնամ և կամաց-կամաց նրանց առաջնորդը կդառնամ և կհայտնաբերեմ նրանց, այնուհետև տարածայնություն կգցեմ նրանց մեջ և միմյանց իրար դեմ կհանեմ և, այսպիսով, քո թուրը նրանց նկատմամբ առավել հատու կդարձնեմ և նրանց ներսից կսկսենք քայքայել, և այն ժամանակ, երբ հարձակվես նրանց վրա, անշուշտ, արագորեն ջարդոխություն կանես, միայն այն պայմանով, որ իմ մատները, ականջը և քիթը կտրատես և ինձ կախադան հանես, որպեսզի բոլոր քրիստոնյաները ենթադրեն, որ ես քրիստոնյա լինելու մեղքով եմ տանջանքի ենթարկվում, այնուհետ ինձ արքունիք քո քաղաքից»:

Թագավորը կատարեց վեզիրի առաջարկը, և վեզիրը նման խաբեությանը գնաց քրիստոնյաների մեջ, և քրիստոնյաները նրան, որպես տոկուն մոջահեդ\*, որը բազում վնասներ ու գրկանքներ է կրել հանուն քրիստոնեական կրոնի, ապաստան տվին, և նրա շուրջը համախմբվեցին և ամեն կողմից դեպի նա եկան և նա վեց տարի այդ ձևով մնաց նրանց մեջ:

Նա ձեռք բերեց հսկայական դիրք և կամաց-կամաց սկսեց օգտվել իր ազդեցությունից և պառակտման սերմեր ցանել սրտերի մեջ: Նա քրիստոնյաներին խմբերի բաժանեց և ամեն խմբի վրա մի էմիր նշանակեց: Նա ծածուկ ամեն էմիրի խոստացավ իր ժառանգորդը դարձնել, իսկ նրանք իրենց համախոհներով միմյանց դեմ բանակներ կանգնեցրին:

Հեղեղի պես արյուն հեղվեց աջից ու ձախից,  
Լեռներ ու սարեր վեր խոյացան այս հող ու քարից:

Այո, սա է տարածայնության ու պառակտման արդյունքը, որ բշնամին օգտագործեց և քրիստոնյաներին ջարդուփշուր արեց:

Ընդարձակ էինք և մենք բոլորս միատարր էինք,  
Անոռք, անգլուխ, և նա էր միակ վեհ գլուխը մեր,  
Եվ ինչպես պայծառ մի մեծ արեգակ, մի Գոհար էինք,  
Եվ պարզ ջրի պես մաքուր, անարատ, անհանգույց էինք,  
Հենց ի հայտ եկավ ու լույս տարածեց, լույսն անաղարտ  
Եղավ հատ ու կենտ, ինչպես ստվերը ատամնապարսպի,  
Ավերեք իսպառ ատամնապարիսպները մանջանիղով\*\*,  
Որ վերանա տարբերությունն այս բոլոր մարդկանց:

Եվ տարածայնության անիծյալ արդյունքների մասին ասում է.

Այդ խառնակության սերմերը բոլոր նա էր սերմանել,  
Նրանց գլխներին չարանենգ աղետ, փորձանք էր դարձել,  
Անզանցանք մարմնում անմիտ այս հոգին  
Նման է ասես իր խոր պատյանում փայտե սուսերին,  
Քանի դեռ նա խոր իր պատյանում է՝ արժեքավոր է,  
Հենց որ դուրս եկավ՝ այն կրակին է միայն հարկավոր:

\*Սարտիկ, հանուն կրոնի և հավատի նահատակվող:

\*\* Ծանր գունդ և կրակ նետող սարք, որ օգտագործում էին պաշարված բշնամու սլարիսպները ավերելու համար:

### ՆԱՖՍԻ\* ԿՈՒՌՔԸ

Հին ժամանակներում մի դաժան թագավոր է լինում, որ իրեն համարում էր հրեական դավանանքի հետևորդ: Նա իր կրոնին օգտակար լինելու անվան տակ ոչ հրեաներին սպանում էր ամենաառավոր տանջանքներով:

Նրա հրամանով հսկայական խարույկ էին արել և կողքին մի մեծ կուռք տեղադրելով, հայտարարել էին, թե նա, ով երկրպագի այդ կուռքի, ազատ կարձակվի, այլապես՝ կվառվի խարույկի մեջ:

Այո, ցանկասիրությունը նրա էությունը հռչակող ու վայրագ էր դարձրել:

Քանզի պատիժը այսպիսի կուռքի չտվեց հագուրդ նրա կրքերին, Ցանկասիրության այդ կուռքը ազահ մի այլ կուռք ծնեց առավել վայրագ, Կուռքերի մայրը ձեր մութ կրքերի կուռքն է անհագ, Քանզի ո՛վ անզետ, մեկը կուռք-օձ է, իսկ այն մյուսը մի վիշապ-կուռք է:

.....

\* Հոգի, ներքին աշխարհ, ցանկասիրություն, կիրք, անձ, շունչ:

### ԵՐԿՆԱՅԻՆ ՉԱՅՆ

Անխիղճ այս թագավորն այն աստիճան դաժանորեն բոբբոքվեց, որ երբ նրան ներկայացրին իր մանկան հետ, մի կնոջ նա հրամայեց, որ կուռքին երկրպագի, և երբ կինը, լինելով պարկեշտ և հավատացյալ, մերժեց կատարել հրամանը, թագավորի կարգադրությամբ նրա մանկանը կրակի մեջ նետեցին ու այրեցին: Կինը տեսնելով այդ տեսարանը՝ սարսափեց ու սիրտը դողաց, այնպես, որ ուզեց ձևականորեն երկրպագել կուռքին: Հանկարծ մանկան երկնային ու աստվածային ձայնը լսեց իր էության միջից. «Ես չեմ մահացել, քաղցր ու կենսուրախ կյանքը այստեղ է»:

Ձի բախտն է եկել, մեջը մտի՛ր մայր,  
Մի՛ թող գանձը այս, մեջը մտի՛ր, մայր,  
Տես դու նրա մեջ ուժը շանորդու,  
Որ գնահատես ուժն ու շնորհը միակ Աստծո,  
Թիթեռի նման բոլորդ եկեք նրա մեջ արագ՝  
Այս կրակի մեջ, որ ունի հարյուր սիրուն գարուններ,  
Բոլորդ եկեք, ո՛վ մուսուլմաններ,  
Բացի անարատ սիրուց կրոնի՝ ողջը տանջանք է:

Երկնային այս ձայնը այնպիսի հուզում և ուրախություն առաջացրեց բարեպաշտ ներկաների մեջ, որ խուճբ առ խուճբ դեպի կրակն էին գալիս: Նրանք, որպեսզի կուռքին չերկրպագեն, իրենց կրակն էին նետում:

Այն հրեան եղավ լրիվ խայտառակ ու երեսասև,  
Ու ամոթահար գղջաց արարքից իր արատավոր,  
Ձի կրակի մեջ մարդիկ առավել սիրահար եղան  
Եվ իրենց անձը զոհելու համար առավել արդար:

Եվ ինչու՞ չզոջա և ամոթահար չլինի, երբ հասկացավ, որ չի կարող հավերժական գոյի սիրահարների հետ պայքարել:

### ԿԱՐԵԿՑԱՆՔ ԶՂՉԱՅՈՂ ՀԱՆՑԱՎՈՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ

Իսլամի մարգարեի ժամանակ ինչ-որ մեկը ծանակում էր այդ սուրբ մեծությանը և անխոհեմություն էր ցուցաբերում այդ բարեպաշտի սրբազան տիրույթների նկատմամբ: Հենց այդ արարքը պատճառ եղավ, որ ծովի նրա բերանը:

Նա շատ ամոթահար եղավ և, խիստ զոջալով, շտապեց մարգարեի մոտ և լացակումած ներում հայցեց:

Մարգարեն, որի ուղենիշը մեծահոգությունն ու ներումն էր, դարձյալ ներեց նրան: Մարդը, որ արդեն վերագտել էր իր առողջությունը, անչափ ուրախացավ և լացը ծիծաղի վերածվեց:

Լացելուց հետո, ծիծաղ է վերջում,  
Հեռատես մարդը շնորհաշատ է,  
Ուր ջուր կա հոսող՝ կա կանաչություն,  
Ուր հոսուն արցունք՝ այնտեղ առկա է և ողորմություն,  
Կարեկեցեց նրան սեյեդը բարի և նրան ներեց,  
Ձի շատ համարձակ գոջաց անհրավ այդ դեղնադեմքը,  
Թե գութ ես հայցում. գթա անվարան արցունք թափողին,  
Թե գութ ես հայցում. գթա անվարան թույլ ու տկարին:

**ԱՊԱՀՈՎ ՇՐՋԱՆԱԿԸ**

Մուրբ Հուդը Մարգարեներից էր: Նա երկար ժամանակ իր ցեղակիցներին հրավիրում էր դեպի Աստված, սակայն այդ ցեղը չհնազանդվեց Հուդի հրամաններին և ի վերջո արժանացավ աստվածային չարչարանքներին:

Աստված յոթ օր ու գիշեր անսանձ և հուժկու փոթորիկը նրանց վրա տիրապետող դարձրեց:

Մուրբ Հուդը այն մարդկանց շուրջը, ովքեր հավատք էին ընծայել, շրջանակ գծեց և նրանց ասաց. «Ութ օր մնացեք այս շրջանակի մեջ և շրջանակից դուրս դիտեք ոճրագործների ջարդովիշուր անդամները»:

Սանձարձակ փոթորիկը փոքրագույն վնաս անգամ չհասցրեց նրանց, ովքեր շրջանակի մեջ էին, այլ հոգեզմայլ զեփյուռ էր նրանց վրա տարածվում, սակայն անհավատների դիակները մերթ քարին էր դիպչում, և մերթ հուժկու փոթորիկը նրանց մարմինը այնպես էր իրար զարկում, որ ոսկորները խաշխաշի սերմերի պես մանրափշուր գետնին էին թափվում: /Այս պատումի մի մասը

գրառված է վեցերորդ դավթարում/:

Օդ բարձրացրիր, զարկեցիր քարին,  
Մինչև զատեցիր միսը ոսկորից,  
Իրար զարկեցիր խմբեր օդի մեջ,  
Եվ խաշխաշի պես ոսկոր թափեցիր:

Այնպես որ, երբ Շեյբան Ռ-աին\* ցանկանում էր ուրբաթօրյա աղոթքին մասնակցելու համար անապատից քաղաք գնալ, իր հոտի շուրջը շրջանակ էր գծում: Շրջանակը այնպիսին էր, որ ոչխարները նրանից դուրս գալ չէին կարող, իսկ գայլերը այնտեղ մտնելու ուժ չէին ունենում:

Այն Շեյբանի պես, որ գայլից դաժան փրկելու համար, Ուրբաթ օրերին շրջան էր գծում իր հոտի շուրջը, Որ նրանից դուրս իր ոչխարները դուս չէին գալիս Եվ գայլն ու գողը ի գորու չէին վնաս հասցնել:

Այո, իմաստուն այդ հովիվը թեև մարգարեական դիրք չունեիր, սակայն ազնվության և բարոյականության ազդեցությամբ ունեցավ Հուդի հրաշագործության պես շնորհ:

Գայլի տենչը /ոչխարին հոշոտելու համար/ և ոչխարի տենչը /դաշտում արածելու համար/ մնան է այն անսանձ քամուն, որ իջավ Հուդի ցեղի վրա, իսկ շրջանագիծը բարեպաշտ մարդկանց ստուգման սահմանն է՝ /ներքին ցանկասիրության ընդվզումից/:

Հենց այնպես, ինչպես Հուդի փոթորիկը հոգեզմայլ զեփյուռ էր հավատացյալների համար, այդպես էլ մահաբեր քամին ծաղկանոցի սյուրքի պես էր իմաստուն բարեպաշտների համար:

Քամին տենչն է անհազ գայլերի և ոչխարների,  
Եվ շրջանակը՝ շրջապարիսպ է աստվածապաշտին,  
Ինչպես մահաբեր քամին է դառնում իմաստուններին  
Մի հոգեզմայլ մեղմանուշ զեփյուռ ծաղկանոցների:

\* Հովիվ, մաս ցեղի առաջնորդ:

### ՓԱԽՈՒՍՏ ՄԱՀՎԱՆ ՃԻՐԱՆՆԵՐԻՑ

Սուրբ Սողոմոնի տիրապետության ժամանակ միամիտ մի մարդ, որ ահ ու սարսափով էր համակվել և վախից գունատվել ու շուրթերը կապտել էին, տազնապահար Սողոմոնի օրևանը եկավ և լացակումած ասաց. «Ո՛վ Սողոմոն, ինձ ապաստան տուր»:

Սողոմոնը, որը ընչազուրկների և թշվառների ապաստարանն էր, նրան առանձնահատուկ ուշադրություն դարձրեց/, հետաքրքրվեց և հարցրեց, թե ի՞նչ է պատահել և ի՞նչ է ցանկանում: Նա պատասխանեց. «Այսօր Էզրայելը\* զայրույթով նայեց ինձ, այդ հայացքից սարսափեցի և այժմ ձեզ եմ ապաստանում: Քեզանից ցանկանում եմ, որ հրամայես քամուն, որ ինձ այստեղից /Պաղեստինից/ Հնդկաստան տանի, որպեսզի ազատվեմ հոգեառի ճանկից»: Սողոմոնը ուշադրությանն արժանացրեց նրա ցանկությունը:

Քամուն պատվիրեց, որ նրան շտապ  
Տանի Հնդկաստան ջրի վրայով:

Մյուս օրը, մարդկանց հետ հանդիպման ժամանակ, Սողոմոնը տեսավ մահվան հրեշտակին և նրան հարցրեց. «Ինչու՞ ես այդ թշվառին զայրույթով նայել, որ տազնապահար տարագիր ու անտուն դարձավ»:

Էզրայիլը պատասխանեց, որ Աստված հրամայել էր, որ այդ մարդու հոգին Հնդկաստանում առգրավեմ, սակայն երեկ ես նրան այստեղ տեսա և ապշեցի՝ մտածելով, որ նա, եթե անգամ հարյուր թև էլ ունենա՝ չի կարող իրեն Հնդկաստան հասցնել:

Ես, ըստ Բարձրյալի հրամանի, նրա հոգու առգրավման համար գնացի Հնդկաստան, նրան գտա այնտեղ ու հոգին առա:

Ձի հրամանով իմ միակ Տիրոջ Հնդկաստան հասա,  
Տեսա ես նրան այնտեղ մոլորված ու հոգին առա:

Ուրեմն հնարավոր չէ փախչել մահից և եթե այդպես է, պետք է անհանգստությունները վերացնելու համար ամենից առաջ Աստծուն ապաստանել ու ապավինել:

Դու այս աշխարհի բոլոր գործերը այսպես իմացի՛ր՝  
Միշտ համենատի՛ր, լավ նկատի՛ր ու աչքերդ բացի՛ր,  
Մենք անկարող ենք մեզանից փախչել,  
Ումից վեր թռչենք, մեր Տիրոջից վեր չենք կարող թռչել:

.....  
\* Մահվան հրեշտակ, հոգեառ:

### ՃԱԿԱՏԱԳԻՐ

Մի օր սուրբ Սողոմոնի բանակը, որի մեջ էին նաև թռչունները, հանդիպում ունեցան իր հետ և շքեղ տոնախմբություն կազմակերպեցին: Նրանք բոլորը ամենայն քաղաքավարությամբ մի մարդու պես միասիրտ ու միահոգի նրան ծառայելու պատրասակամություն հայտնեցին: Յուրաքանչյուր թռչուն իր արվեստն ու գիտելիքը բացատրեց Սողոմոնին, մինչև հերթը հոպոպին հասավ: Հոպոպը, դիմելով Սողոմոնին, ասաց.

-Ես մի արվեստ ունեմ, որը թեև չնչին է, ցանկանում եմ ձեզ բացատրել, քանզի մեծախոսությունը մեծերի ներկայությամբ ձանձրալի է:

Սողոմոնը թույլ տվեց, որ նա խոսի: Հոպոպը ասաց.

-Երբ ես երկնքի բարձրումքում եմ, իմ սրատես աչքով տեսնում եմ ջուրը հողի ընդերքում, գիտեմ որ մասում է և ինչ գույն ունի, արդյոք հորդում է հողի կրծքից, թե՞ ժայռի, այդիսկ պատճառով ճիշտ կլինի, որ քո բանակում ինձ որևէ պաշտոն հատկացնես, որպեսզի

անապատներում ճամփորդելիս, երբ ջրի խնդիր կունենաք, ձեզ ցույց տամ ջրի կենտրոնը:

Սողոմոնը ընդունեց նրա առաջարկը և պահանջեց նրանից, որ անջուր անապատներում իր բանակի մտերիմ ընկերն ու գործավարը լինի:

Որ դու ջուրը գտնես բանակի համար, ուր էլ որ լինենք,  
Ճամփորդության մեջ ջրկիրը լինես իմաստունների,  
Եղի՛ր դու ինձ հետ բոլոր մարտերում գիշեր ու ցերեկ,  
Որ իմ բանակը երբեք չդառնա ծարավին գերի:

Դրանից հետո հուպալը, որպես ջուր ցույց տվող ու ջրկիր, դարձավ Սողոմոնի բանակի զինվորական պաշտոնյա:

Ագռավը երբ տեղեկացավ հուպալի պաշտոնից, նախանձեց նրան և գնաց Սողոմոնի մոտ և ասաց.

-Հուպալը ձեր ներկայությամբ անշնորհքություն է ցուցաբերել: Նա կեղծ պահանջ է ներկայացրել, քանզի եթե իրավ է և ջուրը տեսնում է հողի ընդերքում, հապա ինչու՞ չի նկատում մի բուռ հողի տակ թաքցրած թակարդը և ընկնում է նրա մեջ և բանտարկվում է վանդակում:

-Ինչու՞ ես հպարտությունից դղված ստել և ինձ մոտ մեծախոսել. Սողոմոնը վրդոված ասաց հուպալին:

-Թշնամու խոսքը իմ հանդեպ մի՛ ընդունիր,-- ասաց հուպալը,-- եթե իմ ասածները ճշմարիտ չեն և իրոք հաստատես, որ ստախոս եմ, գլուխս մարմնիցս անջատի՛ր: Ուրեմն ագռավի խոսքը, որ կամակորության և չարամտության արդյունք է՝ մի՛ լսիր: Ես իմ խելամտության աչքով բարձունքում թռիչքի պահին տեսնում եմ թակարդը, եթե իմ խելամտության աչքը չի քողարկում ճակատագիրն ու նախախնամությունը:

Ես բարձունքներում թակարդն եմ տեսնում,  
Թե խելքիս աչքը բախտս չի փակում,  
Ուսումն է քնում, երբ բախտն է գալիս,  
Ամպն է մթագնում. արևն է լալիս:

## ԱՌԵՎՏԲԱԿԱՆ ՌԻ ԹՈՒԹԱԿԸ

Քաղաքներից մեկում մի առևտրական գեղեցիկ և սրտահույզ ձայնով թութակ ուներ: Առևտրականը թութակին վանդակի մեջ էր պահում և չափազանց շատ էր ընտելացել նրան:

Օրերից մի օր առևտրականը մտադրվեց ճամփորդել Հնդկաստան: Նա իր հարազատներին ու մերձավորներին իր մոտ հրավիրեց և նրանց հարցրեց. «Ի՞նչ եք ցանկանում, որ այս ճամփորդությունից ձեզ համար բերեմ»: Յուրաքանչյուրը ինչ-որ բան կամեցավ: Առևտրականը նաև իր քաղցրախոս թութակին մոտեցավ և հարցրեց.

-Դու՞ ինչ ես կամենում, որ քեզ համար բերեմ:

-Երբ Հնդկաստան հասնես, -ասաց թութակը, - և մարգագետնում, դաշտում ու անտառում տեսնես ազատ ապրող թութակների, նրանց ներկայությամբ հիշատակիր իմ գրկանքներն ու տառապանքները և իմ անունից նրանց ասա. «Դուք այսպես ազատ ու երջանիկ, իսկ ես վանդակում գերի եմ մնացել: Ի սեր Աստծո, մի ամսվոտ մարգագետնում ինձ հիշեք և մի՛ մոռացեք սերն ու հավատարմությունը»:

Հիշեք թշվառին այս մարգագետնում,  
Մի սաբուհով\* լի այս մարգագետնում:

Առևտրականը Հնդկաստան գնաց և այնտեղ, երբ տեսավ ազատ ու կենսուրախ թութակների, իր թութակի պատգամը հաղորդեց նրանց: Հանկարծ նկատեց, որ թութակներից մեկը դողդողաց, գետնին ընկավ ու անշնչացավ: Առևտրականը անչափ հուզվեց և իր կարեկցանքն ու զղջումը հայտնեց, թե ինչու գեղեցիկ թութակի մահվան պատճառը եղավ: Թերևս այդ թութակը իր թութակի հա-

րազատներից էր, որ նրա կարոտից թպրտաց ու մեռավ:

Իմ թութակի մերձավորն էր միթե նա,  
Երկու մարմին, մի հոգի՞ էր միթե նա,  
Ի՞նչ արեցի, ինչու՞ պատգամ թողեցի,  
Տգետ խոսքով այդ թշվառին այրեցի:

Առևտրականը վերադարձավ իր հայրենիքը և իր բերած նվերները հարազատներին ու ընկերներին բաժանելուց հետո, իր սիրելի թութակի մոտ գնաց և եղելությունը սկզբից մինչև վերջ պատմեց նրան: Հանկարծ տեսավ, որ իր գեղեցիկ թութակը վանդակի մեջ փոփեց: Առևտրականը ենթադրեց, որ թութակը մահացել է, այդիսկ պատճառով անչափ անհանգստացած բացեց վանդակի դուռը և անշնչացած թութակի մարմինը հանեց վանդակից և դրեց գետնին: Հանկարծ թութակը թևածեց, թռավ և մի ծառի բարձունքում նստեց: Այդ պահին առևտրականը հասկացավ միջադեպի գաղտնիքը և ապշեց թութակների հնարամտությունից ու խորամանկությունից և ըմբռնեց, թե ինչպես իր քաղցրահունչ թութակը այդ խորամանկությամբ ազատվեց վանդակից:

Առևտրականը միջադեպից այս խորհուրդը ստացավ, որ չպետք է նյութին վանդակված գերի լինել, այլ թութակի պես ուշադրություն դարձնել դրսի մթնոլորտին, և ազատության գործոնների միջոցով փրկվել մարմնի ցանկասեր գերությունից և թևածել մարդկայնության աստվածային երկնքում:

Առևտրականն ինքն իրեն ասաց. «Մա ինձ խրատ է,  
Պիտի ես գնամ նրա ուղիով. այն լուսառատ է,  
Մի՞թե նվաստ է իմ հոգին թշվառ հոգուց այս թռչնի,  
Հոգին պիտ լինի բարիք սերմանող և ուրիշ ոչինչ,  
Մարմինները մեր վանդակաձև են, դուրս կգան բնից՝  
Կլինեն ազատ ներսի ու դրսի խաբեբաներից»

.....  
\*Գինի, որ խմում են առավոտյան:

## ԾԵՐՈՒՆԻ ՏԱՎՂԱՀԱՐԸ

Օմար իբն Խեթաբի ժամանակներում մի մարդ է լինում, որ հմայիչ ու քաղցր ձայն ուներ: Նա իր ձայնը փայտե տավղի մեղեդու հետ այնպես էր համադրում և այնպես էր երգում, որ յուրաքանչյուր ունկնդրի սիրտը գրավում և մարդկանց հավաքատեղին ու խնջույքը վերածում էր հոգեզմայլ տոնախմբության. մի խոսքով՝ նրա երգից զարմանահրաշ հույզ և ուրախություն էր հորդում...

Ամիսներ ու տարիներ անցան, և այս ծերունու սրտառույ ձայնը հոգու ունկներում ձայնագրվել և մնացել էր հիշողություններում:

Մակայն անցան շատ տարիներ, և ծերունին զառամյալ դարձավ, և կամաց-կամաց նրա հնչեղ ու գուլալ ձայնը կորավ, կուպտացավ ու խոպոտվեց, և անհավատարիմ ու մոռացկոտ մարդիկ նրան իսպառ ջնջեցին իրենց հիշողությունից, նույնիսկ այնպես եղավ, որ մի կտոր հացի ու ճաշի կարոտ մնաց: Նա ի վերջո ուղորմած Աստծուն ապավինեց և նրա զահաշեմին սրտակեղեք հառաչեց ու աղոթեց, և իր տավղի մեղեդին աստվածային մեղք համարեց և, ապաշխարելով, վճռեց այդուհետ միայն Աստծո տավրահարը դառնալ և իր ողջ արվեստը, հույզն ու զգացումները Աստծո ճանապարհին նվիրաբերել:

Երբ զառամյալ ու տկար դարձավ նվագածուն ծեր,  
Անգործությունից նա կարոտ մնաց մի կտոր հացի,  
Ասաց՝ ո՛վ Բարձրյալ, ինձ տվեցիր շատ կյանք ու ժամանակ,  
Շատ ողորմություններ տվեցիր դու ինձ մի ծղոտի հետ,  
Բազում մեղքեր եմ ես գործել, ավաղ, յոթը տաս տարում,  
Երես չդարձրիր ու հետ չվերցրեցիր բախտը ինձանից,  
Չունեմ ես այսօր և ոչ մի վաստակ, քո հյուրն եմ հավետ,  
Տավիղ նվագեմ միայն քեզ համար, զի քոնն եմ հիմա:

Նա վերցրեց իր փայտե տավիղն ու գնաց Մադինայի գերեզմանոցը և մեծ հուզումով և վառվող սրտով հառաչեց ու աղոթեց Աստծո գահին: Միտքը Աստծուն հանձնեց և ողջ էությունը արդարության սկուտեղում դրած ընծայեց Աստծուն: Նա երկար ժամանակ աղոթեց ու սրտի խոսքը կիսեց Աստծո հետ և, ի վերջո, տեղում՝ հողի վրա քնեց:

Նույն պահին Օմարը երազում մի ձայն լսեց, որ նրան ասում էր՝ վեր կաց, գնա՛ գերեզման և հուսահատ ծերունուն փաղաքշիր և վճարի՛ր նրան տավիղ նվագելու համար:

Օմարը վեր կացավ ու գնաց գերեզմանոց և այնտեղ, բացի ծերունուց, որ փայտե տավիղը գլխի տակ քնած էր հողին, ոչ մեկին չնկատեց: Օմարը շոյեց նրան և մեծ գունար նրա տրամադրությամբ հանձնեց:

Ծերունին, որ հիմա Աստծո ողորմածությունից այլ հոգեվիճակում էր, իր տավիղը գետնին զարկեց և իր երախտագիտությունն ու փառաբանումը նվիրեց Բարձրյալին: Նա այլևս նյութական վարձատրություն չէր պահանջում և ստամոքսի համար սնունդ չէր հայցում: Հոգու սնունդը նրան իր ջինջ ջրով հագեցրել էր, և այնպես էր տարվել ճշմարիտով, որ դեռևս կյանքի ոսկին ու արծաթը չստացած, հոգին երկնային թագավորությանը միացավ և դեպի ճշմարիտը սավառնեց:

Նրա հողեղեն մարմինը գնաց, սակայն հոգին կենդանություն ստացավ և իրական երջանկություն ու ցնծություն գտավ:

Հաճույք ու վայելք թե պիտի փնտրես,  
Դու հարյուր հազար հոգի կկորցնես:  
Բազե դու եղիր՝ մոծակ որսալիս,  
Եվ ինչպես արև՝ անձնուրաց եղիր:  
Ով իմաստնության դու հրաշք արև,  
Հին այս աշխարհը դու նոր ցուցանիր:  
Մարմինն ու հոգին էության խորքում  
Ինչպես հորդուն ջուր՝ վեր է սլանում անհայտությունից,

Երբ որ անհայտից նոր-նորն է գալիս,  
Աշխարհից մարմնի դուրս գնալու պահն է գալիս:

### ՈՂԲԱՅՈՂ ՍՅԱՆ ՀԱՌԱՉՔ

Մադինայի մզկիթում ինչ-որ ժամանակ Աստծո առաքյալը մի կոճղի վրա, որը արմավենուց էր և ողբացող սյուն անվանումը կրեց, նստում և մարդկանց խրատում ու հորդորում էր: Այնուհետ, երբ մզկիթում ամբիոն կառուցվեց, Աստծո առաքյալը նստում էր բարձր հարթակին:

Ողբացող սյունը մարգարեի կարոտիցսկսեց լալ ու հառաչել, այն աստիճան, որ բոլոր մուսուլմանները լսեցին այն և զարմացան ու ապշեցին:

Ասաց մարգարեն՝ ի՞նչ ես կամենում, ո՛վ հավատի սյուն,  
Ասաց՝ իմ հոգին քո, սիրո ցավից դարձավ ծով արյուն,  
Կարոտացավից, երբ իմ խեղճ հոգին այրվեց ու մաշվեց,  
Ինչպես չհառաչեմ ասա առանց քեզ, ով «Է» աշխարհի,  
Ես էի միակ հենակետը քո և դու հեռացար,  
Ամբիոնի գլխին դու քեզ հենակետ կարգավորեցիր:

Ի վերջո այդ սյունը մարգարեից հայցեց, որ ինքը հավերժությանը միանա և հենվի գոյության հենարանին: Մարգարեն ավետեց նրա աղոթքի իրականացումը: Սյունը խաղաղվեց մարգարեի ուրախ լուրից: Մարգարեն այդ սյունը թաղեց հողի տակ, որպեսզի դատաստանի օրը մարդկանց նման հավաքագրվի և մարգարեի հետ ունեցած իր բարոյական ջերմ կապի համար՝ դրախտի այգում բարձրաբերձ արմավենի դառնա և իր ախորժելի արմավով դրախտայիններին հրճվանք պարգևի:

Ասաց. «Ես այն եմ ուզում անդադար, որ մասնատվեց շարունակ. Լսի՛ր, ո՛վ անգետ, մի՛ եղիր նվաստ, քան փայտը սնանկ»:

### ԱՐՈՒՋԱՀԼԻ ԿԱՍԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի օր Աբուջահլը, մի քանի մանրախիճ ափի մեջ պահելով, ներկայացավ մարգարեին և ասաց. «Եթե դու ճշմարիտ ես ասում, և դու Աստծո մարգարեն ես, ասա տեսնեմ, ի՞նչ կա իմ ափում»:

Վեհանձն մարգարեն ասաց. «Ոչ միայն կասեմ ինչ կա ափիդ մեջ, այլև կասեմ, որ ափիդ մեջ եղածները վկայեն իմ ճշմարտացիությունը»:

Ասաց՝ ով Աբուջահլ, երկրորդը հազվագյուտ է,  
Ասաց՝ ճշմարտությունը նրանից հզորագույն է:

Ի վերջո մարգարեն ասաց. «Զո՛ւն ձեռքի մեջ վեց հատիկ խճաքար է: Այժմ լսիր, թե ինչպես են նրանք Աստծուն օրհնեղանում ու վկայում»:

Աբուջահլը զգաց, որ նրանք յուրաքանչյուրը առանձին վկայում են միակ Աստծուն և մարգարեի առաքելությունը:

Սակայն Աբուջահլը փոխանակ հավատք ընծայելու, գայրույթից խճաքարերը գետնին թափեց, մարգարեին անվանեց ամենակախարդ և դյութող մարդկանցից մեկը, և կամակորությունից ու գոռոգությունից դրդված՝ հեռացավ ու տուն գնաց.

Ասաց՝ չի եղել քեզ նման կախարդ դեռ այս աշխարհում.  
Ողջ կախարդների և գլուխն են դու և թագակիրը:  
Երբ որ տեսավ հրաշքն այդ, խեղճ Բուջահլը փրփաց,  
Չայրույթն համակեց, անմիտ գոռոգոաց ու տուն սլացավ,  
Հողը թող գլխին, որ եղավ նա կույր ու բութ նզովված,  
Հողն ակնհայտ նրա աչքերին հրեշ երևաց:

### ՎՐԱՆԱԲՆԱԿ ԲԵՂՎԻՆԻ ՆՎԵՐԸ

Շատ հին ժամանակներում արաբական աշխարհի անապատում վրանաբնակ մի մարդ ու կին էին ապրում: Այդ աշխարհի դեկավարը անչափ ողորմած և մեծահոգի անձնավորություն էր:

Այս ամուսինները ծայրահեղ թշվառության ու աղքատության մեջ էին և դժվարությամբ էին վաստակում իրենց հանապազօրյա հացը: Մի գիշեր կինն ասաց ամուսնուն.

«Տառապում ենք ծայրաստիճան թշվառությունից,  
Ողջ աշխարհը ուրախ, զվարթ, մենք՝ տառապյալ,  
Չունենք մենք հաց, մեր կերածը ցավ ու արցունք,  
Չունենք սափոր, և մեր ջուրն է աղի արցունք»:

Ամուսինների խոսակցությունը շարունակվեց: Կինը դեռևս շարունակում էր բողոքել քաղցից ու աղքատությունից, իսկ մարդը խոսք էր բացում տոկունությունից, համբերությունից ու Աստծուն ապավինելուց:

Սակայն կինը չէր բավարարվում ամուսնու խոսքերով և շարունակ նոր բարդություններ էր ակնարկում ու անհամբերություն ցուցաբերում: Ամուսինը նրան հորդորում ու ասում էր. «Ես ու դու ամուսիններ ենք, ընկերակից և պետք է երկու մարմին և մի հոգի լինենք: Եթե կոշիկներից մեկը նեղ է, մյուսն էլ ավելորդ է և ...»:

Սակայն կինը աղքատությունից, ամոթահարությունից ու դժվարություններից էր խոսում:

Մարդը նրան համբերության էր կոչում ու քչով բավարարվելուն և նրան ասում էր. «Աղքատությունը, որը ուղեկցվում է գոհունակությամբ և բավարարվածությամբ, միջոց է Աստծո նկատմամբ առավել ուշադրության և ...»:

Ի վերջո այս խոսքուզրույցի ընթացքում կինն ամուսնու խորհուրդներից ազդվեց և հոգեպես այլափոխվեց և իր սառն ու դառը կյանքը վերածեց ընտանեկան քաղցր ու ջերմ կյանքի և ընտրեց ամուսնու նկատմամբ բարյացակամության ու քնքշանքի ուղին:

Մի օր կինն ամուսնուն առաջարկեց.

-Գիտե՞ս, որ խալիֆը անչափ ողորմած է, վեր կաց ու նրան մի նվեր տար, որպեսզի նրա ողորմածությամբ ապահովվի մեր կյանքը:

-Մենք ի՞նչ ունենք, որ տանենք խալիֆին,- պատասխանեց տղամարդը:

-Վեր կաց և անձրևաջրով լցված ջրի սափորը որպես նվեր տար խալիֆին,- առաջարկեց կինը:

Մարդն ասաց. «Այո, բերանը փակիր մեր այս սափորի, Այս է նվերն այն, որ մեզ կլինի անչափ օգտակար, Այս փոքրիկ կուժը դու թաղիքի մեջ ամուր փաթաթիր, Որ այն բաց անի սուրբ պահքի օրը շահը ողորմած, Քանզի աշխարհում չկա, չի եղել այսպիսի ընծա, Եվ չկա ընտիր, ուրիշ ըմպելիք, այս հեղուկից գատ»:

Մարդը վերցրեց կուլան ու գնաց խալիֆի դուռը և այն հանձնելով դռնապանին՝ նրա միջոցով եղելությունը խալիֆի ականջին հասցրեց:

Խալիֆը հրամայեց, որ սափորը լցնեն ոսկով և նվիրատուին նավ ուղեկցեն, որպեսզի ամենայն անհոգությամբ իր տունը վերադառնա:

Խալիֆի հրամանը կատարվեց, և այսպիսով՝ նա իր երազանքին հասավ:

Այս պատմությունից գիտակցիր, որ մեր գիտությունը նման է այն սափորի ջրին և Աստծո վեհությունն ու իմաստությունը, ինչպես գետի ջուրը, ընդարձակ է և չի դադարում ընթանալուց:

Եթե այն վրանաբնակ արաբը գիտենար, որ իր սափորի ջուրը

չնչին մի բան է՝ գետի ջրի համեմատությամբ, այն գետնին կզարկեր: Ինչևէ, նա ամենայն համեստությամբ իր չնչին նվերը խալիֆին տարավ և ձեռք բերեց այդ մեծ ուրախությունը.

Դու ողջ աշխարհը սափոր համարիր,

Եվ իմաստությամբ ու սիրով անհուն այն լիովի է,

Չնչին կաթիլը այս գետաջրի բարությունն է Նրա՝ Բարձրյալի,

Ջի առատությամբ այն չի գետեղվի մաշկի տակ նվաստ,

Սափորը ջրի՝ գիտելիքներն են մեր լի ու առատ,

Իսկ այն խալիֆը Աստծո գիտության գետն է հորդառատ:

### ՈՒՇԻՄ ՆԱՎԱՊԵՏՆ ՈՒ ՔԵՐԱԿԱՆԸ

Մի անձնավորություն յուրացրել էր լեզվագիտությունը, այսինքն՝ շատ լավ տիրապետում էր արաբերենի քերականությանը, այդիսկ պատճառով նրան լեզվաբան գիտնական էին անվանում:

Մի օր նա նավ բարձրացավ, սակայն լինելով ձևամոլ ու հպարտ՝ նավապետին ասաց.

- Դու, արդյոք, գիտե՞ս քերականություն:

- Ոչ,- պատասխանեց նավապետը:

- Կյանքիդ կեսը գուր ես վատնել,- ասաց լեզվագետը:

Ասաց՝ գիտե՞ս դու լեզուներ, ասաց՝ ոչ,

Ասաց՝ կեսը քո կյանքի գուր գնաց, կորավ:

Նավապետն այս վիրավորանքից նեղսրտեց ու տրտմեց և այդ պահին լռեց ու ոչինչ չասաց:

Նավը շարունակում էր ընթանալ: Եվ երբ ուժեղ փոթորկի պատճառով ջրապտույտի մեջ ընկավ և անդունդում խորտակվելու եզրին էր, նավապետը, որ նաև հնուտ լողորդ էր՝ քերականին ասաց.

- Արդյոք լողալ գիտե՞ս:
- Ո՛չ, բոլորովին,- տազնապահար պատասխանեց լեզվաբանը:

Ասաց՝ ողջ կյանքդ, ով քերական, զուր կորավ գնաց,  
Քանզի ջրապտույտում խորտակվում է նավը սրընթաց :

Լեզվաբան գիտնականը զգաց իր անտեղի գոռոզամտությունը և հասկացավ, որ պետք չէր նավապետին նախատել և այսպես անդունդի եզրին հայտնվելով՝ նրա նախատինքին արժանանալ: Այո, նա հասկացավ, որ մեծագույն գիտությունն այն է, երբ մարդ վատ հատկանիշները իր էությունից վերացնում ու ջնջում է, որպեսզի գոռոզության ծովում չխեղդվի:

Պետք է այստեղ լինել մահվ\* և ոչ թե նահվ,\*\*իմացի՛ր,  
Երբ դու մահվ ես, անվտանգ ջրում ընթացի՛ր,  
Ծովի ջուրը մեռյալին գլխի վրա է պահում,  
Թե լիներ ողջ, ինչպե՞ս ծովից կազատվեր,  
Թե որ դու մեռնես բնույթներից մարդկային  
Գաղտնիքներիդ պատճառով, գլխի վրա կպահի  
Ավանակ էիր նրանց անվանում՝ ով արարում էր,  
Այժմ դու ինքդ ավանակի պես սառույցի մեջ ես,  
Թե այս աշխարհում դու ժամանակի գիտնականն ես մեծ,  
Այժմ դու նայիր այս ժամանակի վերջնաժայրը մութ,  
Լեզվագետին քերական այն դռնով տարանք,  
Մինչ ուսանենք ձեզ նահվն ու մահվը:

\*\*\* Բառախաղ, վերացնող և քերական բառերի միջև:

## ԱՆՊՈՉ ԱՌՅՈՒԾԸ

Մի դազվինցի մարդ, համաձայն դազվինցիների սովորության, գնաց մի վարսավիրի մոտ, որը նաև մարմնի վրա դաջվածք էր կտում, և ասաց.

- Եկել եմ, որ առյուծի պատկերը կտես ուսիս ու թիկունքիս, այնպես որ կապտաերանգը մուգ և պայծառ լինի: Առյուծի պատկեր ընտրելուս պատճառն, այն է, որ թշնամիներս այնպես, ինչպես առյուծից են սարսափում, ինձանից նույնպես վախենան, քանզի իմ մեջ առյուծի բնավորությունն ու էությունն է նստած, և ցանկանում եմ, որ այդ պատկերը արտահայտի իմ էությունը:

Երազանքս առյուծն է, իմ թիկունքին առյուծ դաջիր,  
Դու ջանք քափիր մուգ կապույտը պայծառ դաջիր,  
Որ թիկունքս ամուր լինի՝ խնջույքի ու ռազմի պահին,  
Այն կատաղած, հաստատական առյուծ որպես դու նկարիր:

Վարպետ Դալաքը սկսեց իր գործը: Հենց որ ասեղը վերցրեց ձեռքը և ասեղնահարեց դազվինցու թիկունքը, դազվինցին փահլևանը հանկարծ ճչաց ցավից ու ասաց.

- Վարպետ, առյուծի ո՞ր մասից ես սկսել:
- Պոչից,- պատասխանեց վարպետը:
- Դազվինցի փահլևանն ասաց.
- Ես ի վիճակի չեմ ասեղի ցավին դիմանալ, առյուծի պոչը բաց քող, անպոչ առյուծին էլ են առյուծ ասում:

Դու առյուծ եղի՛ր թեկուզ և անպոչ և վկայի՛ր, թե հզոր առյուծ ես,  
Քանզի սիրտն իմ՝ վերքից ժանիքի, ցավից թուլացավ :

Վարպետը պոչը բաց թողեց և սկսեց առյուծի այլ անդամի կտումը: Գարձյալ դազվինցի փահլևանի ճիչը բարձրացավ.

- Առյուծի ո՞ր մասն է:
  - Առյուծի ականջը,- ասաց վարպետը:
- Փահլևանը հառաչեց.

Մասց, ականջը թող որ չլինի, ով վարպետ հեքիմ,  
Թող այդ ականջը, և մեր այս գործը դու հանգիստ կարճիր:

Դաջող վարպետը ականջի կտումը թողեց և մի այլ հատված սկսեց դաջել:

Դազվինցի մարդը դարձյալ չկարողացավ տանել ասեղի ցավը և բղավելով ասաց.

- Հիմա առյուծի ո՞ր մասն է:
  - Առյուծի փորի պատկերն է,- ասաց վարպետը:
  - Բաց թող այդ մասն էլ, փոր պետք չէ,- ասաց դազվինցին:
- Դալաք վարպետը ապշած ասեղը գետնին զարկեց և ասաց.
- Ո՞վ է արդյոք այսպիսի առյուծ տեսել:

Գետնին հարվածեց դաջող վարպետը իր ասեղը սուր,  
Մասց՝ աշխարհում ով է նման բան տեսել իր կյանքում  
Չլաված բան է, անպոչ, անգլուխ առյուծ՝ առանց փոր,  
Ախր Աստված ե՞րբ է արարել այսպիսի առյուծ ,  
Թե դու ասեղին ի գորու չես դեռ հանգիստ դիմանալ,  
Էլ գուր մի՛ խոսիր՝ ինքնակեղեքմամբ, առյուծից հզոր,  
Ով դու իմ եղբայր, դիմացի՛ր ցավին ու խայթոցներին,  
Որ ազատես քեզ եսամոլության ու ես-ի խայթից,  
Թե ցանկանում ես դու լուսափայլել ցերեկվա նման,  
Վառիր անվարան գիշերանման էությունը քո:

## ԱՂՎԵՍԻ ՓՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Առյուծը, գայլը և աղվեսը իրար հետ ընկերացան և որսի նպատակով սար ու ձոր գնացին: Գայլը և աղվեսը առյուծի հովանավորությամբ մի վայրի ցուլ, մի քարայծ և մի նապաստակ որսացին, այնուհետ երեք որսն էլ կողք-կողքի շարեցին:

Գայլը նկատի չառնելով, որ առյուծը կենդանիների արքան է, և իրավունքն ու ընտրությունը նրան է պատկանում, աղվեսի հետ մրմնջում էր.

«Առյուծը երկի արդարադատ թագավորի պես կտա մեր բաժինը, թեև զարդանկարը չպետք է նկարչի հետ վիճաբանի և նրա գործերին խառնվի»:

Առյուծը զգաց նրանց մտադրությունն ու ախորժակը, սակայն արտաքուստ ժպտադեմ էր և ցույց չէր տալիս, որ սրտնեղված է նրանցից:

Առյուծն ի վերջո, ասաց գայլին.

-Որպես իմ տեղակալ՝ որսած այս կենդանիներին արդարորեն բաժանիր:

Մասց առյուծը՝ ով գայլ փորձառու, որսն այս բաժանիր,  
Հանրագումարդ ով փորձառու գայլ վերանորոգիր,  
Իմ փոխնորդը դու եղիր այսուհետ բաժանման գործում,  
Որ պարզ լինի մեզ, թե ի՞նչ գոհար ես դու իրականում:

Գայլը փոխանակ առյուծին ասելու, թե ինքն ով է, որ առյուծի ներկայությամբ հրաման տա , ամենայն լկտիությամբ ասաց.

- Քանի որ դու մեծ ես, վայրի ցուլը թող քեզ լինի, քարայծը, որ միջին չափի է՝ ինձ, իսկ փոքր նապաստակը՝ թող աղվեսին լինի, որ փոքր է բոլորից:

Առյուծը անհանգստացավ և ասաց.

- Ես դեռ կամ, իսկ դու արդեն «մենք ու դու» ես անում: Եվ ցատկելով գայլի վրա՝ նրան պատառոտեց:

Աղվեսն այս տեսարանին վկա եղավ և փորձառություն ձեռք բերեց ու դաս ստացավ այնպես, որ երբ առյուծը նրան ասաց. «Այժմ դու բաժանիր կենդանիներին», աղվեսը հնարամտորեն և դիվանագիտորեն, ամենայն համեստությամբ ասաց.

- Տեր, այս գեր ցուլը թող ձեր նախաճաշը լինի, այս քարայծը՝ ձեր ճաշը, իսկ այն նապաստակը թող ձեր երեկոյի ընթրիքը լինի:

Առյուծն այս պատասխանից ուրախացավ և...

Ասաց՝ ով աղվես, դու արդարություն լուսավորեցիր,  
Արդար բաժանում ասա դու ո՞ւմից այդպես ուսուցիր,  
Ասա, որտեղից, ո՞վ դու մեծ աղվես, դասեր քաղեցիր,  
Ասաց՝ աշխարհի ո՞վ դու տիրակալ, վիճակից գայլի:

Այդ խոսքերից հետո առյուծը երեք որսն էլ աղվեսին նվիրեց և ասաց.

Ով դուք աղվեսներ, քանի որ եղաք բուրբուկ «մենք»,  
Ինչու՞ ձեզ նեղենք, քանզի «դուք» եղանք մենք էլ բոլորս,  
Մենք քեզ որսերը ազատ կթողնենք մինչ յոթը շրջան,  
Քանզի դաս առար գայլից անհամեստ դու խոնարհաբար,  
Ուրեմն՝ աղվես չես, այլ դու առյուծ ես որձ ու համարձակ:

Աղվեսը շնորհակալություն հայտնեց.

Ոսկոր ու բրդին ակնապիշ եղած վայրագ գայլերի,  
Նայեք ուշադիր ու լավ դաս քաղեք, ո՞վ դուք թշվառներ,  
Խելամիտը լուրջ այս գոյն ունայն Գլխից կվանի,  
Երբ լսի հանկարծ վախճանը Ադի ու փարավոնի,  
Ուրեմն փառք տանք Նրան՝ բարձրյալին, որ այս աշխարհում  
Վերագտավ մեզ մեր նախնիներից շարունակաբար:

Սա էր աղվեսի՝ իրավիճակի ճիշտ ըմբռնումն ու գնահատումը, /եթե նկատի չունենանք նրա խորամանկությունը/: Ինչևէ, փորձառությունը և փորձառության կիրառումը խորագույն հանգույց բացող և ճանապարհ հարթող է:

## ԸՆԿԵՐՈՋ ԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ՍԻՐՈ ՀԵՏ

Մի մարդ գնաց իր սիրո դուռը և թակեց այն: Սիրեցյալը, մոտենալով դռանը, հարցրեց.

-Ո՞վ է:

-Ես եմ,- պատասխանեց մարդը:

-Գնա, այժմ տեսակցելու ժամանակ չունեմ,- պատասխանեց սիրեցյալը,- դու «ես»-ից ու քեզանից ես խոսում: Դու դեռևս խամես, դու կթրծվես ու կեփվես միայն բաժանման կրակով:

Մարդը գնաց և մի ամբողջ տարի տառապեց իր սիրեցյալի կարոտից, թրծվեց, եփվեց և վերադառնալով իր սիրեցյալի շենը՝ զարկեց դռան օղակը:

- Ո՞վ է,- հարցրեց սիրեցյալը:

- Դու ինքդ ես, որ դուռն ես թակում, «Ես» և «Դու» չկա,- պատասխանեց մարդը:

- Այժմ տուն մտիր,- ասաց սիրեցյալը,- քանզի այլևս ես ու դու չկանք և երկու հոգի չենք, այլ մեկ ենք:

Հիրավի, եթե ազատվենք «ես»-ից և «մենք»-ից և բացարձակ սիրեցյալի տան դռանը հասնենք, այսինքն՝ ելքը գտնենք դեպի միակ Աստված, ամենայն ինչի և ամենայն տեղ կհասնենք:

Հենց այնպես, ինչպես Նոյ մարգարեն իր ըմբոստ ցեղակիցներին հեռու վանեց իր ես-ի նկատմամբ ուշադրությունից և նրանցից պահանջեց, որ միանան Աստծո ճանապարհին և միակամ և միաուղի լինեն:

Նոյը ասաց՝ ո՛վ ըմբոստներ, ես այլևս ես ինքս չեմ,  
Ես հոգով եմ միայն ապրում, ես մարմնապես մահացած եմ,  
Զի կրքերից մութ մարդկային՝ ես հեռացել վերացել եմ,  
Ճշմարիտը՝ տենս, ինձ դարձավ լսողություն և ընկալում և այք տեսնող:  
Զի պահն այս անվավեր է, ես այլևս ես ինքս չեմ,

Եվ ապա ավելացնում է.

Այս պահից հետո ով եսախոսի՝ նա անաստված ու կռապաշտ է,  
«Ես» ու «Մենք» բառերը նրա դեմ դրեք անվարանորեն,  
Արքայություն, Արքայությունն է Նրա, տվեք Նրա արքայությունը:

Ուրեմն, բոլորը միմյանց նկատմամբ պետք է «կիսատես» լինեն,  
և եթե «Ես» լինեն և չիջնեն եսամոլության ուղտի վրայից՝ ելք չեն  
ունենա Աստծո արքայության: Բոլորը պետք է իրենց ոչինչ համա-  
րեն հզոր Աստծո առաջ:

Բոլոր որսերը և ողորմությունները բոլոր  
Արարածների համար է այն մեծ Արքայի:

### ՃՇՄԱՐՏԱՅՈՒՅՑ ՀԱՅԵԼԻՆ

Այն բանից հետո, երբ Հովսեփ մարգարեն բաժանվեց իր ընտա-  
նիքից և շատ տառապանքների ենթարկվեց և ի վերջո Եգիպտոսի  
վեհապետն ու առաջնորդը դարձավ, նրա մանկության բարի ընկե-  
րը, որոշեց ճամփորդել և իր վաղեմի ընկերոջը՝ Հովսեփին տեսակ-  
ցել:

Նրանք, ովքեր գնում էին գեղադեմ Հովսեփին տեսակցելու, ի-  
րենց հետ նվերներ ու ընծաներ էին վերցնում: Հովսեփի վաղեմի  
ընկերն էլ իր հետ մի նվեր վերցրեց, և դա մի կտոր հայելի էր:

Հովսեփի ընկերը, երբ արժանացավ նրան տեսակցելու բախ-  
տին, հարցրեց նրա որպիսությունը, և Հովսեփը իր գործերի վերա-  
բերյալ պատմեց նրան և այդ բոլորը համարեց աստվածային ի-  
մաստություն ու փորձություն և Աստծուն փառաբանեց, որ տոկու-  
նության ու համբերության շնորհիվ այդ քննություններում պարզե-  
րես է եղել:

Այս խոսքուզրույցներից հետո Հովսեփն իր վաղեմի ընկերոջն  
ասաց.

- Ընկերները, երբ միմյանց տեսնելու են գնում, նվերներ են տա-  
նում, ասա իմանամ՝ դու ի՞նչ ես բերել:

- Ինչ էլ որ նկատի ունեցա, տեսա քեզ համար փոքր ու չնչին է,-  
պատասխանեց ընկերը,- քո տրամադրության տակ ամեն ինչ կա,  
իմ նվիրատվությունն այստեղ նման կլինեք ջրի կաթիլ վերցնել՝  
ծով գնալիս կամ համեմունք վերցնել՝ Քերման ճամփորդելիս: Այ-  
դիսկ պատճառով մտածեցի, որ ամեն ինչ, բացի քո հմայիչ ու հո-  
գեզմայլ դեմքից՝ ունես, ուստի ինքս ինձ ասացի՝ մի հայելի վերց-  
նեմ և քեզ նվիրեմ, որպեսզի քո գեղեցիկ դեմքը այնտեղ արտացոլ-  
վի, և այդ ժամանակ նաև ինձ կհիշես:

Արժանի գտա, որ ես մի հայելի  
Քեզ բերեմ ընծա, որպես լույս կրծքի,  
Որ դու նրանում տեսնես դեմքը քո,  
Ով դու արեգակ, ով երկնքի մոմ,  
Հայելի եմ բերել, ով դու լուսերես,  
Որ երբ քեզ նայես, ինձ էլ դու հիշես:

Այո, հիշեք, որ հայելին ի ցույց է դնում գեղեցիկն ու այլանդա-  
կը: Մարդը, եթե իրեն կատարյալ և առանց թերությունների համա-  
րի, երբեք դեպի կատարելություն քայլ չի անի: Թերությունները ի-  
մացությունները ցուցադրող հայելի են, և թերություններին ուշադ-  
րություն դարձնելը՝ մարդուն առաջնորդում է դեպի կատարելու-  
թյուն: Եվ ինչպես զուլալ առվակը ի ցույց է դնում իր խորքում եղած

գոմադրը, այդպես էլ նա, ով հետամուտ է մաքուր ջրի, նկատելով գոմադրը՝ ձեռնամուխ է լինում այն մաքրելուն: Եվ ինչպես լավագույն ընծան Հովսեփի համար միջոց է ցույց տալու համար նրա հոգեզմայլ պատկերը, որը նրա արժանապատիվ կատարելության մարմնացումն է, այդպես էլ մարդ արարածների լավագույն ընծան Աստծուն այն է, որ իրենց սրտերը Աստծո հայելին դարձնեն և միայն իրենց սրտի հայելու մեջ տեսնեն Աստծուն և միայն այդ ժամանակ է, որ խավարը կնահանջի:

**ԳՈՌՈՉ ՍԱՀԱՔԻ\* ՊԱՏԻԺԸ**

Մարգարեի համախոհներից մեկը հայտնությունների գրառողն էր: Այսինքն՝ հայտնությամբ ներշնչված աստվածային պատգամները մարգարեն արտասանում էր նրա համար, իսկ նա այդ այսօրերը գրի էր առնում, այդիսկ պատճառով նրան ներշնչման գրագիր էին անվանում:

Աստվածային այսօրերի գրառման աշխատանքը պատճառ եղավ, որ նրա սրտում ևս շողան ներշնչման բարոյական վեհ իմաստները այնպես, որ այդ ասպարեզում արժանավայել պաշտոն գտավ: Սակայն հենց այս խնդիրը մյուս կողմից հիմք դարձավ նրա գոռոզամտության: Ենթադրեց, որ օրինակ՝ կարող է սոխակի ձայնի հանել, գիտի նաև, թե ինչ կա սոխակի ներսում և ինչ իմաստ ունի սոխակի ձայնը: Գոռոզամտության և հպարտության այս տգեղ երևույթը քողապատեց նրա սիրտը այնպես, որ Աստծո առաքյալի հետ փորձեց հավասարվել և ասաց.

- Ինձ ևս ներշնչվում է, ուրեմն ինչո՞վ եմ տարբերվում Աստծո առաքյալից:

Այս գոռոզամտության պատճառով նա Աստծո զայրույթին ենթարկվեց և այնպիսի հարված իջավ հոգուն, ասես մեկ բառ անգամ չի սովորել:

Այն, ինչ ասում է մեր լուսավորիչ առաքյալը մեծ, ճշմարիտը այդ առկա է նաև իմ ներաշխարհում, Եվ մտքի շողը ասես թե ընկավ սուրբ առաքյալին, Եվ որպես պատիժ աստծո խռովքը իջավ մարմնին:

Թեև դրանից հետո զոջաց, սակայն նա գրկվեց ունենալ այն լույսի պահպանման արժանիքի շնորհը: Եվ հառաչանքները ոչ մի տեղ չհասան, և մահից բացի ուրիշ ելք չուներ:

Հառաչում էր նա և չուներ օգուտ հառաչանքներից, Զանգի սուր սայրը դուրս պրծավ արագ, գլուխը պոկեց:

Ուշիմ եղիր, որ հանկարծ չգոռոզանաս բարիքի ու երջանկության առատությունից և Աստված քեզ չգրկի իր ողորմածությունից: Այո, ինքնագոհությունն ու գոռոզությունը նման են շղթայի, որ կապանքի մեջ են պահում մարդկային հոգու ձեռքն ու ոտքը:

*\*Ընկեր, համախոհ, աշակերտ, տեր, մարգարեի աշակերտ:*

**ԽՈՒԼ ՄԱՐԳՈՒ ԵՎ ՀԻՎԱՆԴԻ ԶՐՈՒՅՅԸ**

Մի մարդ խուլ էր և միայն բարձրագույն արտասանվող խոսքերն էր լսում: Խելամիտ մեկը նրան ասաց. «Քո հարևանը և ընկերը անկողնում պառկած տառապում է հիվանդությունից, լավ կլինի՝ նրան տեսակցես»:

Խուլ մարդը, որ իր պարտականությունն էր համարում նրան այցելել, մտածեց. «Իմ լսողությունը վատ է, և նա էլ հիվանդության ու հյուծվածության պատճառով չի կարող ինձ հետ բարձր խոսել, ուրեմն ի վիճակի չեմ լինի նրան լսել»: Նա ինքն իր համար ելք գտավ ու ենթադրությամբ մտածեց, որ երբ նրա մոտ գնամ, ստիպ-

ված պետք է խոսենք, նա էլ իմ պատասխանը տալով՝ կշարժի շուրթերը, և ես նրա շուրթերի շարժումից, ինչպես նաև ենթադրությամբ, կարող եմ կռահել, որ ի պատասխան նա ի՞նչ է ասում:

Եթե ես հարցնեմ՝ ինչպե՞ս ես, ի պատասխան նա կասի՝ լավ եմ: Ես էլ կասեմ՝ փառք քեզ Աստված: Եթե հարցնեմ՝ ի՞նչ ես ուտում, նա կասի՝ օշարակ կամ սպաս: Հետո կասեմ՝ անու՛շ, բարի ախորժակ: Կասեմ՝ ո՞վ է քո բժիշկը, կասի՝ այսինչ բժիշկը: Կասեմ՝ ոտքը թող թեթև լինի, հմուտ բժիշկ է և բուժող: Այդպիսի ենթադրություններով կարող եմ նրա պատասխանը տալ:

Իսույ մարդը այս համեմատական հնարամտությամբ գնաց հիվանդին այցելության և նրա անկողնու մոտ նստելով՝ հարցրեց.

- Ո՞նց ես:
- Ցավից մեռնում եմ,- պատասխանեց հիվանդը:
- Փառքդ շատ, Աստված,- ասաց խույ մարդը:
- Ի՞նչ ես ուտում,- հարցրեց խույ մարդը:
- Թույն,- պատասխանեց անհանգստացած հիվանդը:
- Անու՛շ, բարի ախորժակ,- պատասխանեց խույ մարդը: Այնուհետև հարցրեց.
- Ո՞վ է քո բժիշկը:
- Հոգեառը,- պատասխանեց հիվանդը:
- Ոտքը թող թեթև լինի, ուրախ եղիր:

Ասաց՝ ոնց ես, ասաց՝ մեռած, ասաց՝ փառք քեզ, Տրտմեց խոսքից, եղավ կոպիտ ու ջղային Հետո հարցրեց, ի՞նչ ես կերել, ասաց՝ թույն, Ասաց՝ քեզ անուշ, և խոռվեց հիվանդի հոգին, Այնուհետ հարցրեց՝ բժիշկներից ո՞վ է բժիշկդ, Որ բարեխղճ քեզ է այցելում խեղճը շարունակ, Ասաց՝ հոգեառը, կգա հենց հիմա, դու թող ու գնա, Ասաց՝ դու ուրախ մնա, թող թեթև լինի ոտքը նրա:

Հիվանդը մտածեց. «Այս մարդը իմ թշնամին է, քանզի իմ դարդ ու ցավով, նույնիսկ իմ մահով ուրախանում է, թեև հիվանդին այցելելու նպատակը նրան հանգստացնելն ու հուսադրելն է և ոչ թե նեղացնելը»:

Իսույ մարդը, որ ըստ իր ենթադրության կարծում էր իր պարտականությունը լավագույն ձևով կատարել և պահպանել է հարևանության ու ընկերության քաղաքավարությունը, դուրս եկավ հիվանդի տնից՝ չմտածելով, որ ի չիք դարձրեց իր տաս տարվա ընկերությունը հիվանդ հարևանի հետ: Նրա ենթադրությունը ոչ միայն նրանց չհասցրեց ճշմարտության, այլև նրա մոլորության պատճառը դարձավ: Նա չգիտակցեց, որ երկրպագելու փոխարեն մեղք է գործել.

Խայթող խուլի ենթադրություններից,  
Չեղյալ դարձավ խոսքը տաս տարվա,  
Քո ենթադրությունը թող ու մոռացիր,  
Քանզի քո տգետ ենթադրությունը մոլորություն է,  
Խելամիտը տես՝ կարծում է, իբր փառաբանում է,  
Այնինչ, մեղքից անտեղյակ ու հոգի է տալիս:

### ՍԱՏԱՆԱՅԻ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Աստված բոլոր հրեշտակներին, այդ թվում սատանային, որ հրեշտակներից էր, հրամայեց, որ Ադամին /մարդուն/ երկրպագեն: Հրեշտակները հնազանդվեցին, սակայն սատանան ըմբոստացավ:

Նրա ըմբոստանալու պատճառը սա էր, որ ինքը կրակից է ալարվել, իսկ Ադամը՝ հողից:

Ասաց՝ կրակն, անշուշտ, բարձր է գորշ հողակույտից,  
Ես կրակից եմ հրավառ ու տաք, իսկ նա՝ գորշ հողից,

Եվ համեմատենք երկրորդականը հիմնականի հետ,

Մենք լույսերից ենք լույս ու լուսավոր, իսկ նա՝ խավարից:

Աստված պատասխանեց նրան, որ իմացության չափանիշը ազնվագարմությունը չէ, այլ բարեպաշտությունն ու հնազանդությունն է Առ Աստված: Հենց այս հիմունքով տեսնում ենք, որ Նոյ մարգարեի որդին մեղավոր եղավ ու լքված, սակայն Աբուջահլի որդին մաքրամաքուր բարեպաշտ դարձավ: Ուրեմն, չպետք է արմատը և հիմքը չափանիշ դարձնել:

Աբուջահլի այն որդին դարձավ բարեպաշտ մաքուր,  
Նոյ մարգարեի այն որդին դարձավ մոլորյալներից,  
Հողից ծնվածը տեսն լուսավորվեց, ինչպես լուսինը,  
Կրակածինը այդ դու ես որ կաս, ով դու սևերես,  
Դու առաջ գնա արեգակի հետ և Զաբեի հետ  
Եվ մի հապաղիր ու մի որոնիր համեմատություն:

### ԱՐՎԵՍՏԱԳԵՏ ՉԻՆԱՅԻՆԵՐԻ ԵՎ ՀՈՍԵԱՅԻՆԵՐԻ ՄՐՅՈՒՅԹԸ

Շատ հին ժամանակներում Չինաստանի և Հռոմի բնակիչները գեղանկարչության և դիմանկարչության մեջ համաշխարհային համբավ էին վայելում, և յուրաքանչյուրն իր արվեստագետին առավել բարձր էր գնահատում:

Չինացիները ասացին հպարտ՝ մենք առավել ենք,  
Հռոմեացիները ասացին՝ մենք հաղթում ենք նահանջելով:

Ի վերջո, թագավորը պահանջեց երկու ցեղին էլ և ասաց. «Ցան-

կանում ենք երկուսիդ էլ ստուգել, որպեսզի իմանանք, թե որ մեկդ եք ավելի արվեստագետ»:

Նրանք ընդունեցին այդ առաջարկը: Այնտեղ կար իրար դեմ դիմաց երկու պալատ: Թագավորը առաջարկեց, որ հռոմեացի արվեստագետները գնան երկու պալատներից մեկը և դուռը փակեն, իսկ չինացի արվեստագետներն էլ մյուս պալատը գնան և նույնպես դուռը փակեն իրենց վրա: Այնուհետև երկու այս խմբերը, առանց մեկը մյուսի աշխատանքին իրագեկ լինելու, պետք է իրենց գեղանկարչության արվեստը պալատների փակ դռների ետևում ի ցույց դնեին:

Չինացի արվեստագետները ամեն օր թագավորից պահանջում էին նկարչական զանազան պիտույքներ ու ներկեր, և թագավորը հրամայում էր, որ բոլոր անհրաժեշտ միջոցները նրանց տրամադրեն:

Սակայն հռոմեացի արվեստագետները ոչ մի տեսակ ներկ և պիտույքներ չպահանջեցին:

Չինացի արվեստագետները բոլոր այդ ներկերով ու պիտույքներով զանազան ու ակնառու նախշեր գծեցին ու գունազարդեցին պալատի պատերը և ամենայն հմտություն ցուցաբերեցին իրենց աշխատանքը առավել գեղեցիկ ու հմայիչ ցուցադրելու համար:

Սակայն հռոմեացի արվեստագետները առավոտից իրիկուն միայն հղկում ու փայլեցնում էին պալատի պատերն ու քարերը այնպես, որ ամբողջ պալատը նմանվեց հայելու, որի մեջ արտա-ցոլվում էր ամեն բան:

Չինացիները պալատը դարձրին պատկերասրահ:  
Հռոմեացիները պալատը դարձրին շքեղ հայելի:  
Չինացիները բազմաթիվ ներկեր ու գեցին շահից  
Եվ շահն ազնիվ բացեց մեծ դուռը իր գանձարանի,  
Ամեն առավոտ ճոխ գանձարանից ներկեր անհամար  
Չինացիներին նվեր էր տրվում, հավելավճար:  
Հռոմեացիները ասացին՝ ոչ ներկ, ոչ մի գունանախշ,

Այս գործին, հարկավ, պիտանի է լոյ ժանգի հեռացում,  
Փակեցին դուռը և հղկում էին անվերջ-շարունակ

Եվ դարձրին մի պարզ, նման մի գնդի՝ հարթ ու հղկված,  
Բազում գույներից ելք կա անկասկած՝ անգունությամբ,  
Գույնը նման է ամպաքուլայի, մինչդեռ մշուշ է անգունությունը:

Եկավ կանխորոշված օրը: Թագավորը և ուղեկից մասնագետները  
չինացիների և հռոմեացիների արվեստի վարպետության ցուցադրությունը տեսնելու համար դեպի երկու պալատը ուղևորվեցին:

Նախ չինացիների պալատը մտան և չինացի արվեստագետների նախշերի հոգեզմայլ գույներից ու նրբություններից ապշեցին և գովեստի խոսքեր շռայլեցին նրանց վարպետության ու հմտության վերաբերյալ:

Այնուհետև հռոմեացիների պալատը մտան: Երկու պալատների դռները բացվել ու վարագույրները ետ էին քաշվել: Թագավորը և ուղեկիցները տեսան, որ չինացիների պալատի բոլոր պատկերներն ու նախշերը առավել գեղեցիկ անդրադարձել է հռոմեացիների հղկված ու փայլեցրած պալատի պատերին: Այսինքն, բացի այն, որ պալատը հղկվել, փայլեցվել ու մաքրվել էր ամենացանկալի ձևով, այլև իր մեջ անդրադարձրել էր մյուս պալատի զարդանախշերն ու պատկերները: Նրանք ապշեցին հռոմեացիների չափազանց նուրբ ու գեղեցիկ արվեստով, քանզի

Այն, ինչ այստեղ էր՝ ի հայտ էր այնտեղ՝ առավել շռայլ,  
Աչքը ապշանքից տես՝ դուրս էր թռչում իր ակնախորշից:

Այս իմացողության ու հմտության մրցություն հռոմեացի արվեստագետները հաղթեցին, քանզի իրենց արվեստի գեղեցկությունը առանց գույն ու հոտի պարզ ու մատչելի ցուցադրեցին՝ միաժամանակ նրա մեջ արտացոլելով բոլոր գեղեցկությունները:

Ուրեմն, ո՛վ եղբայր, մի՛ մոռացիր սրտի մաքրության մասին:

Սիրտը, որը մեղքերից ու արատներից մաքրվի ու հղկվի, հայելի կդառնա, և իրական ճշմարտությունը կարտացոլվի նրանում: Քող չունի, որ արգելք դառնա սիրեցյալին տեսնելու համար:

Նուրբ հայելիների ջինջ մաքրությունը գովքն է սրտի  
Եվ արժանի է գերազանցապես ամեն մի դեմքի,  
Այն հղկողները տես ազատվել են գույն ու հոտերից,  
Հենց որ տեսնում են նրանք բարի գործ՝ արագ, անվարան,  
Նախշ ու գիտություն թողեցին մի կողմ  
Ու ծածանեցին վեհ իմաստության դրոշը պայծառ,  
Ոչ ոք չի կարող նրանց սրտերին տիրել ու հաղթել,  
Չի խեցի դարձան լի մարգարիտով,  
Եվ առավել են գահից ու օղից ու երկինքներից,  
Միակ Աստծո սուրբ արդարության բնակիչները :

## ՄԱՐԳԱՐԵԻ ՉՐՈՒՅՅԸ ՉԻԴԻ ՀԵՏ

Մի օր առավոտյան, Չիդ անունով մարգարեն, իր համախոհներից մեկին հարցրեց.

- Ինչպե՞ս լուսացրիր:

- Լուսացրի՝ միաժամանակ լինելով բարեպաշտ արարած,-  
պատասխանեց Չիդը:

- Եթե քո սիրտը փարթամ այգու պես փթթել է հավատքից, նրա  
նշանը բացատրիր՝ մեզ,- ասաց մարգարեն:

Չիդը պատասխանեց.

- Օրերը անց են կացնում ծարավ վիճակում /պահք պահելով/,  
իսկ գիշերները Աստծո սիրուց ու կարոտից արթուն են մնում, և այս  
ծրագիրը ինձ ժամանակի և գիշերվա ու ցերեկվա սահմանից այն  
կողմ է տարել և այժմ, ինչպես վահանից անցնող նետը՝ անցել են  
ժամանակի գետից և բնության մյուս կողմում են ոտք դրել: Եր-

կինքն ու տիեզերքը տեսնում են երկնավորների հետ, նկատում են ութ դրախտներն ու յոթ դժոխքները: Ես ճանաչում եմ բոլոր մարդկանց և հասկանում եմ՝ ով է դրախտայինը և ով՝ դժոխայինը, և այս երկու խումբը, ինչպես ձուկն ու օձը՝ ինձ համար ամբողջ

ջովին պարզ են, և իմ հայացքը մարդկանց նկատմամբ այնպիսին է, ասես, հենց այժմ սկսել է դատաստանը, և մարդկանց ներքինը պարզորոշ է դարձել...

Ձիդը այս երկարաշունչ զրույցի ընթացքում մարգարեից թույլտվություն է խնդրում, որ փակագծերը բացի և ներսում եղած ողջ գաղտնիքները, որոնք ձեռք է բերել հավատքի ու ճշմարտության հետևանքով, բացահայտի: Մակայն մարգարեն նրան լռության ու խաղաղության է կոչում:

Ասաց՝ քաշի՛ր սանձը, զի ձիդ տաքացավ:

Միշտ չէ, որ գաղտնաձուլի բացահայտումը Աստծո ցանկությանը հաճո է: Ի վերջո Ձիդի ամոթանքը և մարգարեի հորդորները նրան լռեցրեց:

Մարգարեի սեղմ խոսքը Ձիդին սա էր, որ հավատքի լույսի ներքո հարցումի արժեքը գաղտնաձուլի վերաբերյալ առավել է, քան նրա ներկայացրած արժեքը:

Եթե բժիշկը քեզ, որ հիվանդ ես, ապսպրի, որ մեղը չուտես, և դու ի պատասխան ասես իսկ դու ինչու՞ ես ուտում, սա սխալ և անճիշտ համեմատություն է: Ուրեմն՝ սրանից ավել փակագծերը մի բացիր, քանզի ոչ քեզ և ոչ էլ մարդկանց է հարմար:

Թե բժիշկն ասի՝ ո՛վ դու տառապյալ, հիվանդ ու տկար, չեռու միշտ մնա ու մի՛ կեր մեղր. լսի՛ր դու ուշիմ, Թե պատասխանես դու տգիտորեն, ո՛վ տկարամիտ, Թե ինչու՞ ես դու հապա ուտում մեղր՝ առանց սարսափի, Կասի՛ իր սրտում իմաստուն ազնիվ հեքիմը խոհեմ՝

Ավա՛դ, ինչ արած, սխալ կարծեցիր դու ապուշի պես:

Ձիդը ընդունեց մարգարեի զգուշացումները և լռեց:

## ԳԱՂՏՆԻՔԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ

Հեքիմ Լոդմանը որոշ ժամանակ ծառա էր և ստրուկ: Նրա տերը շատ հարստություն, կալվածքներ ու այգիներ ուներ, ինչպես նաև շատ ծառաներ: Նրա ծառաների մեջ՝ Լոդմանը գորշ ու սևադեմ էր, սակայն իր ազնվությամբ ու իմացությամբ առավել էր բոլորից:

Ստրուկների մեջ Լոդմանն էր միայն մակաբույծի պես, Անչափ խելամիտ, գորշադեմ, ինչպես խոր ու մութ գիշեր:

Եվ քանի որ նրա տերը արտաքինից դատող էր, մյուս ծառաներին գերադասում էր Լոդմանից: Օրինակ՝ նրանց այգի էր ուղարկում միրգ քաղելու և միրգ բերելու համար, սակայն Լոդմանին ավելի նվաստացուցիչ աշխատանքներ էր հանձնարարում /օրինակ ավել անել/: Հենց այս վարվելաձևը պատճառ էր դառնում, որ մյուս ստրուկները նրան ստորադասեն ու երբեմն նեղացնեն:

Մի անգամ ստրուկների տերը միրգ բերելու համար նրանց այգի ուղարկեց: Նրանք գնացին և զանազան մրգեր քաղեցին ու բերեցին, սակայն տիրոջ բացակայությամբ մրգերը կերան, իսկ երբ տերը վերադարձավ և թարմ մրգեր պահանջեց, ստրուկները ստելով ասացին, որ մրգերը Լոդմանն է կերել: Տերը դրանից հետո զայրույթով էր նայում Լոդմանին և նրա հետ չարակամորեն էր վերաբերվում:

Տիրոջն ասացին՝ Լոդմանն է կերել մրգերը բոլոր, Տերն էլ թթվեց ու Լոդմանին նայեց մռայլ ու խոլոր:

Լողմանը զգաց և հասկացավ, տիրոջ անհանդուրժողականության գաղտնիքը: Նա գնաց կալվածատիրոջ մոտ և այսպես առաջարկեց.

- Ո՛վ իմ տեր, մեզ փորձիր: Մեզ բոլորիս բավականաչափ տաք ջուր խմեցրու՛, այնուհետ հեծիր ձին, քչի՛ր դեպի դաշտերը և մեզ հրամայիր, որ քո ետևից վազենք և այս ձևով գաղտնիքը գտիր:

Ո՛վ դու ողորմած, դու մեզ բոլորիս քննի՛ր անխտիր  
Գու՛ ջուր խմեցրու և մեղավորին մեր միջի գտիր,  
Իսկ այնուհետև և այս լայնատարած դաշտ ու ձորի մեջ  
Դու հեծյա՛լ եղիր, իսկ մենք՝ հետխոտն կվազենք անվերջ,  
Դրանից հետո եղելությունը դու հայտնագործիր՝  
Գաղտնագերծելով իսկությունը այս նենգամիտ գործի:

Տերը այս քննությունը իրականացրեց: Ստրուկները բոլոր վազում էին ձիու ետևից: Ովքեր միրգը կերել էին, վազքի հետևանքով նրանց վիճակները այլափոխվեց, և մրգերը փսխեցին, սակայն Լողմանի բերանից, բացի պարզ ջրից, ուրիշ բան դուրս չբափվեց:

Փսխեցին նրանք ու գետնին ընկան տանջահար ու խեղճ,  
Տաք ջուրը քամեց ու նրանց ներսից մրգերը հանեց,  
Հենց որ Լողմանի մաքուր փսխուքը դուրս ելավ փորից,  
Դուրս հորդաց ներսից պարզ ու հստակ ջուր՝ մաքուր բոլորից:

Այսպիսով բացահայտվեց գաղտնիքը, և տիրոջ համար պարզ դարձավ, որ մրգերը ստրուկներն են կերել և ոչ թե Լողմանը: Ստրուկները ամոթահար եղան, իսկ Լողմանը պարզերես դարձավ: Եթե Լողմանի իմաստությունը քողագրկում է գաղտնիքները, հապա ի՞նչ է Աստծո իմաստությունը:

Ուրեմն՝ ուշի՛մ եղիր, քանզի այս ձևով դատաստանի օրը դավաճանները կառանձնանան ազնիվներից, և գաղտնիքները կբա-

ցահայտվեն, թեև մեղավորների համար անցանկալի են այդ բացահայտումները:

Իմաստությունը խոհուն Լողմանի թե գաղտնագերծեց,  
Հապա իմացի՛ր թե ինչպիսին է իմաստությունը Արարիչի մեծ:  
Այսպիսով, ձմեռը գնաց, և սևությունը մնաց ածուխին:

Կռապաշտների տանջանքը եկավ միայն կրակից,  
Քանզի կրակն է փորձարկում քարին:

Այո՛, ոսկերիչը կրակի միջոցով ոսկին առանձնացնում է պղնձից, և կրակն է, որ ցույց է տալիս անազնիվ մետաղների սևերեսությունը:

## ՀՐԴԵՀ

Օմար իբն Խեթաբի ժամանակներում Մադինայում հրդեհ բռնկվեց. կրակը բոցավառվեց և տարածվեց շրջապատում: Քիչ անց տները և թռչունների բները, ինչպես նաև քաղաքի կեսը կրակի ճարակ դարձան, և սաստիկ վտանգը ամբողջ քաղաքին սպառնաց:

Կրակը ընկավ շինություններում,  
Սուրաց բներում ու հավքերի դեմ,  
Կեսը քաղաքի մնաց բոցերում,  
Ջուրը բորբոքում ու վախենում էր:

Մարդիկ չորս կողմից տիկերը ջրով լցնում և նույնիսկ քացախից էին օգտվում՝ կրակը մարելու համար, սակայն կրակը չէր նվազում, այլ ավելի էր բորբոքվում:

Մարդիկ Օմարի մոտ եկան և նրանից օգնություն հայցեցին: Օմարը նրանց ասաց.

-Այս կրակը Աստծո այաթներից է, և ձեր ժլատությունն ու ստորությունն է, որ այս ձեռք է արտահայտվում: Գնացե՛ք և ջրի փոխարեն հա՛ց բաժանե՛ք չքավորներին:

Մարդիկ ասացին.

-Մեր տան դռները բոլորի առջև բաց են, և չենք հրաժարվում ողորմություն տալ:

-Դուք այդ ողորմությունը՝ ըստ սովորության, և փառամոլության, և ինքնացուցադրման համար եք տալիս և ոչ թե հանուն Աստծո,-ասաց Օմարը.- այդիսկ, Աստված այն չի ընդունել: Դուք պետք է իրական ընչազուրկներին ճանաչե՛ք և ձեր օգնությունը չպետք է փառամոլությունից դրդված լինի, և կրոնի նկատմամբ ցուցամոլներին նույն հայացքով մի՛ նայե՛ք, և նրանց հետ եղե՛ք, ովքեր արդար են և հասկացե՛ք. նա ով ցեղական նախապաշարումներից է բարություն անում, մնան է հիմարի, որ ծառայում է մոլեռանդությանը և ենթադրում է, որ Աստծո գոհության համար ինչ-որ գործ է կատարել:

Ունեցվածքը քո սերմ է, իմացիր, դու այն մի նետիր ամեն աղուտում,

Եվ ավազակի ձեռքը մի՛ հանձնիր սուսերը հատու,  
Հավատքի մարդկանց դու զանազանի՛ր չարակամներից,  
Փնտրիր արդարին, ազնիվ ու մեծին՝ նրանց եղիր կից,  
Եվ ամենայն ոք նվիրաբերեց մեծ գործ իր ցեղին,  
Եվ լոկ հիմարն է կարծում, թե ինքն է միակ գովելին:

### ՉԿՆՈՐՍԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳԸ

Մի երիտասարդ նստել էր գետափին: Նա նկատեց մի անձնավորության, որ ձուկ էր որսում այդ նույն գետակում: Նա ենթադրեց, որ այդ մարդը Սողոմոնն է: Մտածեց՝ եթե այս մարդը Սողոմոնն է,

ինչու՞ է այդքան շքեղություն ու վսեմություն ունենալով՝ միայնակ ձկնորսության եկել, իսկ եթե Սողոմոնը չէ, ինչու՞ է Սողոմոնի վեհապանձ դեմքը նրա մեջ անդրադարձել:

Երիտասարդը, որի հոգին սավառնում էր նմանատիպ ենթադրություններում, պատկերացրեց, որ Սողոմոնը նստեց գահին, և այն հատուկ աստանան, որ ելք ու մուտք ուներ Սողոմոնի պալատում, փախուստի դիմեց և սպանվեց Սողոմոնի սրով: Այնուհետև Սողոմոնը մի մատանի իր մատը դրեց: Այդ պահին բոլոր արարածները Սողոմոնին տեսնելու համար նրա շուրջը հավաքվեցին և նույն Սողոմոնի պատկերով երիտասարդին, որին տեսել էր գետափին, նկատեցին հանդիսատեսների մեջ: Երիտասարդը, երբ իր երևակայության մեջ տեսավ Սողոմոնի մատանին, այն միտքն ու ենթադրությունը ջնջվեց մտքից, քանզի, երբ գահի վրա տեսավ իրական Սողոմոնին, այլևս այն միտքը, թե ձկնորսը Սողոմոնն է՝ վերացավ:

Այո, երբ վարագույրները վեր բարձրացան, և մարդը տեսավ իր մտապատկերի անձնավորության իրական գոյությունը, այլևս վերանում է նրա սավառնող երևակայությունը: Սակայն անհայտը և գաղտնաձածուկը, և աստվածային հոգի ունենալու մարդու ձգտումը, և անհայտի վարագույրից այն կողմ եղածին վերահաս լինելը և շոշափելը՝ հավատքի բարձրացման և մարդու հնազանդության համար առավել պատշաճ է:

Ծառա լինելը ցնորության մեջ խրախճանք է լոկ,  
Ամենքից հեռու անհայտության մեջ հրճվանք է անհոգ,  
Քան թագավորին ճոխ գովերգելը թիկնապահությամբ,  
Որ անհամեստ է, քան՝ ամոթալի մի պատիրությամբ,  
Սահմանաեզրին, բացակայությամբ մեծ թագավորի,  
Ներկա լինելու մնան պահպանել հավատամբ խորին,  
Առավել լավ է շահին մոտ լինել ոչ նրանց մնան,  
Որոնք ինքնագոհ ծառայում են միշտ, երբ լինում է նա,  
Եվ շահից հեռու կես գործ անելը լավ է առավել,

Քան նրա առաջ կեղծավորությամբ հազար գործ անել:

Թագավորի փառաբանումն ու գովքը նրա ներկայությամբ անհամեմատելի է նրա բացակայությամբ հարգանքի տուրք մատուցելուն ու խոնարհումին: Հավատարիմ սահմանապահների հարգն ու պաշտոնը, որոնք հարյուրավոր կիլոմետր հեռու են թագավորից

առավել է, քան թագավորի շրջակայքում ներկա գտնվող պահակախմբի: Ուրեմն՝ հեռու վայրում և անհայտության վարագույրի ետևում կիսով չափի պահպանումը առավել է, քան նրա հարյուր հազարի պահպանումը թագավորի ներկայությամբ:

### ԻՍԱՄ ԱԼԻԻ ԱՆԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամական պատերազմներից մեկի ժամանակ բարեպաշտների էմիր Ալի մարգարեն, վրա հասավ անհավատ մի ռազմիկի, սուրը մերկացրեց նրան սպանելու համար: Հենց այդ պահին անհավատը իր բերանի ջուրը ցայտեցրեց այդ վեհագույնի երեսին, նրա, ով մարգարեների հպարտությունն էր և ում ներկայությամբ երկնքի պայծառ լուսինը գետնամած էր լինում:

Այդ պահին սուրբ Ալին հրաժարվեց թշնամուն սպանել և թուրը մի կողմ նետեց:

Ալի մարգարեի համառ ու անզիջում թշնամին ապշեց այդ արարքից, քանզի մտածեց, որ սուրբ Ալին իրեն, որ ենթակա չէ ներման՝ ներել է: Այդիսկ պատճառով հարցրեց մարգարեին:

Սուր- սայր սուսերդ, ասաց, ճոճեցի՛ր գլխիս վերևում,  
Ասա, էլ ինչու՞ դու այն նետեցի՛ր ու ինձանից անցար.  
Ի՞նչ բարություն էր, ասա՛ իմանամ ռազմադաշտի մեջ.  
Ու՞մ ուղենիշն է ուղի հարթեցնել վիշապի համար:

-Դու սուրսայր սուսերդ բարձրացրի՛ր իմ վրա, սակայն այժմ այն մի կողմ ես նետել և ինձ բաց ես թողել՝ ինչու՞: Ով Ալի, ասա ինձ, թեև ռազմի ու պայքարի դաշտ էր, ինձ խղճացիր: Սա ու՞մ վարքագիծն է՝ թշնամու հետ սիրալիք լինել:

-Երբ բերանիդ ջուրը իմ վրա նետեցի՛ր,- պատասխանեց իմամ Ալին,- զայրացա և զգացի, որ եթե այդ վիրակում քեզ սպանեմ, իմ սրտի և իմ խաղաղության համար եմ դա անելու և ոչ թե հանուն Աստծո, այդիսկ պատճառով համբերեցի՛ մինչև զայրույթս մեղմի, և միայն հանուն Աստծո և նրա գոհության համար քեզ հետ մարտնչեմ:

Ասաց՝ես թուրս զարկում եմ միայն հանուն Արդարի,  
Ես Արդարության ծառան եմ հլու և մարմինների լիագորը չեմ,  
Ես արդարության առյուծն եմ հզոր, ոչ թե առյուծը ցանկասիրության,  
Իմ գործերին մեծ իմ մեծ հավատքը վկայակոչեք,  
Երբ իմ երեսին անպատկառորեն թուք շպրտեցի՛ր,  
Հոգիս խլրտաց ու իսպառ կորավ իմ վեհ բնույթը,  
Կեսը իմ եղավ հանուն Արդարի, իսկ մյուս կեսս հանուն իմ եսի,  
Անվայելուչ էր նման մասնակցում արդար այս գործում:

Այսպիսով Իմամ Ալին ամենադժվարին պահերին զգուշավոր էր իր ազնվության ու արդարության մեջ, որպեսզի իր նվիրյալ հոգում ոչ մի ելք չմնա սատանայի համար:

Նա արդարության մարտիկ է և չի հանդուրժում խաբեությունը: Նա միաստվածության և մաքրության մարդ է և երբեք հեթանոսությունն ու երկվորությունը մուտք չունի նրա եության մեջ:

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՎԹԱՐ

## ԾՈՒՌ ՄԱՉԸ

Օմար իբն Խեթաբի ժամանակ մի խումբ մարդիկ ռամազանի\* վերջին օրվա երեկոյան սար բարձրացան, որպեսզի երկնքում տեսնեն նորալուսնի մահիկը: Նրանցից մեկը Օմարի մոտ եկավ և ասաց.

-Ես տեսա նորալուսինը, հրամայիր, որ մուսուլմանները սկսեն ծոմավարտի գիշերային տոնախմբությունը:

-Իմ աչքերը ավելի սրատես են աստղերը տեսնելու համար,- պատասխանեց Օմարը,- ես չեմ տեսել լուսնին,- և ավելացրեց.- այն, ինչ դու տեսել ես, լուսին չի եղել, այլ մի մազ է եղել քո հոնքից, որ կախվել է քո աչքի առաջ, և դու այն դիտել ես որպես նորալուսին: Այժմ ձեռքդ թրջի՛ր և քաշի՛ր հոնքիդ վրա, որպեսզի իրականությունը բացահայտվի:

Նա այդպես էլ վարվեց և այլևս լուսնին չտեսավ: Այո, երևակայության խորշից դու՛րս արի, քանզի խիստ վնասակար է, և միացի՛ր ճշմարտությանն ու իրականությանը:

Հենց որ նա թրջեց իր հոնքերը խիտ, էլ ոչ մի լուսին չերևաց աչքին, Ասաց՝ ո՛վ իմ շահ, տե՛ս, անհայտացավ. չկա էլ լուսին,  
Մի մազ էր ծռվել նրա հոնքերից,  
Որ նրա աչքին երևացել էր նորալուսնի պես,  
Ծուռ մազը հաճախ վարագույրի է մման երկնքի,  
Այդպես կլինի, երբ ամենայն ինչ ծռվի աշխարհում:

\*Մուսուլմանական լուսնային տարվա 9-րդ ամիսը /պահքի ամիս/:

### ՈՐՈՇ ԱՂՈԹՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՎՆԱՍԸ

Մի գող դարանակալեց մի օձ բռնողի և նրա օձերից մեկը գողացավ ու իր հետ տարավ: Օձակալը փրկվեց այդ օձի խայթոցից, սակայն նույն օձը խայթեց գողին ու սպանեց նրան:

Ի դեպ, օձակալի ճամփան անցնում էր այնտեղով, ուր ընկած էր գողի դիակը: Նա ճանաչեց գողին և հասկացավ, որ օձի խայթոցն է նրան սպանել: Նա փառաբանեց Աստծուն, որ իր թշնամին բարության պատճառ էր դարձել:

Օձակալը իր օձի անհայտանալուց հետո շարունակ աղոթում և Աստծուց օգնություն էր հայցում՝ օձը գտնելու համար, սակայն այդ միջադեպից հետո ասում էր. «Տեր Աստված, փառաբանում եմ քեզ, որ իմ աղոթքը և խնդրանքը չբավարարեցիր»:

Ուրեմն, երբեմն Աստված, իր ողորմածությունից ելնելով, չի բավարարում աղոթքները, քանզի աղոթքի բավարարումը աղոթողին վնաս է պատճառելու:

Փառք մեծ Արդարին, որ իմ աղոթքը բարությամբ մերժեց, Եվ այն ինձ համար վնաս համարեց՝ ինչ օգտավետ էր, Բազում աղոթքներ, որ չգիտացված վնաս է ու մահ, Եվ այն չի լսում ողորմածությամբ, միակ մեծ Տերը Նա է, որ գիտի հարմարությունը և մեր բարիքը, Եվ մեր աղոթքը, որ մեզ չարիք էր՝ վերադարձնում է:

### ՀԻՍՈՒՍԸ և ՆՐԱ ՀԻՄԱՐ ՈՒՂԵԿԻՅԸ

Մի հիմար մարդ Հիսուսին ուղեկից դարձավ: Ճանապարհին այդ մարդը ոսկորներով լի մի մեծ խորշ նկատեց, համառությամբ ասաց Հիսուսին.

-Ղու, որ օժտված ես մաքուր շնչով և մեռյալներին կենդանացնում ու հարություն ես տալիս, Բարձրյալի անունից և քո մարգարեության հզորության օգնությամբ այս մահացածներից մեկին հարություն պարգևիր կամ այն վեհագույնի անունը ինձ տու՛ր, որ պեսզի արտասանեմ այս մեռյալների վրա և նրանց կենդանացնեմ:

-Լռի՛ր, դու արժանի չես կրելու այդ անունը,- պատասխանեց Հիսուս մարգարեն,- քանզի անարատությունը, հավատքը, բարի արարքը և մարգարեական անբիծ մաքրությունն է նման արժանիքի պատճառ դառնում, ինչից որ դու գուրկ ես:

Ասաց՝ լու՛ն մնա, ո՛վ դու անպատկառ, դա քո գործը չէ, Քո անլույս հոգուն և անմիտ խոսքին անվայելուչ է, Անձրևից մաքուր շունչ է հարկավոր նման մի գործում Եվ հրեշտակից առավել բարի վարք ու վեհ բնույթ:

Սակայն այդ հիմար մարդը համառում և պնդում է, որ Հիսուսը ընդունի իր խնդրանքը:

Ի վերջո Հիսուսը դիմում է Աստծուն. «Տե՛ր, այս մարդը համառում է. ի՞նչ է ուզածը»: Աստված պատասխանում է. «Նա տգետ և ստոր արարած է, և նրա նպատակը աստվածային չէ»:

Հիսուսը ստիպված մի կույտ ոսկորների վրա տվեց Բարձրյալի անունը: Ոսկորները հավաքվեցին և Աստծո կամոք ու գորությամբ կենդանացան: Սակայն պարզվեց, որ ոսկորները պատկանում են մի առյուծի: Այնուհետև առյուծը դեպի հիմար մարդը հարձակվեց

և նրան հոշոտեց, գլուխը

կերավ, ուղեղը ցրիվ տվեց, սակայն արյունը չխմեց:

Հիսուսը հարցրեց առյուծին.

- Ինչու՞ նրան սպանեցիր:

- Որովհետև դու նրա վրա զայրացար,- պատասխանեց առյուծը:

- Իսկ ինչու՞ արյունը չխմեցիր,- հարցրեց Հիսուսը:

- Իմ բաժինը չէր,- պատասխանեց առյուծը և ավելացրեց,- ո՞վ Հիսուս, այս որսը ուտելու համար չէր, այլ խրատելու:

Ասաց Հիսուսը՝ ինչու՞ դու այդպես նրան պատռեցիր,

Ասաց առյուծը՝ այն բանի համար, որ վրդովվեցիր,

Ասաց Հիսուսը՝ ինչու՞ չկերար արյունը նրա,

Ասաց՝ ուտելը չէր նպատակս, այլ խրատելը:

Հիմար այդ մարդը փոխանակ Հիսուսի հետ ընկերակցելու պատեհ առիթը օգտագործեր և իր մտավոր իմացությունը զարգացներ, գնաց դեպի ոսկորներն ու լեշերը, այսինքն՝ իր մեռած հոգին թողած, քայլեց դեպի փտած ոսկորներն ու լեշերը:

Ո՞վ եղբայր, ուշադիր եղիր, պատեհ առիթի դեպքում քո հոգին կենդանացրու՝ և կատարելագործիր:

Երբ մաքուր աղբյուր գտար նրանում, հող մի՛ լցրու և այն մի՛ արատավորիր և ցանկասիրության ետևից մի՛ գնա, քանզի հոգու և եսի շունը քեզ կհոշոտի, ինչպես այն հիմար մարդուն առյուծը հոշոտեց:

Դու մի ցանկացիր ցանկասիրության կենդանի շանը,

Քանզի շատ վաղուց քո սին մարմնի թշնամին է նա:

## ՍՈՒՖԻՆ\* ԵՎ ՄԵՆԱՍՏԱՆԻ ԾԱՌԱՆ

Միամիտ մի դերվիշ թափառում էր աշխարհում: Մի գիշեր մի խանդալում՝ դերվիշների հավաքատեղում հյուր եղավ: Նա մի ավանակ ուներ, որին կապեց ախոռում, այնուհետև եկավ իր ընկերների մոտ ու նստեց նրանց շրջանում: Նրանք բացեցին իրենց սրտի դավթարները և սկսեցին սավառնել վարքի, ճգնավորության, բանականության ու բարոյական ոգու երկնքում, և հավաքի օղակը վերածվեց կրոնամիստիկական ցնծության ու ոգևորության: Այնուհետև ճաշելու սուփրա բացեցին: Միամիտ դերվիշը հիշեց իր ավանակին և ախոռապանին ասաց.

- Գնա իմ անլեզու հայվանին էլ դարման ու գարի տու՛ր, որ կուշտ լինի:

- Իյա՛, - զարմացած վրա բերեց ծառան,- երկար տարիներ է, որ իմ գործը սա է, ես ինքս գիտեմ, որ պետք է ճանապարհից տեղ հասած անասունին կերակրել:

- Ո՞վ ծառա,- ասաց դերվիշը,- իմ չորքոտանին քանի որ ծեր է և ատամները թուլացել են, մի քիչ էլ ջուր շփիր դարմանի և գարու վրա:

- Իյա՛, ուրիշները այս խոսքերը ինձանից են սովորում, դու ինձ ես սովորեցնում,- պատասխանեց ծառան:

- Ո՞վ ծառա,- ասաց դերվիշը,- փալանը վերցրու՛ և մեջքի վրա եղած վերքի վրա դարման դիր:

- Իյա՛, - վրա բերեց ծառան,- թո՛ղ այդ կարգադրությունները, մինչ այժմ հարյուր հազար հյուր եմ ունեցել. մենք լավ գիտենք մեր անելիքը:

Ասաց՝ Լահուլ\*\*, թո՛ղ խրատներդ,

Քեզ նման հյուրեր հարյուր հազար են,

Բոլորն էլ ուրախ գնացել են գոհ,

Հյուրը թանկագին մերձավորն է մեր ու մեր հոգին է:

Սուֆին ասաց,

- Իմ չորքրտանուն ջուր էլ տուր, քայց նրա ջուրը տաք կաթն է:
- Իյա՛, ես քո խոսքերից ամոթահար եմ լինում,- ասաց ծառան:
- Ո՛վ ծառա, - ասաց դերվիշը,- գարին տալուց ուշադի՛ր եղիր,

որ դարմանը շատ չլինի:

- Պետք չի կարգադրել,- պատասխանեց ծառան:
- Չորքրտանու տեղը քար ու խճերից և գոմաղբից մաքրի՛ր, եթե տեղը թաց լինի, չոր հողով չորացրու՛:

- Միրելի՛ հայրիկ,- ասաց ծառան,- այդքան շատախոսություն մի՛ արա և ինձ՝ անմեղիս, մի՛ թերագնահատիր:

- Մի սանր էլ գտի՛ր և անասունի մեջքը քորի՛ր:
- Չարմանալի է,- պատասխանեց ծառան,- ո՛վ սիրելի հյուր, մի քիչ ամոթ ունեցիր, ես այս բոլորը գիտեմ և կատարում եմ իմ պարտականությունները:

- Անասունի պոչը ավելի կարճ կապի՛ր, որ ոտքերի արանքը չմնա ու վայր ընկնի:

- Իյա՛, այդքան մի՛ խոսիր, ես քեզանից ավելի վարպետ եմ, մի՞թե կաթի մեջ ոսկոր կգտնվի:

Ասաց, ո՛վ հայրիկ, գլուխս տարար, այդքան մի՛ ասա,  
 Կաթի մեջ ոսկոր երբեք չի լինում, դու մի՛ որոնիր,  
 Ես իմ գործերում քեզանից էլ լավ հմուտ վարպետ եմ,  
 Ինձ հյուր են գալիս հազար մի վայրից մարդիկ վատ ու լավ,  
 Ամեն մի հյուրին ես ծառայում եմ արժանավայել,  
 Ես իմ գործի մեջ վարդ, սուսամբար եմ ու այգեպան եմ:

Ինչ-որ միամիտ սուֆին ասաց, ճարտասան ու կեղծավոր ծառան պատասխանեց. «Քեզանից ավելի լավ գիտեմ և ապասրելու հարկ չկա»: Սակայն նա սուֆիի և ոչ մի հանձնարարությունը չկատարեց և իր բանուգործի ետևից գնաց, իսկ դերվիշն էլ քնեց այդ խանդայում: Նա անհանգիստ երագներ տեսավ և իր թշվառ ավանակին գայլերի ճիրաններում գտավ և...

Առավոտ շուտ ծառան ախոռ գնաց, անասունի փալանը մեջքին դրեց, մի քանի հարված հասցրեց անասունին և ախոռից դուրս բռեց, որպեսզի հնարավորին չափ շուտ պատրաստվի գնալու:

Սուֆին չորքրտանու մոտ եկավ, բեռը նրա վրա ամրացրեց և նստելով իր ավանակի վրա՝ դեպի շարժվեց: Սակայն սոված ու ծարավ թշվառ ավանակը այնքան տկար էր, որ շարժվելու ուժ չուներ և ճանապարհին շարունակ ընկնում էր: Մարդիկ օգնում էին, որ բարձրանա ու առաջ շարժվի:

Սուֆին, որ զգացել էր թե ինչն է անասունի տկարության գաղտնիքը, ներկաներին ասաց. «Իմ թշվառ չորքրտանին խաբեբա ծառայի ձեռքն է ընկել: Դարման ու գարի և ջուր նրան չի հասել, որպեսզի քայլել կարողանա: Ծառան միայն խոսք է կերակրել անասունին:

Ուրեմն, ո՛վ եղբայր, ուշիմ եղի՛ր և ինքդ քեզ հենվի՛ր և ինքդ քո գործին հետևի՛ր և մի՛ վստահիր խաբեբա ու երկերեսանի մարդկանց»:

Ինչպես մի գիտակ՝ պահպանի՛ր վարկը պայծառ աստղերի,  
 Անտերությունը ավելի լավ է, քան տմարդների սեթևեթանքը,  
 Մարդկանց հողի մեջ դու ոչ մի անգամ մի՛ բնավորվի,  
 Դու քո գործերը արա անտրտունջ, ոչ թե ուրիշի,  
 Ո՛վ է օտարը, քո հողից շինված նվաստ մարմի՞նը,  
 Նրա համար է գուր ու անիմաստ քո տրտմությունը:

Այո՛, ստոր մարդիկ այդ շողոքորթ ծառայի նման, / գծանախշերով հմայիչ օձի պես/ օտար են և չպետք է նրանց հենվել: Զո ցանկասիրությունը նույնպես օտար է, նրան սրտով մի՛ կապվիր, քանզի քեզ թախծի ու տրտմության անդունդը կնետի: Մշտապես իմացի՛ր, որ քո մարդկայնությունը քո մտքի ու խելքի համար է և ոչ թե քո հողեղեն մարմնի, սակայն չպետք է մտքի գուլալ ակնադբյուրը հողեղեն մարմնի ցանկություններով ապականել, քանզի մտքի ծաղիկը փուշ կդառնա:

Ո՛վ դու իմ եղբայր, դու հենց այս միտքն ես,  
Մնացյալը տես՝ դու լոկ ոսկոր ես,  
Թե միտքդ ծաղիկ, դու ծաղկանոց ես,  
Թե լինես դու փուշ՝ հնոցի ցախ ես,  
Թե վարդաջուր ես՝ դեմքեր կցողեն,  
Թե միզաջուր ես՝ քեզ դուրս կվանեն:

.....

\*

Սուֆի, դերվիշ, միստիկ:

\*\* Շիլ աչք, շաշ, ծուռ տեսնող:

### ԵՐԿՆԱՅԻՆ ԹՈՉՈՒՆԸ ԱՂԲԱՆՈՑՈՒՄ

Թագավորի պալատում մի բազե կար: Այդ բազեն բոլոր տեսակի բարիքներից ու հնարավորություններից անպակաս էր: Մի օր բազեն պալատից փախավ և գառամյալ մի պառավի տուն մտավ: Պառավը տեսավ հմայիչ բազեին, նրան բռնեց, ոտքերը կապեց, թևերը մկրատեց, մագիլները կտրեց և պալատի երկնեանց ուտեստների փոխարեն նրա առաջ մի քիչ դարման լցրեց:

/Այս առակապատումի մեջ թագավորը հանդես է գալիս որպես Աստված/:

Թագավորը, որ այդ բազեի տերն էր, մինչև օրվա վերջը փնտրեց բազեին և, ի վերջո, նրան գտավ գառամյալ պառավի փոքրիկ տան մեջ: Տեսավ՝ փոշին ու տան մուրը իր գեղեցիկ բազեին գորշ ու աղոտոտ էին դարձրել: Շատ խղճաց նրան, արտասովեց և իր բազեին ասաց.

- Դու ինչպե՞ս դրախտից գնացիր դժոխք, մի՞թե չգիտես, որ դժոխայիններն ու դրախտայինները համահավասար չեն:

Սա է նրա պատիժը, ով թագավորից փախչի և պառավի անշուք տունը գնա:

Ո՛վ մարդ, ուշիմ եղիր և աչալուրջ, դու հենց այն հմայիչ և վեհ վարքով բազեն ես: Երկնային այգու հավքն ես և հողի աշխարհից

չես, ուշադիր եղիր, որ հատիկը և թակարդը քեզ չներբաշեն իրենց մեջ և աղբանոցի հետ կապվածությունը քեզ չզրկի աստվածայինից:  
Եվ ըստ Հաֆեզի՝

Քեզ են ձայն տալիս երկնքի հեռու բարձրագույն գահից,  
Չգիտեմ,ավա՛ղ, ի՞նչն է քեզ պահում այս թակարդի մեջ:

Բազեն, որ խիստ զղջացել էր իր արարքից, սկսեց ներում հայցել և թագավորի մեծահոգությունը խնդրել.

Բազեն փետուրն իր բարի արքայի ձեռքին էր քսում  
Եվ ասում էր լուռ՝ ես մեղք եմ արել, հայցում եմ ներում,  
Էլ ու՞ր հառաչի, ստորը անարգ ո՞րտեղ արտասովի,  
Եթե չընդունես, ո՛վ դու ողորմած, բարիքից բացի  
Ու՞ր գլուխը իր պիտի վայր դնի ամոթահարը,  
Բացի քո շեմից՝ ով դու ողորմած, թողություն տվող:

Թեև աշխարհը, այս գառամյալ պառավը, կտրեց իմ մագիլները, սակայն եթե դու իմ պաշտպանը լինես, կքանդեմ արևի դրոշը: Եթե դու իմ հովանավորը լինես, կյանքի անիվը քո տիրապետության տակ կղնեմ: Եթե դու ինձ ուժ պարգևես, լեռը տեղից կշարժեմ, և եթե ինձ գրիչ տաս, բոլոր գիտությունները կկործանեմ և...

Թեև մագիլն իմ կտրատված մնաց, դու եղի՛ր ինձ տեր,  
Ես արեգակի պայծառ դրոշը կպոկեմ իսպառ,  
Թեև գնացին իմ փետուրները, բայց եթե շոյես,  
Կյանքի անիվը շատ քիչ կխաղա իմ խաղերի մեջ,  
Եթե մեջք լինես դու ինձ այսուհետ, լեռը կշարժեմ,  
Եթե դու ինձ տաս գիր ու գրչեղեգ, գիտությունները ես կկործանեմ:

Այլապես ես ավելին չեմ քան այն մոծակը, որ Նեմրուդի

թախտն ու գահը իրար խառնեց և ավելին չեմ Էբարիլից, որ թշնամու փղերը ցիրուցան արեց: Ապաշխարանքը ընդունվեց, և նա արտասվելով ու զղջալով՝ գնացած ջուրը ատվակ դարձրեց:

Ողորմությունն իմ դադարեցված է քաղցր այն լացերից,  
Քանզի հարբած է հողի ալիքը ողորմությունից,  
Մինչև չլացի ամպը սևաթույր, մարգը կծպտա՞,  
Մինչև չլացի մանուկը քաղցած, կաթը կեռա՞:

### ՀԱԼՎԱ ՎԱՃԱՌՈՂ ԵՐԵԽԱՆ

Հին ժամանակներում Շեյխ Ահմադ Խազրուի անունով մի բարյացակամ ու մեծահոգի մարդ էր ապրում: Նա մարդկանց ծառայելու և նրանց կյանքը բարելավելու համար շատ էր ջանք թափում և քանի որ հասարակության մեջ վստահություն էր վայելում, մարդկանցից պարտք էր վերցնում և թշվառներին վարկ էր տալիս: Ողորմած Աստված մեծ դժվարություններով փակում էր նրա պարտքերը: Եկավ մի ժամանակ, երբ նրա պարտքը չորս հարյուր դինարի հասավ:

Ասաց մարգարեն, որ շուկաներում  
Երկու հրեշտակ անվերջ ձայնում են,  
Տե՛ր, պահպանի՛ր դու կերակրողներին,  
Տե՛ր, կործանի՛ր դու ընչաքաղցներին:

Եկավ մի այնպիսի օր, երբ Ահմադ Խազրին իր մեջ զգաց մահվան նշանները: Պարտքատերերը նույնպես իմացան և նրա շուրջը

հավաքվելով՝ պահանջեցին իրենց պարտքերը:

Շեյխը նրանց ասաց. «Օգնե՛ք ընչագուրկներին և վատատես մի՛ եղեք Աստծո բարեհաճությանն ու ողորմությանը...»:

Սակայն պարտքատերերը սպասում էին իրենց պարտքերի մարմանը:

Շեյխը նրանց ասաց. «Աստծո համար հեշտ է, որ ինձ չորս հարյուր դինար հասցնի, որպեսզի բոլոր պարտքերս փակեմ»:

Սակայն Շեյխը այնքան ձեռնունայն էր, որ նույնիսկ մի կտոր հաց չունեի հյուրերի առաջ դնելու համար: Այդ պահին հանկարծ փողոցից լսեց հալվա վաճառող մի երեխայի ձայն: Ծառային ասաց՝ գնա և այդ երեխայի ամբողջ հալվան առ ու բեր, որպեսզի հյուրերին հյուրասիրեմ:

Ծառան գնաց հալվա վաճառող երեխայի մոտ և նրա հալվայի սկուտեղը կես դինարով գնեց: Երեխան հալվայի սկուտեղը բերեց ու դրեց հյուրերի առաջ: Հյուրերը ամբողջ հալվան կերան: Երեխան իր դատարկ սկուտեղը վերցրեց և շեյխից պահանջեց իր կես դինարը:

Շեյխ Ահմադը ասաց.

-Առայժմ փող չունեմ և պարտք եմ և մահվան մահճում եմ, ինձ ժամանակ տու՛ր:

Երեխան իր փայտե մեծ մատուցարանը գետնին զարկեց և սկսեց լացել ու հառաչել: Նա և բոլոր պարտքատերերը հոնգուր-հոնգուր լալիս և իրենց պարտքն էին պահանջում, և Շեյխ Ահմադը նրանց ասում էր. «Համբերե՛ք, Աստված իր բարեհաճությամբ ու ողորմածությամբ իմ պարտքերը կփակի»:

Սակայն հալվա վաճառող երեխան արտասվելով ասում էր.

-Ես մի վարպետ ունեմ, որ եթե ձեռնունայն գնամ նրա մոտ, ինձ կապանի:

Շեյխ Ահմադը ամենայն խաղաղությամբ հույսով լի էր աստվածային նվիրատվությանը և ասում էր՝ համբերե՛ք, Աստված իմ պարտքերը կփակի:

Հանկարծ ծառան տուն մտավ և նվիրատված սկուտեղը դրեց

Շեյխի առաջ: Մի առատաձեռն ու մեծահոգի մարդ լսել էր, որ Շեյխը գտնվում է պարտքատերերի շրջափակման մեջ, և Աստված նրա սիրտը փափկացրել էր, որպեսզի ինչ-որ գումար Շեյխին ուղարկի:

Շեյխը սկուտեղի մեջ դրված փաթաթած թուղթը բացեց և չորս հարյուր ու կես դիմար գտավ նրա մեջ: Նա իր բոլոր պարտքերը այդ նվիրատվությամբ փակեց: Պարտքատերերը ամոթահար Շեյխին խնդրեցին, որ նրանց ների: Շեյխը նրանց բողբոխ ներեց և ասաց. «Ես Աստծուց ցանկացա, որ իմ պարտքերը փակի, տեսաք, որ փակեց և այժմ խաղաղ հոգով կողոկոկվեմ հանդերձյալ աշխարհ: Այո՛, մինչև արցունք չթափի հալվա վաճառող երեխան, Աստծո ողորմության ծովը չի եռա»:

Մինչև չլացի հալվա վաճառող փոքրիկ երեխան,  
Չի եռա ծովը ողորմած Տիրոջ ողորմածության:

Ո՛վ եղբայր, ուշի՛ մ եղիր և աչալուրջ, երեխա ասելով՝ խոսքը քո աչքի բիրն է, ցանկություններդ կատարվելու համար, այդ բիրը Աստծո շեմի առաջ լացացրու:

Թե ցանկանում ես քո խնդրանքները շուտափույթ լուծվեն,  
Եվ գրկված, թշվառ փուշ ու տատասկը ծաղկի վերածվեն,  
Թե ցանկանում ես պատվո պատմուճան քեզ էլ շնորհեն՝  
Աչքի մանկանը դիակի վրա դու պիտ լացացնես:

### **ՉԱՀԵԴԻ\* ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ**

Մի գահեղ շատ էր արտասավում ու լալիս: Ընկերը նրան ասաց.  
«Այդքան մի՛ արտասվիր, քանզի աչքդ կվնասես և կկուրանաս»:

Չահեղը պատասխանեց. «Եթե իմ աչքերը ճշմարտության վա-

յելությունը չտեսնեն, ավելի լավ է կուրանան»:

Եվ եթե քրիստոնեական ոգին մարդու էության մեջ լինի, ոչ մի սարսափ չկա արտաքին աչքերի կուրությունից, քանզի նա ճշմարտությունը տեսնող սրտի երկու աչք կունենա:

Այժմ, երբ նման հոգի նման շնորհով գոյություն ունի մարդու էության մեջ, այն բարոյակրթի՛ ՚ր ու դաստիարակի՛ ՚ր, որպեսզի տեսնես ամեն ինչ, սակայն եթե մարդկային հոգուց վավաշուտ ցանկասիրություն պահանջես, նման է Մովսեսից պահանջվող փարավոնին գործերին, որը այս դեպքում չի պահանջում և պիտանի չեն արտաքին գույգ աչքերը:

Քրիստոնեական հոգին ներկա է քեզ հետ շարունակ,  
Նրանից ուզի՛ ՚ր դու հաղթանակներ, զի լավ պաշտպան է,  
Մարմնական նվաստ դու կյանք մի՛ փնտրիր քրիստոնեությունից,  
Փարավոնական տհաս ցանկություն գուր մի՛ պահանջիր  
մովսիսականից:

.....  
*\*ճգնավոր, մենակյաց, բարեպաշտ:*

### **ԱՌՅՈՒԾԸ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ**

Մի գյուղացի իր կովն ախոռի պարանին կապեց: Նրա բացակայության ժամանակ՝ կեսգիշերին, մի առյուծ գոմ մտավ, սպանեց ու հոշոտեց կովին և կանգնեց նրա տեղում: Անտեղյակ ամեն ինչից՝ գյուղացին մթության մեջ գոմ մտավ և մոտեցավ իր կովին զննելու: Խավարի մեջ սովորության համաձայն սկսեց շոյել նրա մեջքը, ականջները և այլ մասերը՝ ենթադրելով, որ իր կովն է, սակայն իրականում շոյում էր վայրագ առյուծի մարմնամասերը:

Առյուծը ինքն իրեն ասաց. «Եթե ցերեկ լիներ և այս մարդը գի-

տակցեր, թե ինչ կենդանու հետ է շփվել, սարսափից ու վախից լեղապատառ կլիներ»: Սա գյուղացու պարզամտությունն է, որ առյուծին իր կովի տեղն է ենթադրում:

Ասաց առյուծը՝ թե առատ լիներ լույսը այս գոմում,  
Լեղին կճաքեր ու սրտից արագ արյուն կթափվեր,  
Այսպես համարձակ նա առյուծին էր շարունակ քորում  
Մութ գիշերվա մեջ ու ենթադրում, որ դա իր կովն է:

Ով դո՛ւ, կույր ամբարտավան, դու, ուշք չդարձնելով Ալլահին՝  
գոյությունների արարողին, նրան մի՛ ծաղրիր ու ծանակիր, այլ  
այդ ճանապարհին հետագոտի՛ր ու փնտրի՛ր, որպեսզի հետագո-  
տությունների լույսի ներքո ճաշակես ճշմարտության համը և իրա-  
կանությունը լույսի ներքո շոշափես և ոչ թե խավարում, որ ցանկա-  
լի, բայց սխալ մեկնությունների պատճառ չդառնաս:

Մի՞թե այդպես չէր, երբ Մովսեսը Աստծո անունը արտասանեց,  
և Թուր լեռը կտոր-կտոր եղավ, և Հիսուսը, Աստծո անունը արտա-  
սանելով, հարություն տվեց քայքայված մեռյալին:

Եթե դու ևս, ճշմարտությունից ելնելով, քայլես այդ ուղղու-  
թյամբ՝ բնության բարձունքներում կքայլես և քո ճշմարիտ հոգու  
մունետիկը կլինես:

Թե ի գորու ես իրազեկ լինել չօրինակելով՝  
Անհասցե, անվայր դու ավետաբեր մի հրեշտակ ես:

### «ԷՇԸ ԳՆԱՅ» ԵՐԳԸ

Դերվիշ մի ճամփորդ, իր երկարականջին հեծած, հասավ մի  
խանդա /դերվիշների հավաքատեղի/: Իր երկարականջին հանձ-  
նեց ծառային և միացավ խանդայի ուղևորներին: Մոված դերվիշ-

ները, պատեհ առիթը օգտագործելով, ճամփորդ դերվիշի ավանա-  
կը նրա բացակայությամբ վաճառեցին և ստացված գումարով քե-  
ֆի և ուրախության սեղան բացեցին և ճամփորդ դերվիշին էլ հրա-  
վիրեցին իրենց քեֆին: Ընթրիքից հետո իրար շուրջ օղակվեցին և  
ճամփորդ դերվիշի հետ սկսեցին երգել ու պարել:

Հենց որ սկսեց խնջույքն ու քեֆը սկզբից մինչ վերջ,  
Գուսանն սկսեց մի երգ հանրահայտ ու առանց դադար,  
Երգը սկսեց՝ «Էշը գնաց», «Էշը գնաց»:  
Ջերմ ու խնդալի այդ երգի խոսքից ընկերացան,  
Ջերմությունից այդ նրանք պարեցին մինչև լուսաբաց,  
Ծափ զարկեցին ու երգեցին՝ «Էշը գնաց», «Էշը գնաց»:

Միամիտ և ամեն ինչից անտեղյակ այդ դերվիշը, ինքն էլ նրան-  
ցից օրինակ վերցնելով, միացավ նրանց երգ ու պարին:

Օրինակելով նրանցից երգը՝ այդ դերվիշն էլ  
Սկսեց երգել «Էշը գնաց» այդ երգը ուրախ:

Գիշերը լուսացավ, և առավոտյան նրանք իրարից բաժանվե-  
ցին, և ճամփորդ դերվիշը գնաց իր միակ ուղեկից-անասունի  
ետևից, սակայն իր ավանակին չգտավ գոմում: Հարցրեց ծառային,  
ծառան ասաց. «Մի՞թե չգիտես, որ երեկ գիշեր քեզ հետ պարողնե-  
րը այն վաճառեցին և նրա գումարով խնջույք կազմակեպեցին»:

Դերվիշը ասաց. «Ինչու՞ ինձ չասացիր»:

Ծառան երդվելով ասաց՝ մի քանի անգամ քեզ մոտ եկա և ասա-  
ցի եղելությունը, իսկ դու նրանց հետ միաձայն տավրդի ու նվագա-  
րանի նվագակցությամբ երգում էիր. «Էշը գնաց, էշը գնաց»: Եվ ես,  
վստահ լինելով, որ դու տեղյակ ես եղելությունից, տուն մեկնեցի:

Ասաց՝ երդվում եմ, ես բազում անգամ եկա քեզ ասեմ,  
Որ քեզ իրազեկ դարձնեմ ի վերջո գործի բնույթը,

Դու ասում էիր երգով շարունակ՝ «Էշը, տես, գնաց»:  
Բողոքից ուժգին, առավել զվարթ դու էիր երգում,  
Ենթադրեցի, որ դու տեղյակ ես եղելությանը,  
Եվ պատահարից գոհ ես դու անչափ և մարդ ես խելոք:

Դրանից հետո դերվիշը գլխի ընկավ, թե ինչ է պատահել և իր կույր նմանակելուն բազում անեծք ուղղեց:

Ասաց՝ շատ ուրախ նրանք այդ երգը դալալում էին,  
Ես էլ տարվեցի, ոգևորվեցի այդ երգի խոսքով,  
Այդ ստոր մարդկանց նմանակումը տե՛ս, կործանեց ինձ,  
Թող երկու հարյուր անեծք ու պատիժ իմ գլխին թափվի,  
Հմուտ բացառիկ նմանակողներ կույր ու ապարդյուն,  
Որ խայտառակեցին հանուն մի կտոր հացի:

Ո՛վ եղբայր, անփույթ մի՛ եղիր, քանզի ազահությունն ու ընչա-  
քաղցությունը այն միամիտ ճամփորդին հմայեց և նրանից խլելով  
զանազանելու կարողությունը՝ ստիպեց նմանակել: Իմացիր, որ  
հարյուրավոր դաստիարակչական հեքիաթներ չեն ազդելու ընչա-  
քաղցին:

Այն, որ դերվիշը կույր ազահությամբ շեղվեց իր ճամփից՝  
Մնաց վնասված և գործ եղավ կիսատ ու կորած,  
Նա, ով կլինի ընչաքաղց, ազահ, նա կկակազի,  
Այդ երբ է եղել սրտի աչքը լույս աչքածակությամբ,  
Հարյուր հեքիաթ էլ եթե նա լսի՝ բութ ընչաքաղց է,  
Եվ ոչ մի հարցում նա չի ըմբռնի ազահ ունկերով:

## ԱԳԱՀ ՈՒՂՏԱՏԵՐԸ և ՄՆԱՆԿԸ

Մի չքավոր ու սննկացած մարդ հանցագործության պատճառով  
բանտ է ընկնում: Նա բանտում ևս չէր հրաժարվում հանցագործու-  
թյունից և գողանում էր բանտարկյալների հացն ու ճաշը: Ի վերջո  
բանտարկյալները բողոքեցին դատավորին: Դատավորը նրան  
դուրս հանեց բանտից և իր դատարանում դատելուց հետո նրան  
սնանկացումի դատապարտեց, այսինքն՝ հրամայեց, որ այլևս ոչ ոք  
նրան ապառիկ և պարտք չտա, քանզի նա ոչ մի հարստություն և  
ուժ չունի իր պարտքերը փակելու համար: Այնուհետև Իլ և Աշայեր  
ցեղախմբից մի քուրդ ուղտատիրոջ հրամայեց, որ նրան ուղտին նս-  
տեցրած պտտեցնի փողոցներում, շուկաներում և հրապարակնե-  
րում և նրա սնանկացման լուրը հասցնի մարդկանց ականջներին:

Թաղ առ թաղ շրջեք ու հայտարարեք սնանկացումը,  
Ընչազրկության մասին թմբուկը դուք ամենուրեք թմբկահարեք,  
Թող ոչ ոք նրան ապառիկ ոչինչ չտա, ծախի,  
Թող ոչ մի գրոշ պարտք չտա նրան ոչ ոք այսուհետ:

Ուղտատերը, նրան ուղտի վրա նստեցրած, ամեն տեղ պտտեցրեց և  
նրա սնանկացման մասին ամենուրեք հայտարարեց:

Շրջագայությունը ավարտվեց, և գիշերը վրա հասավ, և ուղտա-  
տերը նրան իջեցրեց ուղտից և ասաց. «Դու առավոտից մինչև հի-  
մա նստել ես իմ ուղտի վրա, այժմ իմ նեղության վարձը տու՛ր: Քե-  
զանից գարի չեմ ուզում, գոնե ինձ դարմանի փող տուր, որ ուղտիս  
համար դարման գնեմ»: Մնանկը նրան ասաց. «Ինչ հիմար մարդ  
ես, առավոտից մինչև հիմա իմ սնանկ լինելու թմբուկի ձայնը լսե-  
ցիր և նրա հետ ձայնակցեցիր, թմբուկի ձայնը խլացրեց ամբողջ  
աշխարհը, սակայն դու դեռևս չես ըմբռնել, թե դա ի՞նչ ձայն էր, և

չքավորիցս վարձ ես պահանջում»:

Սնանկացումիս թմբուկի ձայնը յոթ երկինք հասավ,  
Իսկ դու դեռ ոչինչ այդ միջադեպի մասին չիմացար,  
Մինչև ուշ գիշեր հայտարարեցին, իսկ ուղտատիրոջը  
Չայնը չհասավ, քանզի նա լի էր, լի ազահությամբ:  
Աստծո կնիքը կա լսողության ու աչքի վրա,  
Փողի ետևում բազում դեմքեր կան և բազում ձայներ:

Այո՛, տգեղ վարքը, ինչպես նաև ընչաբաղդությունը մարդուն այս-  
պես խլացնում ու կուրացնում է՝ և էության դեմքի քողն է դառնում:

Քանզի դու սրտին ինչ ցանկություն էլ տրամադրես,  
Քեզնից ինչ-որ բան իրենց խորքերում թաքուն կտանեն:

Եթե սիրտդ ինչ-որ նյութականի հետ կապես, նույն չափով քո  
մարդկային բարձր արժանիքները քեզանից անջատվում և բա-  
ժանվում են:

### ՀԵՌԱՅՈՒՄ ԵՐԱՎԿԱՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Մի օտարական տուն էր փնտրում, որ բնակվի: Ընկերը նրան մի  
ավերված տուն տարավ ու ասաց. «Եթե այս տունը տանիք ունե-  
նար և կողքին մի այլ սենյակ և եթե ընդարձակ ու մեծ լիներ՝ դու և  
ընտանիքդ մեր հարևանությամբ կապրեիք այս տանը, և հյուրերի  
համար էլ տեղ կլիներ»:

Օտարականը ասաց. «Եթե» ասելով բան դուրս չի գա: Այո, ըն-  
կերների հետ հարևանությունը երջանկություն է, սակայն «Եթե»-  
ով, «Երանի»-ով, «Գուցե»-ով և նմանատիպ բառերով մարդու հա-  
մար տուն չի ստեղծվի»:

Ասաց՝ իհարկե, ընկերների մոտ լավ է ավելի,  
Բայց ախր, ջանս, հնարավոր չէ ապրել «Եթե»-ում,  
Համայն աշխարհը ուրախությանը տալիք ու պարտք են  
Եվ խաբեությամբ կեղծ ուրախության կրակի մեջ են:

Այսինքն, երբ ցանկանում ես ուրախ կյանք, երանի-ով, եթե-ով  
և ենթադրության ուրախությամբ, բացի գրկանքի կրակից, ուրիշ  
ոչինչ չես ստանա: Դուրս արի կարծեցյալի ենթադրության ու  
երկմտանքի անցքախորշից և իրականությունն ըմբռնելով՝ կյանքդ  
ներդաշնակ դարձրու, և եթե աստվածային լույսը շողաց սրտիդ՝  
այն ենթադրությամբ ու կասկածամտությամբ մի՛ խառնիր:

Տե՛ս, լույսը շողաց իրականության քո սրտին մաքուր,  
Առանց հմտության ոսկին մի՛ վանիր քո մտքից տհաս:

### ՄԱՅՐԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի մարդ գայրացավ և բռունցքի ու դաշույնի հարվածով սպա-  
նեց մորը: Մի անձնավորություն հարցրեց նրան.

-Ինչու՞ չպահպանեցիր մայրական հարգանքն ու իրավունքը, և  
խիղճդ այն աստիճան կորցրիր, որ սպանեցիր մորդ:

-Մայրս անառակ կին էր,-պատասխանեց մարդը,- նրան մի օ-  
տարականի հետ տեսա և իմ պատիվը պահպանելու համար նրան  
սպանեցի:

Մարդը նրան ասաց.

-Ո՛վ անամոթ, ինչու՞ մորդ փոխարեն այն այլանդակ մարդուն  
չսպանեցի ՚ր:

Մարդասպանը պատասխանեց.

-Եթե վատ արարք կատարող մարդուն սպանեի, հարկավոր  
կլիներ ամեն օր մի մարդու սպանել և շատ արյունահեղություն կլի-  
ներ:

Ասաց՝ դու նրան լուռ սպանի՛ր, ո՛վ հզորագոր,  
Ասաց՝ ուրեմն Աստծո՞ւ ամեն օր մի մարդ սպանե՞մ,  
Ես սպանեցի ու ինձ փրկեցի արյունից մարդկանց,  
Ավելի լավ է նրա հառաչը, քան թե այն մարդկանց:

Ո՛վ եղբայր, անփույթ մի՛ եղիր, քանզի քո նաֆար\* , ինչպես անմաքուր այն մարդը, ապականությունների կենտրոն է: Ես-ը սպանելով՝ դու ձեռք կբերես երջանկությունը:

Դա քո նաֆան է այն վատահամբավ մայրը անառակ,  
Եվ ապականում է նա ամենուրեք և ամենայն ինչ.  
Ուրեմն՝ սպանի՛ր նրան անհապաղ, զի այդ ստորից,  
Ամեն պահ մեկ այլ յարի ես ձգտում ու չունես հանգիստ,  
Նրա պատճառով քացր այս կյանքը թույն է ու ամոթ,  
Վե՛ճ է ու կռիվ, թե այլ մարդկանց հետ, թե ճշմարտության:

\*Հոգի, ներքին աշխարհ, ցանկություն, կիրք:

### ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ԵՐԿՈՒՒՍՏՐԿՈՒՀԻՆԵՐԸ

Մի թագավոր երկու ստրկուհի գնեց: Նրանցից մեկը գեղեցիկ և ուշիմ էր, իսկ մյուսը՝ սևացած ատամներով, տգեղ ու բթամիտ, որի բերանից դժբախտաբար նաև վատ հոտ էր գալիս:

Թագավորը, լինելով բանիմաց և փորձառու, իրենից չվանեց երկրորդին, այլ յուրաքանչյուրին մյուսի բացակայության ժամանակ քննության ենթարկեց, որպեսզի նրանց ավելի լավ ճանաչի:

Թագավորը մեկին՝ Քյամալ\*, իսկ մյուսին Ջամալ\*\* անվանեց:

Թագավորը Ջամալին բաղնիք ուղարկեց և նրա բացակայության ժամանակ գրուցեց Քյամալի հետ: Նրան հարցրեց.

- Ինչպիսի՞ մարդ է քո ընկերուհին, որին բաղնիք ուղարկեցի:

- Նա չափազանց լավ, սիրալիր և հավատարիմ անձնավորություն է և բարի վարք ունի,- պատասխանեց Քյամալը:

- Ինչպե՞ս ես նրան փառաբանում,- ասաց թագավորը,- երբ նա քո բացակայության ժամանակ բամբասում էր քեզանից:

- Ինչ որ ասացի,- պատասխանեց Քյամալը,- Ջամալը շատ լավ անձնավորություն է:

Նա, ով կտեսնի իր թերությունը ի սկզբանե,  
Իրեն ուղղելու հոգսից նա երբեք չի ազատվելու:

Թագավորն այս անգամ Քյամալին բաղնիք ուղարկեց և Ջամալի հետ գրույցի բռնվեց: Ջամալը սկզբից մինչև վերջ բամբասեց ու վատաբանեց Քյամալին:

Այն ստրուկուհին փրփրակալեց, դեմքը կարմրեց,  
Մինչ բանբասանքի ալիքը անցավ չափ ու սահմանը:

Թագավորն այս քննությամբ հասկացավ, որ Քյամալը թեև տգեղ է, սակայն բարեսիրտ ու ազնիվ հոգի ունի: Մինչդեռ Ջամալը թեև գեղեցիկ է, սակայն այլանդակ և գորշ հոգի ունի: Նա Ջամալին ասաց.

-Այժմ հասկացա, որ չնայած Քյամալի բերանից վատ հոտ է գալիս, սակայն հոգին և էությունը բուրումնավետ է: Իսկ քո հոգին ու մարմինը նեխած ու անմաքուր է: Ուրեմն, դու ինձանից հեռու՛ մնա: Իսկ Քյամալը քո ավագն ու հրամանատարն է: Այսուհետ դու պիտի նրան ենթարկվես:

Ասաց՝ իմացա քեզ անմիջապես, դու վատերից ես.  
Հոգիդ նեխած է, իսկ ընկերոջդ բերանն է այդպես,  
Ուրեմն հեռու՛ նստիր ինձանից, ո՛վ նեխած հոգի,  
Մինչ նա կլինի ավագանին քո և քո մխիթը,  
Ուրեմն իմացի՛ր, որ հոգեզմայլ գեղեցիկ դեմքը

Չարանենգ հոգով ու վատ էությունը չարժի մի գրոշ,  
Թե լիներ նվաստ ու անհաճո դենք, բնավ դա հոգս չէ,  
Զի վարքն է բարի և էմիրի մոտ դա է հարգալի:  
Ի՞նչ սիրախաղ է գունամախշի հետ շքեղ սավորի.  
Թո՛ղ նախնի ու գույնը սիրուն սավորի և ջուրը որոնի՛ր,  
Արտաքին տեսքը շուտ կանեանա, դու լա՛վ իմացիր,  
Իմաստությունն է այս փուչ աշխարհում հավիտենական:

Այսպիսով Քյամալը իր բարի հոգու համար թագավորի պալատի երևելի դեմքերից եղավ, սակայն Ջամալը, որ հպարտ էր իր արտաքին տեսքով, հեռացվեց թագավորի պալատից:

.....  
\* կատարելություն:  
\*\* Գեղեցկություն:

### ԾԱՐԱՎ ՄԱՐԴԸ ԲԱՐՁՐ ՊԱՐՍՊԻ ՎՐԱ

Ջրանցքի դեմ բարձր մի պարիսպ էր գտնվում: Ծարավ մի մարդ նստել էր պարսպին: Նա շատ էր ծարավել, և բերանը անջրությունից չորացել էր, սակայն բարձր պարիսպը խանգարում էր, և ձեռքը ջրին չէր հասնում: Նա իրեն նմանեցնում էր ափ նետված ձկան, որի հայացքը սևեռվել է ջրին:

Ջրից արգելքը այն մեծ պարիսպն էր,  
Ջրի կարոտից, ինչպես մի խեղճ ձուկ, նա հառաչում էր,  
Նրա ու ջրի քողածածկույթը եղավ պարիսպը,  
Եվ հառաչանքը՝ մինչ անձիր երկինք՝ բարձրանում էր վեր:

Ծարավ մարդը վճռեց վերացնել այդ պատուհնը, որպեսզի ձեռ-

քը ջրին հասնի: Քանդում էր պատից հողե աղյուսները և ջուրն էր նետում: Այս գործը երկու օգուտ ուներ:

Առաջին օգուտն այն էր, որ ջրի քաղցր ձայնը աղյուսի հարվածից նրան արթեցնում էր, ինչպես Էսրաֆիլի\* ձայնը, որ մեռյալներին հարություն է տալիս:

Գոչյունը նրա նման էր կարծես շեփորածայնին սուրբ Էսրաֆիլի, Մեռյալին ասես նա փոխանցում էր այս կյանքից հավերժ:

Երկրորդ օգուտը այն էր, որ վերցնելով չթրծած աղյուսները՝ նա պահ առ պահ մոտենում էր ջրին:

Բարձր պարսպի աղյուսահողի նվազեցումից  
Ավելի իջավ նա ամեն անգամ, երբ պատը քանդեց,  
Պարսպպատի նվազեցումը բաղձալի պահին նրան մոտեցրեց,  
Քանզի պահ առ պահ արգելապատը դարձան էր լինում  
մի այլ միացման:

Աղյուսների քանդելը մի տեսակ փառաբանում է, որ կատարվում է ջրին ընդառաջ գնալու ժամանակ:

Այո՛, ո՛վ մարդ, անփույթ մի՛ եղիր, նյութականի աղյուսները քանդի՛ր բարձր պարսպից և ճակատդ հպի՛ր գետնին, որպեսզի առնչվես աստվածայինին: Քանի դեռ գոյություն ունի բարձր պարիսպը՝ չես արժանանա աստվածային երկրպագության փառքին:

Եթե ցանկանում ես հասու լինել հավերժության կենսաջրին, պետք է հողե բարձր պարսպից, որ քո մարմինն է, հրաժարվես: Նա, ով պարսպի վրա առավել ծարավություն զգա, ավելի ջանադրաբար կքանդի աղյուսն ու հողե պատը, և նրանք, ովքեր ավելի նվիրյալ ու սիրահար են, ավելի մեծ աղյուսներ են տեղահան անում:

Պարսպի վրա նա, ով ծարավ է առավելապես,  
Առավել արագ նա ավերում է հողն ու աղյուսը,

Ո՛վ դու պատանի, ջահելությունդ հարստություն է,  
Խոնարհ դու եղի՛ր ու քանդի՛ր արագ խիճն ու աղյուսը,  
Քանի դեռևս վրա չի հասել օրը ծերության,  
Եվ քո օձիքին սկզբից մինչ վերջ պարան չի կապել :

.....  
\* Փողի մեջ փչող հրեշտակը, որի շեփորի ձայնից դատաստանի օրը մեռյալները հարություն են առնում:

### ՀՈԳՈՒ ԱՆՊԵՏՔ ՓՈՒՇԸ

Թիկնեղ, պերճախոս մի մարդ մի փուշ ցանեց անցուղու կենտրոնում: Ճանապարհով անցնող մարդիկ նրան նախատում էին և պահանջում, որ փուշը արմատախիլ անի, սակայն նա անուշաղիլ է մարդկանց բողոքների նկատմամբ:

Փուշը ամեն օր, ամեն ամիս ու տարի ավելի ու ավելի էր արմատակալում և հզորանում, սակայն այդ մարդու կյանքը օր-օրի անցնում էր դեպի ծերություն ու տկարություն:

Տեղի նահանգապետն ու դատավորը նրան կանչեցին և կարգադրեցին, որ փուշը այդ վայրից քանդի, սակայն նա շարունակ հետաձգում էր և ժամանակ էր պահանջում:

Դատավորը նրան ասում էր՝ քո այս «վաղը» ասելը պատճառ է դառնում, որ փուշը ավելի արմատակալի, ամրանա ու երիտասարդանա, մյուս կողմից էլ՝ դու ծերանում, տկար ու անզոր ես դառնում, ուրեմն ժամանակն ու առիթը բաց մի՛ թող, շուտափույթ քանդի՛ր, այլապես այլևս ի գործու չես լինի այդ փուշը արմատախիլ անել:

Սակայն նա ամեն ինչ թողնում էր ապագային:

Դու, որ ասում ես վաղը ես կանեմ, հաստատ իմացի՛ր,  
Որ ամեն օրը, որ անց է կենում մեր ժամանակից,  
Այդ անպետք ծառը շատ ավելին է տե՛ս փարթամանում,

Եվ այդ անողը ծեր ու անզոր է շարունակ դառնում,  
Արմատը փշի հզորանում է ու վեր սլանում,  
Փուշը դու պոկի՛ր, երբ այն դեռ թույլ է ու դեռ տհաս է,  
Փշի արմատը Աստծո ամեն օր հզորանում է,  
Էլ մի՛ հապաղիր, մի՛ թող, որ անցնի կյանքդ անիմաստ:

Ո՛վ եղբայր, ուշիմ եղի՛ր, որ բոլոր վատ ու այլանդակ հատկությունները, որ քո մեջ են, փուշ է քո կատարելության ճանապարհին: Եթե շուտափույթ կերպով այս փշերը քո հոգու նուրբ ու քնքուշ էջից դուրս չհանես, կարմատակալի, իսկ դու ավելի թույլ ու տկար կդառնաս: Ուրեմն, այժմ, երբ երիտասարդ ու հզոր ես, և այն փուշն էլ թույլ է, գոտեպնդվի՛ր և այն պոկի՛ր, և ինչպես Օմարը և Աբուբարքը՝ /Խեյբեր հրապարակում/ քեզ այս ու այն դուռը մի՛ գցիր, այլ ինչպես մարգարե Ալին՝ հրապարակ եկ և Խեյբերի դուռը պոկի՛ր, այլապես ժամանակը ձեռքից բաց կթողնես:

Կամ վերցրու կացին և խփի՛ր ուժգին տղամարդու պես,  
Դու Ալիի պես քանդի՛ր այս դուռը հսկա Խեյբերի,  
Եվ կամ էլ ինչպես արդարամիտը և խորաթափանց խելամիտը մեծ՝  
Վարքը դու ընտրի՛ր այլ ու օտարի:

Դու լույս ու ջուր ես, և այն փուշը կրակ է: Քո լույսին ու ջրին փշի նկատմամբ հաղթանակ պարզևի՛ր:

Կրակի մահը լույսն է անմար ուղղահավատի  
Ինչ հակառակ է, հնարավոր է արագ վերացնել հակառակվելով,  
Թե ուզում ես դու խույս տալ կրակի ահ ու փորձանքից՝  
Դու ողորմության ջուրը դիր սրտին վառվող կրակի,  
Այդ ողորմության աղբյուրի ջուրը բարեպաշտն է,  
Ջուրն անապական մաքուր հոգին է հավատացյալի,  
Էլ դու մի՛ ասա՝ անպայման վաղը, քանզի վաղերը  
անցան գնացին,  
Եվ մի՛ հապաղիր, որ իսպառ չանցնի օրերը ցանքսի:

### ՎԵՀԱՆՉՆՈՒԹՅՈՒՆ ԱՏՐԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Թագավորը մի աստվածային մարդու /իմաստուն և հավատավոր մարդու/ աշակիսի մի պատգամ հղեց.

- Ինձանից ինչ-որ բան ուզիր, որ քեզ նվիրեմ:

- Ո՛վ արքա,- ի պատասխան գրեց աստվածային մարդը,- չես ամաչու՞մ, որ ինձ նման պատգամ ես ուղարկում: Ես երկու հնազանդ ծառա ունեմ, որոնք քո էմիրն են ու նահանգապետը և ամբողջովին տիրապետում են քեզ, այժմ ես քո օրապահիկի գերի՞ն լինեմ:

Ասաց՝ ո՛վ արքա, դու չես ամաչու՞մ,  
Որ ինձ ասում ես նման հիմար բան.  
Ես ունեմ երկու ծառաներ նվաստ,  
Եվ այդ երկուսը քեզ դատավոր են:

Թագավորը հարցրեց.

- Ովքե՞ր են այդ երկուսը:

- Մեկը զայրույթը,- պատասխանեց աստվածային մարդը,- իսկ մյուսը կիրքն է:

Ուրեմն նա, ով գերի է կրքին ու զայրույթին՝ արքա չէ: Իսկական արքան այնպես լի է բարոյական ու իմացության լույսով, որ նույնիսկ արևի և լուսնի լույսի կարիքը չի գգում: Լողմանի նման, որ արտաքուստ ստրուկների դասին էր պատկանում, սակայն տերը նրան ավելի էր սիրում, քան իր որդիներին, քանզի նա ազատագրված է ցանկասիրություններից, և հենց այս խնդիրը նրան, ստրուկ լինելով հանդերձ՝ դարձրել է տեր ու պարոն:

Ուրեմն արտաքուստ Լողմանը իր տիրոջ ստրուկն էր, սակայն ներքուստ նրա պարոնն էր, այնպես որ աշխարհը աշակիսի հակա-

դարձ միջադեպեր շատ է պարունակում: Թանկարժեք քարերով զբաղվող մասնագետները պետք է քարը ոսկուց և ոսկին քարից զանազանեն և նյութական ոսկին նրանց համար ավելի անարժեք է, քան հարդացողունը: Նրանք հետամուտ են իմաստային ոսկուն:

Դու միայն նրան իմացիր արքա, ով ազատված է արքայությունից, Առանց արևի ու լուսնալույսի իր լույսը միայն բավարարում է, ճոխ շտեմարան ունի նա հսկա, և ինքն ամոթի շտեմարանն է, Ունի անսահման կարողության և թշնամին է լինելիության, Տերը Լողմանի միայն արտաքուստ տերն է նրա, Բայց իրականում Լողմանի ծառան տերն է Լողմանի, Եվ այս աշխարհում նման շատ բաներ դեռ կա, կլինի, Եվ նրանց աչքին ավելի քիչ է գոհարը շքեղ, քան հեզ ծղոտը:

### ԴԱՌԸ ՍԵԽԸ ԵՎ ԼՈՂՄԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Լողմանի տերը, որ զգացել և ըմբռնել էր Լողմանի բարոյակա- նության վեհությունը, նրան սկսեց ավելի բարձր դասել մյուս բոլոր ստրուկներից և նրան անչափ շատ էր սիրում, այն աստիճան, որ տարատեսակ ճաշերի մեջ միայն Լողմանի կերած ճաշի մնացուկն էր ուտում, և այն ճաշից, որ Լողմանը չէր կերել՝ չէր ճաշակում, այլ դեռ էր նետում կամ շատ դժկամությամբ էր նրանցից փորձում, մինչդեռ Լողմանի թողած ուտեստները մեծ հրճվանքով ու ոգևորու- րյամբ է օգտագործում:

Օրերից մի օր մի սեխ նվեր բերեցին Լողմանի տիրոջ համար: Տերը սեխը կտոր-կտոր արեց ու տվեց Լողմանին: Լողմանը այդ կտորները ուտում և ձևացնում էր, թե շատ քաղցր է և մեծ սիրով ու ոգևորությամբ է ուտում: Երբ տերը զգաց, որ Լողմանը սեխը սիրով և հրճվանքով է ուտում, տասնյոթ կտոր սեխ տվեց Լողմանին, և

Լոդմանը շարունակեց ուտել:

Երբ սեխի վերջին կտորն էր մնացել տերը վերցրեց, սակայն երբ այն բերանը տարավ, զգաց, որ թույնի պես դառն է: Լեզուն այտուցվեց, կոկորդը այրվեց և սիրտը խառնեց:

Հենց որ կերավ, դառնությունից կրակ բռնեց,  
Եվ թե՛ լեզուն, թե՛ կոկորդը ցավից այրվեց:

Մի ժամ անց Լոդմանին ասաց. «Ո՛վ իմ ընկեր, այդ թույնը ինչպե՞ս կերար, քո համբերությունն ու տոկունությունը որքա՞ն է»: Լոդմանն ասաց. «Ես քո հագարավոր բարիքները վայելեցի և բոլորը բարի էին, ամաչեցի, որ ասեմ այս մեկը դառն է: Այս խայթոցը քո բոլոր բարի ողորմությունների դիմաց քաղցր համարեցի»:

Ամաչեցի ես, որ մեկն ու մեկը դառը համարեմ,  
Գինի չեմ խմում, ով դու իմաստուն ու շնորհաշատ,  
Քանզի, ո՛վ իմ տեր, ողջ անդամներս քո ընծաներից  
Ազնվացել են և քո հատիկի գերին են դարձել:

Ես այս դառնությունը, որ քո ողորմած ու բարի ձեռքից եմ ստացել, քաղցր եմ համարում: Այդ բարի ձեռքը դառնությունները քաղցր է դարձնում, պղինձը ոսկու է վերածում և ցավերը ապարիւնում է:

Գորովանքից՝ դառնությունները քաղցր են դառնում,  
Գորովանքից՝ պղինձ ու երկաթ ոսկի են դառնում,  
Գորովանքից՝ ցավերը տհաճ մաքուր են դառնում,  
Գորովանքից՝ ցավերը անբուժ բուժվող են դառնում,  
Գորովանքից՝ փշերը սուր- սայր ծաղիկ են դառնում,  
Գորովանքից՝ քացախ ու մաճառ գինի են դառնում,  
Գորովանքից՝ կախաղան ու փայտ թախտեր են դառնում,

Գորովանքից՝ բռն ու ծանրոցը բարեբախտության անիվ են դառնում,  
Գորովանքից՝ սառնամանիքը ծաղկանոց է դառնում,  
Անգորովանք դրախտային պարտեզը հնոց է դառնում,  
Գորովանքից՝ կրակը լույս է դառնում,  
Գորովանքից՝ լույսը հուրի է դառնում,  
Գորովանքից՝ քարը յուղ է դառնում,  
Անգորովանք մոմը երկաթ է դառնում,  
Գորովանքից՝ տրտմությունը ուրախություն է դառնում,  
Գորովանքից՝ հսկան առաջնորդ է դառնում,  
Գորովանքից՝ խայթոցը քաղցր է դառնում,  
Գորովանքից՝ առյուծը մուկ է դառնում,  
Գորովանքից՝ ծուռը շիտակ է դառնում,  
Գորովանքից՝ սերը ողորմածություն է դառնում,  
Գորովանքից՝ մեռյալը հարություն է առնում,  
Գորովանքից՝ արքան ծառա է դառնում:

Ուրեմն, ո՛վ եղբայր, Լոդմանի պես իմաստուն եղի՛ր, որ իր տիրոջ բարիքների ու գորովանքի դիմաց այդպես երախտապարտ ու շնորհակալ էր, որ նրա խայթոցը քաղցր էր համարում և նրա թույնը որպես քաղցրավենիք էր ընդունում:

Մենք վեհագույն Աստծո և նրա անսահման ողորմության ու բարիքների դիմաց եթե հոգս ու ցավ ենք տեսնում, պետք է տոկունությամբ համբերությամբ և փառաբանությամբ այն քաղցր ու բուժիչ համարենք, ինչպես Էբրահիմ Խալիլը բարոյական ու ներքին լույսով. կրակի մեջ տեսնենք դրախտը, և փուլ առ փուլ առաջանանք դեպի լուսին ու արև, այլ ոչ թե որպես հագուստի օղակ՝ կառչած մնանք դռանը:

Պետք է մարմինը սուրբ Աբրահամի, որ գնա մինչ լույս  
Եվ կրակի մեջ տեսնի դրախտն ու թերությունը,  
Փուլ առ փուլ գնա դեպի լուսինն ու արեգակը,  
Որ ինչպես օղակ չմնա ոչինչ առկախ դռանը:

Եվ շան երախտագիտությունից նույնպես հիշենք Սաադիի այս տողերը.

Շունը երբևէ քո մի պատառը չի մոռանալու  
Թե հարյուր անգամ զարկես դու քարով,  
Իսկ ստոր մարդուն թե մի կյանք շոյես  
Մի չնչին բանից քեզ կկործանի իր տհաս խելքով:

### ԱՆՊԱՏԿԱՌ ԳՈՌՈՋԻ ՊԱՏԻԺԸ

Մի ընթերցող սուրբ Գուրանից կարդում էր այս պատգամը.  
«Անհավատներին ասա, ինձ իրագել դարձրեք, եթե ձեր ջրերը  
սուզվեն հողում, ո՞վ կարող է հոսող և ախորժելի ջուրը ձեզ հասա-  
նելի դարձնել»:

Մի մտավորական, որ չոր իմաստասիրությունը և տրամաբա-  
նությունը իր մասնագիտությունն էր դարձրել, անցնում էր այդ վայ-  
րով: Հենց որ լսեց այդ պատգամը, ամենայն անպատկառությամբ  
ասաց. «Բահ, քլունգ ու սուր կացին կբերենք և ջուրը կհոսեցնենք»:

Թշվառ ու հիմար մի տրամաբան և իմաստասեր  
Անցնում էր մի օր հպարտ ու գոռոզ՝ դպրոցի կողմով,  
Լսեց մի պատգամ և իրեն թվաց՝ անհիմն, անվայել,  
Ասաց՝ անվարան կբերենք ջուրը բահ ու քլունգով,  
Բահի հարվածով ու սուր կացիներով  
Մենք վեր կհանենք հողի ընդերքից ջուրը սառնորակ:

Հենց այս իմաստասեր կոչվածը գիշերը քնեց և երագում տե-  
սավ՝ մի աժդահա մարդ հզոր բունցքով հարվածեց դեմքին և եր-  
կու աչքը կուրացրեց, այնուհետև նրան ասաց. «Ո՛վ թշվառ տգետ,

եթե իրավ ես, այժմ կացինը բեր և կուրացած աչքիդ լույսը դար-  
ձյալ դուրս հանիր աչքիդ միջից»:

Նա առավոտյան արթնացավ և նկատեց, որ աչքերի լույսը վե-  
րացել ու կուրացել է:

Յերեկն արթնացավ և գույգ աչքերը կուրացած տեսավ,  
Հորդառատ լույսը իսպառ կորել էր իր գույգ աչքերից:

Այդ գոռոզ մարդը եթե դաս քաղեր եղելությունից, իրապես կա-  
պաշխարեր և գնացած ջուրը ետ կբերեր իր հունը, սակայն հաջո-  
րությունը մի ընկեր է, որ չեն տալիս բոլորին: Գոռոզությունն, ան-  
պատկառությունն ու մեղքը հաստ քող են, որ փակում են ապաշ-  
խարանքի ուղին, և այն սիրտը, ուր քարի պես կարծրացել է ապաշ-  
խարանքի ջուրը, ինչպես պիտի այն ճեղքի և ոռոգի արտը:

Թե հառաչեցիր ու ապաշխարող կրկին դու եղար՝  
Լույսը գնացած օրհնությամբ վերին դու ետ կստանաս ,  
Մակայն հասու չէ ապաշխարանքը Աստծուն մշտապես,  
Չղջումի խոսքը ամեն հարբածի վայել չէ,անշուշտ,  
Այլանդակ գործը և չարաբաստիկ հրաժարումը  
Փակել էր իսպառ սիրտ տանող ուղին ապաշխարանքի,  
Միրտը կարծրացավ, քարի դեմքի պես խիստ ու անհաղորդ,  
Ինչպես կճեղքի ապաշխարանքը ոռոգման համար  
արտը չորացած:

### ՄՈՎՍԵՍԸ ԵՎ ՀՈՎԻՎԸ

Մովսես մարգարեն, որ մեծ մարգարեներից էր, դաշտում մի հովվի տեսավ, որ Աստծո հետ այսպես էր գրուցում. «Ո՛վ Աստված, որտե՞ղ ես, որ ծառադ դառնամ, որ քո երկարաճիտ կոշիկներդ կարեն և մազերդ սանրեն, շապիկդ մաքրեն ու լվանամ: Քեզ համար կաք բերեն, և եթե հիվանդանաս, քեզ խնամեն ու հոգ տանեն, ձեռքդ համբուրեն, ոտքերդ մերսեն, քնելու ժամանակ քո տեղը մաքրեն, և առավոտ և երեկո քո նախաճաշն ու ընթրիքը քո կողքին դնեն և...

Ասա որտե՞ղ ես, որ ես քո ծառան շարունակ լինեմ,  
Չարուխդ կարեն, մազերդ սանրեն ու քեզ խնամեն,  
Շորդ լվանամ ու մոծակներին քեզնից հեռացնեմ,  
Թե հիվանդանաս՝ ես քեզ խնամեմ,  
Ես քո գործերին ինչպես հարազատ, հոգատար լինեմ,  
Չեռքդ համբուրեմ, ոտքդ տրորեմ ու քեզ ծառայեմ,  
Քնելու պահին քո տեղը մաքրեմ ու քունդ հսկեմ:

Ո՛վ Աստված, որ իմ հովվության բոլոր երգերը քո հիշատակին է, և իմ բոլոր այծերը քեզ մատաղ անելու համար է:

Բոլոր այծերս թող մատաղ լինեն միայն քեզ համար,  
Քո հիշատակի համար է միայն իմ« հե՛յ-հե՛յն ու հա՛յ-հա՛յը»:

Հովիվը այդ կերպ խոսում էր Աստծո հետ: Մովսեսը զգաց, որ այս հովիվը չի ճանաչում իր Աստծուն և նրան, ինչպես մահկանացուներին ենթադրում է կոշիկով, գլխարկով, շորերով ու բերանով: Նա մոտեցավ հովվին և ասաց. «Այս ի՞նչ հանցավոր ու անարդար համեմատություններ ես անում, զգույշ եղի՛ր լեզվիցդ, մի՞թե Աստ-

ված քո հորեղբայրն է կամ քեռին, որ նման ձևով ես նրա հետ խոսում: Եթե շարունակես այդպես խոսել, աստվածային կրակը քեզ կայրի»:

Չուր էր այդ ձևով խորհում ու խոսում անգետ հովիվը,  
Ասաց Մովսեսը՝ ու՞մ հետ է խոսքդ, ո՛վ մարդ արարած,  
Ի՞նչ շաղակրատանք, սա ի՞նչ հեթանոս զոհաբերում է,  
Բամբակի մի խուրձ սեղմի՛ր բերանդ ու արագ լռի՛ր,  
Չարոխը միայն և ոտնամանը մարդուն է վայել,  
Արեգակին մեծ՝ նման խեղճ բաներ անվայելուչ է,  
Թե դու չփակես հիմար բերանդ այս խենթ խոսքերից՝  
Կրակը կայրի ողջ մարդկությանը.

Ասա, ու՞մ հետ ես դու այդպես խոսում, քո հորեղբա՞յրն է,  
թե՞ մորեղբայրը,  
Մարմինն ու կարիքը հատկությունները չեն բարձրագահի:

Հովիվը, երբ Մովսեսի նախատինքի կարկուտի տակ հայտնվեց և իմացավ, որ Մովսեսը Աստծո մարգարեներից է, խիստ սարսափեց և լռեց և հուզմունքից շապիկը պատռեց, հառաչեց և գլուխը դրեց ցավ ու հոգսի կրակի մեջ և ամեն ինչ թողնելով՝ մեն ու միայնակ, գլուխն առած վազեց անապատ և Մեջնունի պես սար ու ձոր ընկավ ու անհայտացավ:

Ասաց՝ ո՛վ Մովսես, դու իմ բերանը լրիվ փակեցիր,  
Եվ իմ զոջանքից նվաստ մարմինս հրին հանձնեցիր,  
Հագուստը պատռեց, իրեն նզովեց և հառաչելով  
Գլուխն առավ ու անապատով գնաց ու կորավ:

Մովսես մարգարեին ներշնչվեց, թե ինչու՞մ մեր ծառային մեզնից վանեցիր, նա այրվում է կարոտից և այլ աշխարհում, որ սիրո ու պարզության աշխարհն է, և դուրս է խելքից բանականությունից ու տրամաբանությունից, մեզ հետ կապ էր հաստատել:

Աստծուց ներշնչանք եկավ Մովսեսին.  
«Դու մեր ծառային մեզնից հեռացրիր,

Դու միացումի համար ես եկել  
Եվ ոչ թե որպես արգելք ես եկել,  
Ես չեմ արարել, որ օգուտ քաղեմ,  
Ողորմությունն է աջակցությունս,  
Մենք չենք նկատում դուրսը և խոսքը,  
Մենք լուռ նայում ենք էության խորքը :  
Վառի՛ր հոգու մեջ սիրո կրակը,  
Այրի՛ր մտքերը ու փուչ խոսքերը,  
Ամեն մեկի մեջ ինչ-որ խառնվածք մենք ներշնչել ենք,  
Եվ ամեն մեկին ասելու մի ձև մենք շնորհել ենք,  
Միրո կրոնը այլ կրոններից առանձնացված է,  
Միրահարների կրոնն ու ազգը առանձնացված է»:

Դրանից հետո Մովսեսի վեհ հոգում բացվեց սիրո և վեհության մի այլ դուռ, և նա զգաց, որ Աստծո իմացությունն ու ճանաչումը այնքան է, որքան արարածներն են ու շնչավորները:

Մովսեսը թափառեց անապատներով, որպեսզի գտնի հովվին և նրանից ներողություն խնդրի: Նրան գտավ լայնածիր անապատում և նրա սերն ու նվիրվածությունն ու մաքրությունը գովեց և նրա անվրդով հոգին, որ վրդովվել էր, խաղաղեցրեց և ասաց.

Դու այսուհետև մի՛ փնտրիր երբեք բարեձևություն,  
Ինչ կամենում է քո սիրտը ներված դու արտահայտի՛ր:

Հովիվը Մովսեսին ասաց. «Ես այլևս այն հովիվը չեմ: Ես հենց այս հովվական հագուստով հասա երկնային բարձրաբերձ ծառին և սիրո թևերով և աստվածային հուզումով, որ ունեմ, սավառնել և հրեշտակներին եմ հասել»:

Ես կարճ կապեցի իմ լեզուն երկար,  
Թե ուզում ես՝ դու քո միջից կանչի՛ր:

Ինչևէ, եթե զգում ես, որ քո հոգին դեպի բարձր երկինքն է հակվում, այդ ուղին ընթացի՛ր և եթե գլուխդ դեպի գորշ հողը խոնարհես՝ ի վերջո գահավիժումն ու մայրամուտն է նրա ավարտը, և Աստված նման մարդկանց չի սիրում:

Թե ցանկանում է հոգիդ սլանալ դեպ բարձունքները,  
Ուրեմն այնտեղ է քո հզոր հոգու վեհ զարգացումը,  
Թե գլուխդ դու շարունակ կախես դեպի երկիրը,  
Դու կործանված ես, և մայրամուտդ վրա է հասնում:

### ՓՐԿԱՐԱՐ ՀԵԾՅԱԼԸ

Մի մարդ դաշտի մեջ բերանը բաց միայնակ քնել էր ծառի տակ: Մի օձ մոտեցավ և գլուխը նրա բերանը մտցրեց, որպեսզի ներս անցնի: Այդ պահին այդտեղով անցնող մի խելացի և բարի մարդ՝ ձին հեծած, նկատեց այդ տեսարանը, շտապ մոտեցավ, որպեսզի արգելի քնածի բերանը մտնող օձին, սակայն նրա ջանքը ապարդյուն անցավ, և օձը քնածի կոկորդից ներս սահեց ու տեղ գտավ նրա ստամոքսում:

Հեծյալը, ուրիշ ելք չգտնելով, ձեռքի գուրգով մի քանի հարված հասցրեց քնածի կողերին ու մեջքին: Մարդը արթնացավ և իր առաջ տեսավ գուրգը ձեռքին մի հեծյալի: Մարդը նկատեց, որ կողը և մեջքը վիրավորվել են և արյուն է գալիս: Նա սարսափից փախուստի դիմեց, սակայն հեծյալը նրան հետապնդեց: Մարդը ցավից ու սարսափից վազեց մի ծառի տակ ու այնտեղ վայր ընկավ: Այդ ծառի խնձորները վաղուց թափվել էին գետնին ու փտել էին, հեծյալը գուրգը ձեռքին ընկած մարդուն մոտեցավ և ստիպեց

նրան, որ այդ նեխած խնձորները ուտի: Մարդը ստիպված բավականաչափ կերավ այդ խնձորներից:

Հեծյալը նրան հարվածում էր, և մարդը դաշտով մեկ վազում ու

հառաչում էր. «Թո՛ղ, հեռացի՛ր ինձանից, ինչու՞ ես ինձ հարվածում, ես ի՞նչ վատ բան եմ արել քեզ...»:

Մակայն բարի հեծյալը նրան հարվածում և ասում էր, որ պետք է վազի և ուշք չէր դարձնում նրա հառաչներին ու նզովքներին:

Հառաչում էր հեզ, թե ով իմ էմիր, ախր այդ ինչու՞,  
Ի՞նչ եմ արել քեզ, որ հետապնդում ու տանջում ես ինձ,  
Հենց որ նա մի նոր նզովք էր ուղղում հեծյալին բարի,  
Սա հարվածում էր, և ստիպում էր, որ վազի դաշտում:

Թշվառ այդ մարդը չգիտեր իր ստամոքսում տեղավորված օձի մասին, և բարի հեծյալը ցանկանում է այդ ձևով նրան փրկել, այդիսկ պատճառով գոռում-գոչում էր, թե՛ ո՛վ տմարդ, ինչու՞ ես ծեծում, ինչու՞ ես տանջում, Աստված թող քեզ կործանի և...

Նա դեռևս շարունակում էր վազել դաշտով, և հենց այդ վազքը պատճառ եղավ, որ ինչոր ստամոքսում էր, այդ թվում և օձը՝ փախվի: Երբ մարդը տեսավ դեղին լեղին և բերանից դուրս ընկած օձ, այդ պահին զգաց հեծյալի սրտացավությունը և ամենայն խոնարհությամբ կանգնեց բարեգործ հեծյալի առաջ և ներողություն խնդրեց և բարության համար իր երախտագիտությունը հայտնեց: Օձին տեսնելով՝ նա մոռացավ իր բոլոր ցավերն ու հառաչանքները:

Հենց որ նա տեսավ իր ստամոքսից դուրս եկած օձին՝  
Գետնամած օրհնեց այն բարերարին ու ներում հայցեց,  
Ահն ու սարսափը, սև ու այլանդակ օձին տեսնելով՝  
Իսպառ հեռացան, ու ցավերը խոր հանկարծ մեղմացան:

Երբ նա զգաց, որ հեծյալը իրեն մեծ ծառայություն է մատուցել, և կյանքը փրկել է, նրան ողորմածության Գաբրիել հրեշտակա-

պետ անվանեց և շնորհակալ եղավ:

Ասաց՝ դու ինքդ ողորմածության սուրբ Գաբրիելն ես  
Կամ Աստված ես և բարիքների միակ տերն ես,  
Ո՛վ սուրբ նվիրյալ, ահա տեսա ես պայծառ դեմքդ,  
Մեռյալ էի ես, և դու ինձ կրկին կյանք նվիրեցիր,  
Ա՛խ ինչ հրճվանք է նրան, ով նորից տեսքդ կտեսնի  
Կամ պատահաբար նա կհայտնվի քո լույս թաղերում:

Ո՛վ բարի հեծյալ, քո օրինակը նման է այն ավանակատիրոջը, որ հետապնդում է իր ավանակին, որպեսզի նրան ազատի գայլերի երախից, սակայն ավանակը չի հասկանում իր տիրոջ սրտացավությունը և փախչում է նրանից:

Ավանակը խեղճ Աստծուց փախչում է ավանակաբար,  
Նրա ետևից տերը բարեխիղճ բարության գոհար,  
Ոչ թե փնտրում է նրան վնասի կամ օգտի համար,  
Պարզապես միայն, որ չհոշոտեն գայլերը նրան:

Ո՛վ սապետ հեծյալ, ների՛ր ինձ, որ համարձակվեցի քեզ վրա գոռալ, այժմ մի հարց ունեմ, ինչու՞ հենց սկզբից չասացիր, որ օձ է մտել ստամոքսիս մեջ և ուզում ես ինձ ծեծելով ու վազեցնելով փախեցնես և օձից ազատես:

Բարի խելամիտ հեծյալն ասաց.  
Եթե ասեի ինչ-որ բան ես քեզ,  
Ջուր կդառնար լեղիդ անհապաղ,  
Թե ասեի քեզ այդ օձի մասին՝  
Վախն ու սարսափը կկործաներ քեզ :

Ուրեմն ո՛վ եղբայր, ուշիմ եղի՛ր, որ եթե մարգարեներն ու ա-

վագները ինչ-որ ծրագրեր քեզ քերեն, այն ցավ ու տանջանք մի՛ համարիր, այլ նայիր այդ ծրագրերի էությունը, որ քո օգտին է և խելամիտների խրատը քեզ համար դեղամիջոց ընտրիր:

Քանզի նրանց առերևույթ թշնամությունը քո էության ուրախության պատճառն է դառնալու:

Թշնամությունը այսպիսին է, տե՛ս, խելամիտների  
Թույլները նրանց ապաքինումն է մեր մարմինների,  
Հիմարների հետ ընկերությունը ցավ ու տանջանք է,  
Դու այս հեքիաթը ուշադիր լսի՛ր՝ որպես մի առակ:

### ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՊՈՒՇԻ ՀԵՏ

Մի արջ վիշապի ճիրաններն էր ընկել: Ահից ու ցավից ոռնում էր: Մի քաջարի մարդ լսելով նրա հառաչը՝ շտապ հասավ և հերոսական հարձակումով արջին ազատեց վիշապից:

Աշխարհում միշտ օգնական են ասպետները քաջ ու արի՛  
Այն պահին, երբ լավում է խոր հառաչանքը անմեղների,  
Անմեղների ձայնը տխուր ամեն տեղից միշտ կլսեն,  
Եվ կշտապես, այն կողմը դու, ինչպես արդար ողորմություն:

Թեև վիշապը այն քաջարի տղամարդուց ավելի ուժեղ էր, սակայն մարդու հնարամտությունն ու խորամանկությունը կենդանիների ուժից առավել հզոր են, և քաջարի մարդն էլ չպետք է գոռոզ լինի, քանզի ձեռքից վեր ուրիշ ձեռք էլ կա:

Դրանից հետո արջը ի նշան երախտագիտության՝ շան նման հետևում է այդ հերոսին և նրան պահպանում:

Մի օր այդ քաջ մարդը դաշտում հոգնեց, պառկեց գետնին՝ մի

փոքր քնելու և հանգստանալու: Մի անցորդ նկատեց քնած անձնավորությանը հսկող հսկա արջին: Նա շատ զարմացավ և քաջարի մարդուն ասաց. «Ինչո՞վ եք կապված այս արջի հետ»:

Քաջարի մարդը անցորդին պատմեց եղելությունը, և անցորդը ասաց. «Այնուամենայնիվ, մի՛ կապվիր արջի հետ և խուսափի՛ր նրա հետ ընկերակցելուց»:

Եվ պատմեց նրան եղելությունը այն մեծ վիշապի,  
Ասաց՝ մի՛ կապվիր դու արջին ապուշ,  
Ապուշների հետ ավելի վատ է թշնամիներից:  
Խորամանկությամբ, ինչ որ դու գիտես՝ նրան ետ քշի՛ր:

Քաջարին ուշադրության չարժանացրեց անցորդի խոսքերը և մտածեց, որ նա նախանձից է ասում նման բան, քանզի այդ հզոր կենդանին ամենայն սիրով հսկում է իրեն:

Այնուհետև անցորդն ասաց. «Ես ցանկանում էի քեզ ծառայություն մատուցել, այդուհանդերձ, նորից եմ կրկնում՝ արջի հետ մի՛ ընկերակցիր»:

Ասաց՝ քո գործին գնա՛, ո՛վ նախանձ,  
Ասաց՝ իմ գործը հենց սա էր, ավաղ, և այն քոնը չէր,  
Եվ տագնապում է սիրտս այն մտքից՝  
Նման արջի հետ մի գնա անտառ:

Սակայն քաջարին անցորդի խրատներին ուշք չդարձրեց: Անցորդը գնաց, և հոգնած քաջարին նորից պառկեց ու քնեց: Արջը հսկում էր նրան և նրա վրա նստող ճանճերին հեռացնում էր քաթերով: Ի վերջո մի երես առած ճանճ արջին համբերությունից հանեց և նա սար բարձրանալով՝ մի մեծ քար վերցրեց և եկավ քնած քաջարի մարդու մոտ և նրա այտի վրա տեսնելով նույն համառ ճանճին՝ մեծ քարը բարձրացրեց և ամբողջ ուժով հարվածեց ճանճին: Քնած մարդու ուղեղը ցրիվ եկավ և մարդը տեղնուտեղը մահացավ:

Չայրացավ արջը այդ ճանճից համառ,  
Սարից վերցրեց մի ծանր, մեծ քար,

Քարը վայր բերեց և տեսավ նորից ճանճին այդ համառ,  
Քնածի այտին նստած է հարմար,  
Վերցրեց ջաղացի այն քարը հսկա ու խփեց ուժգին  
Այդ տհաճ ճանճին, որ հեռու վանի իր ընկերոջից,  
Հսկա, մեծ քարը քնածի դեմքը խաշխաշ դարձրեց  
Եվ այս առակը համայն աշխարհին ճիշտ բացահայտեց:

Այս է անգիտակների հետ ընկերության պատմությունը, որը պարսկերենում որպես առած տարածված է «Արջ մորաքույրի ընկերությունը» անվանումով:

Ո՛վ եղբայր, ճշմարիտ ուսուցիչներից օգնություն հայցելով՝ դու ըստ արի անասնական վիշապի բերանից և հառաչելով ու հեկեկալով նրանց օգնության կանչի՛ր, դու արջից պակաս չես, այս դեպքում նրանից պակաս մի՛ եղիր, սակայն այլ դեպքերում զգու՛յշ եղիր, որ դաստիարակության և ընկերակցության ուղղությամբ վտանգավոր է ստոր անխոհեմների հետ, և անհապաղ հեռացի՛ր նրանցից:

### ԿՈՒՅՐ ԵՎ ԱՆՀԱՃՈ ՉԱՅՆՈՎ ՄԱՐԴԸ

ՄԻ կույր մոտենում էր մարդկանց և հառաչելով ու բղավելով ասում.

- Ո՛վ մարդիկ, ես երկու տեսակ կույր եմ, այդիսկ պատճառով արժանի եմ կրկնակի խղճահարության: Ինձ խղճացե՛ք, ինձ օգնե՛ք:

Դուք երկու անգամ ինձ ողորմացե՛ք,  
Քանզի ես ունեմ երկու կուրություն:

Մարդիկ զարմացած հարցնում էին.

- Այսինքն ի՞նչ, ի՞նչ ես ուզում ասել: Այն, որ աչքերդ կույր են՝ տեսնում ենք, սակայն քո երկրորդ կուրությունը ո՞րն է:

- Իմ մյուս կուրությունը այն է, որ ես տհաճ ու խռպոտ ձայն ունեմ,- պատասխանում էր նա,- այն աստիճան, որ իմ ձայնի պատճառով փախչում են ինձանից. ուրեմն՝ կրկնակի անգամ ինձ խղճացե՛ք ու ողորմացե՛ք:

Տհաճձայն եմ և ուր գնում եմ

Պատճառ եմ դառնում ես լուռ տրտմության,

Երկու կուրության համար կրկնակի ողորմացե՛ք ինձ,

Անգորին այսպես զորավիզ եղեք:

Եվ քանի որ այս կույրը իրական ճշմարտությունը ասաց և իր թերությունը խոստովանեց, նրա կրծքից գեղեցիկ հնչյուն դուրս հորդաց և նրա այլանդակ ձայնը քնքուշ ու ներդաշնակ դարձրեց, իսկ մարդիկ սկսեցին նրա նկատմամբ շատ ուշադիր լինել:

Երբ աստծո ողորմածները նկատեն, որ մի մարդ խոստովանում է իր այլանդակությունը, նրա այլանդակության վրա ձեռք կքաշեն և նրան կվերածեն գեղեցիկներից ամենագեղեցիկի:

Ողորմածները, որ առանց առիթ ընծա են տալիս,

Բավական է, որ ձեռք շփեն մի պահ դեմքին տգեղի:

Երբ սիրտը փայլատակում և նման սրտից է դուրս գալիս՝ երզը տգեղ խոսքը գեղեցիկ է դարձնում, սակայն եթե սիրտն էլ մութ է, երեք հավերժական կուրություն նրա ետևից կգա:

Եվ նա, ում սրտի երգն էլ վատ է՝  
Նրան կպատի երեք կուրություն:

Այլանդակության մասին խոստովանությունը նպաստում է կատարելիությանն ու գեղեցկությանը, և գեղեցկության համար

հպարտանալը նպաստում է գոռոզությանն ու տգեղությանը:

Գահավիժելուց փրկվելու համար, քանի դեռ ուշ չէ, գոռոզության փշրանքներից թոթափվիր և աղտեղությունները լվա՝ ապաշխարանքի ջրով, և պարզ ու շիտակ եղի՛ր: Աղվեսի և գայլի խորամանկության վիճակից վերադարձի՛ր, որպեսզի աստվածային հաղթանակին արժանանաս:

Վերադարձի՛ր գայլությունից, ո՛վ ծեր աղվես,  
Հաղթանակը ճշմարիտից պահանջում է վեհանձնություն:

### ԽՈՒՍԱՓՈՒՄ ՎԱՏ ԸՆԿԵՐՈՉԻՑ

Մի օր հեքիմ Ջալինուսը իր ընկերներին ասաց.

- Ինձ տարե՛ք այսինչ բժշկի մոտ, որպեսզի ինձ այս դեղը տա, և ես ապաքինվեմ:

- Դու ինքդ վարպետ ու հեքիմ ես,- ասացին ընկերները.- և մեզանից լավ գիտես, որ այդ դեղը խելագարությունը բուժելու համար է, դու հո խելագա՞ր չես:

- Այսօր մի խենթ նայեց ինձ,- պատասխանեց Ջալինուսը,- և ուրոշ ժամանակ ինձ աչքով էր անում և իմ թևքը ի նշան ընկերության այնպես ձգեց, որ այն պատռվեց: Մրանք նշաններ են, որ իմ և նրա միջև ընկերակցություն ու կապ է հաստատվել, այդիսկ պատճառով զգացի, որ պիտի բուժվեմ:

Իմ մեջ նրանից ինչ-որ էություն տեղ գտավ, անշուշտ,  
Երբ դեմքը շրջեց դեպի իմ կողմը այդ խելագարը,  
Ե՞րբ է թռչունը թռչում անվարան ոչ իր սեռի հետ,  
Խոսքն անիրավի գերեզմանն է խոր ու խորշը մահվան:

Գիտնականներից մեկն ասաց. «Մի ագռավ տեսա, որ թռչում էր արագիլի հետ, և միասին վայր իջան դաշտի մեջ: Ես զարմացա, թե այս երկուսը ինչպե՞ս են իրար հետ ընկերացել: Մոտեցա նրանց, տեսա երկուսն էլ կաղում են: Հասկացա, որ նրանք կաղալու մեջ նման են իրար»:

Երբ մոտեցա զարմացած ու ապշահար,  
Տեսա նրանց, որ երկուսն էլ կաղում են:

Այգի գնացի և տեսա, որ ծաղիկը՝ աղտոտության մեջ ապրող, մի մեծ բզեզի ասում է. «Զո հեռու մնալը ծաղկանոցից քո աղտոտությունն է, քանզի ոչ մի ներդաշնակություն չկա նեխածի և անուշ բույրի միջև»:

Իմաստուն լեզվով ծաղիկն ասում էր բզեզին անմիտ.  
Ո՛վ դու մեծակող, կեղտասեր բզեզ,  
Թե խուսափում ես դու ծաղկանոցից,  
Ատելությունն այդ արժանիքն է լոկ մեծ ծաղկանոցի,  
Թե միաձուլվես ինձ հետ, ո՛վ ստոր,  
Կենթադրեն, թե իմ արմատից ես,  
Թե միաձուլվես՝ թերությունն է իմ,  
Եվ կենթադրեն, որ դա անկասկած էությունն է իմ:

Ուրեմն՝ ո՛վ եղբայր, խուսափի՛ր ու հեռու՛ մնա վատ ընկերոջից և բարի ու արժանի ընկերներ քեզ համար ընտրի՛ր: Եթե վատ ընկեր քեզ հետ կապ հաստատեց, իմացի՛ր, որ քո մեջ թերություն է նկատել: Ուրեմն՝ այն վերացրու, որպեսզի այդ ընկերը հեռանա

քեզանից և իմացի՛ր, որ անարժան ընկերների հեռանալը քո արժանիքի նշանն է, ինչպես ծաղկի լավ լինելը, որից խուսափում է աղտոտ ու ապականված կեղտաբզեզը:

### ԱՅԳԵՊԱՆԸ ԵՎ ԵՐԵՔ ԳՈՂԸ

Մի այգեպան մտավ իր այգին և երեք մարդ տեսավ այնտեղ, որոնք առանց թույլտվության այգի էին մտել: Ուզեց այդ երեքին այգուց դուրս վնդել, սակայն զգաց, որ միայնակ ի գորու չէ երեքի դեմ, մտածեց ու նկատեց, որ նրանցից մեկը սուֆի\* է, մյուսը՝ սեյեդ\*\* ,իսկ երրորդը ախոնդ\*\*\* է: Մտածեց՝ նախ նրանց մեջ տարածայնություն կզգեն, այնուհետև նրանց մեկ առ մեկ դուրս կշարտեն այգուց:

Ի գորու չեմ ես միայնակ կռվի դուրս գալ երեքի դեմ,  
Ուրեմն նախ կբաժանեմ, կմասնատեմ ես նրանց,  
Իսկ այնուհետ ամեն մեկին մյուսներից կանջատեմ,  
Հենց մնացին մեն-միայնակ, նրանց լեզուն կառկեմ:

Այգեպանը նախ սուֆիին ասաց.

- Չեզ վայել չէ, որ նստել եք չոր գետնին, գնացեք, այնտեղ կարպետ կա, վերցրեք ու բերեք:

Սուֆին գնաց կարպետի ետևից: Այգեպանը նրա բացակայության ժամանակ ախոնդին ասաց.

- Դու հոգևոր իշխան ես, և եթե մի կտոր հաց ենք ուտում, դու ես նրա հարամն ու հալալը որոշում և մեզ վրա իրավունք ունես: Այն մյուսն էլ սեյեդ է և մարգարեի որդիներից է: Իմ այգին ի՞նչ արժեք ունի ձեր առաջ: Կյանքս ձեզ մատաղ, բայց ճիշտ չէ, որ դուք՝ երկու պատվեյիներդ, այդ սուֆիի հետ ընկերակցե՛ք:

Նա այնքան ասաց, մինչև այդ երկուսին սուֆիի նկատմամբ

կասկածամիտ դարձրեց, այնպես որ համաձայնեցին, որ սուֆին դուրս գա այգուց:

Այգեպանը մոտեցավ սուֆիին և նրանց ասաց.

- Դու ի՞նչ սուֆի ես, որ գողունի մարդկանց այգին ես մտնում: Այդոք ջոնիդը և բայազիդը քեզ նման կարգադրություն են արել: Այնուհետև նրան քարկոծեց ու դուրս վնդեց այգուց, իսկ նա, դիմելով իր անհավատ ընկերներին, ասում էր.

Այն,ինչ ստացա, դուք ևս, անշուշտ, կստանաք շուտով,  
Նման շատ ծեծի պիտ արժանանա ամեն մի ստոր,  
Ինձ նվաստաբար վնդեց այգուց, և դուք էլ շուտով  
Այս խռովության փայտի հարվածը պիտի ճաշակեք,  
Համայն աշխարհը սար է ահռելի, և խոսքերը քո  
Ինչպես արձագանք, ձայնի պես նորից կդառնան դեպ քեզ:

Այնուհետև այգեպանը ախոնդի ու սեյեդի մոտ եկավ և նրանց մեծարելով ասաց.

- Նախաճաշի ժամն է, ես լավ հաց եմ թխել, և ուտելիքի սուփրան պատրաստ է այգու սենյակում: Դու, որ սեյեդ ես և քեզ պատվելը մեր պարտքն է, գնա՛ և քո հացն հենց այնտեղ կէ՛ր:

Սեյեդը գնաց, և ախոնդը մնաց մենակ: Այգեպանը ախոնդին ասաց.

- Քեզ հարգելը մեր պարտքն է, և դու ես, որ հալալի և հարամի հրամանները մեզ համար պարզաբանում ես, ուրեմն այգին ձեր տրամադրության տակ է, սակայն այս սեյեդը, որ իրեն մարգարեի որդի է համարում, որտեղի՞ց է հայտնի, որ սեյեդ է: Ի՞նչ պատճառով մենք պետք է ընդունենք, որ նա մարգարեի որդին է:

Այգեպանը այնքան նման խոսքեր ասաց, որ ախոնդը համաձայնվեց բաժանվել սեյեդից:

Այնուհետև գնաց սեյեդի մոտ և նրան ասաց.

- Ո՞վ է քեզ թույլատրել այս այգին մտնել, արդյոք գողությունը մարգարեի՞ց է ժառանգություն մնացել: Զո ի՞նչն է նման մարգա-

րեի, դու սուտ ես խոսում և սեյեդ չես:

Այնուհետև նրան այնքան ծեծեց, մինչև խեղճը կհասնեա վիճակում՝ դիմելով շարիաթի գիտակին ու օրենսգետին՝ փախավ այգուց:

Համբերի՛ր դու դեռ, այժմ մնացիր մեն ու միայնակ,  
Թմբուկի նման հարված կստանաս ուղիղ քո փորին:

Այնուհետև այգեպանը ախոնդի մոտ եկավ ու ասաց.

- Դու ի՞նչ շարիաթի գիտակ ու օրենսգետ ես, արդո՞ք Աբու Հա-  
նիֆեն կամ Շաֆեհին վճի՞ռ են կայացրել, որ առանց այգու տիրոջ  
թույլտվության ներս մտնես և կամ հոգևոր օրենսգրքում կարդացե՞լ  
ես այս օրենքը:

Այնուհետև հարձակվեց նրա վրա և, որքան ուժ ու եռանդ ուներ,  
նոքով ու ձեռքով հարվածեց նրան: Ախոնդը, որ ընկերների անհա-  
վատարմությունից խիստ նեղսրտել էր, դիմելով այգեպանին՝ աս-  
աց.

Արժանի եմ ես, ասաց՝ ինձ խփի՛ր, դու ձեռահաս ես,  
Պատիժը նրա, ով որ բաժանվեց իր ընկերներից,  
Ես արժանի եմ ավելի քան այս՝ հարյուրապատիկ,  
Երբ ատելությամբ իմ ընկերներից բաժանվեցի ես :

Ինչևէ, նրան այնքան հարվածեց, որ կիսամեռ եղավ, իսկ հետո  
դուրս գցեց այգուց ու փակեց դուռը:

Ով մենակ մնաց իր ընկերներից,  
Այսպես կլինի և վերջը նրա:

\* Դերվիշ, միստիկ:

\*\* Սոհամմեդի սերնդից սերված:

\*\*\* Սահմեդդական հոգևորական:

## ՃԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԲԱՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Գիտության և միստիկայի մեծերից մեկը իր համար նոր տուն  
կառուցեց: Վարպետը այցելեց նրան և սենյակում դեպի դուրս նա-  
յող մի փոքրիկ անցք նկատեց:

- Այս անցքը ինչի՞՞ համար է:

- Որպեսզի դրսից լույսը ներս թափանցի և սենյակը լուսավորի,-  
պատասխանեց միստիկը:

- Լույսի ներս թափանցումը ինքն իրեն կկատարվի, և սա մի  
մասնակի խնդիր է,- ասաց վարպետը,- դու մի այսպիսի բարի ցան-  
կություն հայտնի՛ր, որ ասենք այդ անցքը սարքել ես նամազի  
մոեզզին լսելու համար, որպեսզի աղոթքի պահը իմանաս: Թող քո  
նպատակը և հիմքը այս բարի ցանկությունը լինի, և այդ դու ես, որ  
պետք է նպատակը զատորոշես, ուրեմն՝ ուշադրություն դարձրու  
հիմնական խնդրին:

Այն մասնակի է, իսկ սա թող լինի միայն ցանկություն,  
Որպեսզի հստակ այդ ձևով լսես ձայնը նամազի,  
Ինքնին հպատակ լույսը շատ արագ ներս կթափանցի,  
Բարի ցանկությունը դու միայն ուզիր, որ անհրաժեշտ է:

## ԲԱՅԱԶԻԴԻ ՀԱԶԶԸ

Պատմում են, որ հռչակավոր միստիկ Բայազիդ Բագրամին  
ուղևորվեց Հաջջ: Ճանապարհին յուրաքանչյուր քաղաքի ու ավա-  
նի հասնելով՝ հարցուփորձ էր անում, որպեսզի մի աստվածային  
մարդ գտնի և նրան այցելի: Վերջապես մի քաղաքում մի ծեր կույր  
մարդու հանդիպեց և մի քիչ զրուցելով հասկացավ, որ այդ պայ

ծառ մարդը ճշմարտության մարդ է: Նրա մոտ նստեց և հարցրեց որպիսությունը:

- Չքավոր եմ և ունեմ երեխաներ,- ասաց մարդը:
- Ու՞ր ես գնում,- հարցրեց ծերունին Բայազիդին:
- Հաջջ եմ գնում:
- Ի՞նչ ունես:
- Երկու հարյուր դերհամ, որ կարել էմ հագուստիս անկյունում,- պատասխանեց Բայազիդը:

- Այդ երկու հարյուր դերհամը ինձ տուր,- ասաց ծերունի կույրը,- որպեսզի երեխաներիս կյանքը ապահովեմ և Զյաբե\* գնալու փոխարեն խղճա և ուշք դարձրու ինձ: Այդ դեպքում քո նպատակին հասած կլինես, և Զյաբեի տերը քո այս արարքի վարձքը ավելի բարձր կդասի, քան Զյաբեի շուրջ պտտվելը:

Բայազիդը վարվեց այնպես, ինչպես այդ ծերունին էր կամեցել:

Ո՞վ Բայազիդ, դու սուրբ Զյաբեն ըմբռնեցիր ու հասկացար, Հարյուր արժեք և վեհություն ձեռք բերեցիր ու անցար:

Այս պատումը կրոնական առումով պետք է այսպես մեկնաբանել:

1. Բայազիդի Հաջջի ուխտագնացությունը սիրուց էր, և նրանից հրաժարումը մեղք չէր համարվի:

2. Իմաստուն այդ ծերունուն դրամ նվիրելը անհրաժեշտություն էր, քանզի եթե գումարը չտար իր երեխաները քաղցից կմեռնեին, այդիսկ պատճառով նրա պարտականությունն էր նրանց գումար տրամադրելը, իսկ երբ գումարը տվեց, կորցրեց իր հարստությունը, այսինքն՝ միայն նման արարքը կարող է իսլամական համարվել, եթե նկատի ունենանք, որ ըստ որոշ պատումների՝ բարության վարձքը և չքավոր բարեպաշտներին օգնելը առավել է, քան Հաջջի ուխտագնացությունը, որը կատարվում է վարձքի /մոսթահարի/ համար և որի հրաժարումը մեղք չի համարվում:

\*Մեքքայի սուրբ տաճարը, ուր գտնվում է նվիրական սև քարը:

Ռեզա Աթուֆի.....5	Գաղտնիքի բացահայտումը.....69
Մ.Մ. Էշթեհարդի.....11	Հրդեհ.....71
Թագավորն ու գեղեցիկ ստրկուհին.....26	Ձկնորսը և երիտասարդը.....72
Այլաբանական սիրո կործանումը.....29	Իմամ Ալիի Անարատությունը....74
Թութակի ծիծաղաշարժ համեմատությունը.....30	Ծուռ մազը.....77
Լուչի քագավորը և կասկածամիտը.....33	Որոշ աղոթքների բավարարման վնասը.....78
Խառնակիչ և խորամանկ վեզիրը.....34	Հիսուսը և նրա հիմար ուղեկիցը...79
Նաֆսի կուռքը.....36	Սուֆին և մենաստանի ծառան...81
Երկնային ձայն.....36	Երկնային թռչունը աղբահոցում..84
Կարեկցանք զոջացող հանցավորի նկատմամբ.....37	Հավա վաճառող երեխան.....86
Ապահով շրջանակը.....38	Չահեդի քարոզությունը.....88
Փախուստ մահվան ճիրաններից.40	Առյուծը խավարի մեջ.....89
Ճակատագիր.....41	«Էշը գնաց» երգը.....90
Առեվտրականն ու թութակը.....43	Ազահ ուղտատերը և սնանկը.....93
Ծերունի տավղահարը.....45	Հեռացում երևակայական կյանքից.94
Ողբացող սյունի հառաչը.....47	Մայրապալանություն.....95
Աբուջահլի կամակորությունը....48	Թագավորը և երկու ստրկուհիները..96
Վրանաբնակ բեղվիների նվերը.....49	Ծարավ մարդը բարձր պարսպի վրա..98
Ուշիմ նավապետն ու քերականը...51	Հոգու անպետք փուշը.....100
Անպոչ առյուծը.....53	Վեհանձնություն ստրկության ժամանակ.....102
Աղվեսի փորձառությունը.....55	Գառը սեխը և Լողմանի երախտագիտությունը.....103
Ընկերոջ կապվածությունը	Անպատկառ գողոզի պատիժը...106
իր սիրո հետ.....57	Մովսեսը և հովիվը.....108
Ճշմարտացույց հայելին.....58	Փրկարար հեծյալը.....111
Գողոզ սահաբի պատիժը.....60	Ընկերություն ապուշի հետ.....114
Խուլ մարդու եվ հիվանդի գրույցը..61	Կույր և անհաճո ձայնով մարդը..116
Սատանայի համեմատությունը...63	Խուսափում վատ ընկերեջից...118
Արվեստագետ չինացիների եվ հռոմեացիների մրցույթը.....64	Այգեսանը և երեք գողը.....120
Մարգարեի գրույցը գիդի հետ....67	Հիմնական խնդիրը և բարի ցանկությունը.....123
	Բայազիդի հաջջը.....123

## فهرست مطالب

۷۴	۳۰- اخلاص امام علی (ع)	۳۶	۱- پادشاه و کنیز زیبا
۷۷	۳۱- موی کج	۳۹	۲- فریادی عشق مجازی
۷۸	۳۲- زیان استجابات بعضی از دعاها	۳۰	۳- قیاس خنده آور طوطی
۷۹	۳۳- عیسی و همسفر ابله	۳۳	۴- شاه لوح و دو بین
۸۱	۳۴- صوفی و خدمتکار خائنه	۳۴	۵- وزیر حيله گر و اختلاف انداز
۸۴	۳۵- مرغ ملکوت و خاکدان چرا	۳۶	۶- بت نفس
۸۶	۳۶- کودک حلوا فروش	۳۶	۷- ندای ملکوتی!
۸۸	۳۷- موعظه زاهد	۳۷	۸- ترحم به گنهکار پشیمان
۸۹	۳۸- شیری در تاریکی	۳۸	۹- دایره امن
۹۰	۳۹- آهنگ خربرت	۴۰	۱۰- فرار از چنگال مرگ!
۹۳	۴۰- شتردار طمعکار و مفلس	۴۱	۱۱- قضا و قدر
۹۴	۴۱- دوری از زندگی خیالی	۴۳	۱۲- بازرگان و طوطی
۹۵	۴۲- کشتن مادر	۴۵	۱۳- پسر چنگ نواز
۹۶	۴۳- شاه و دو غلام	۴۷	۱۴- ناله ستون خنانه
۹۸	۴۴- تشنه ای روی دیوار بلند	۴۸	۱۵- لجاجت ابو جهل
۱۰۰	۴۵- خار نفس آماره	۴۹	۱۶- هدیه عرب چادر نشین
۱۰۲	۴۶- بزرگی در هنگام بر دگی	۵۱	۱۷- کشتیمان باهوش و نحوی مفرور
۱۰۳	۴۷- خربزه تلخ و حشمتی لقمان	۵۳	۱۸- شیرینی دم
۱۰۶	۴۸- سزای مفرور گستاخ	۵۵	۱۹- تجربه آموزی رویاه
۱۰۸	۴۹- موسی و چوپان	۵۷	۲۰- بیوستگی دوست به یار
۱۱۱	۵۰- یکه سوار نجاتبخش	۵۸	۲۱- آینه حق نما
۱۱۴	۵۱- دوستی با ابله	۶۰	۲۲- کینر صحابی مفرور
۱۱۶	۵۲- مرد نابینا و بد صدا	۶۱	۲۳- گفتگوی ناشنوا و بیمار
۱۱۸	۵۳- پرهیز از رفیق بد	۶۳	۲۴- قیاس ابلیس
۱۲۰	۵۴- باغبان و سه نفر دزد	۶۴	۲۵- مسابقه رومیان و چینیهای هنرمند
۱۲۳	۵۵- مسئله اصلی و نیت نیک	۶۷	۲۶- گفتگوی پیامبر (ص) با زید
۱۲۳	۵۶- حج با بزید	۶۹	۲۷- کشف راز!
		۷۱	۲۸- آتش سوزی
		۷۲	۲۹- ماهیگیری و مرد جوان

## ՄՈՂԱՄՍԵՂԻ ՄՈՂԱՄՍԵՂԻ ԷՇԹԵՀԱՐԳԻ

### ՄՈՂԱՎԻ

### ՄԱՍՆԱՎԻ ԳԱՏՈՒՄՆԵՐ

Խմբագիր՝ Խաչիկ Մանուկյան  
Շապիկը՝ Ներսես Մելիքյանի  
Սրբագրիչ՝ Էդվարդ Սիրվոյան  
Համակարգչային ձևավորումը՝ Երանուհի Վանոյանի

Տպագրությունը՝ «Եզեա» հրատարակչատան



---

Ստորագրված է տպագրության՝ 16.03.2007թ.:

Չափսը՝ 60x84 1/16:

Ծավալը՝ 2.3 տպ.մամուլ:

Գինը՝ պայմանագրային:


«Հայաստան» հրատարակչություն. Երևան. Իսահակյան 28

نوشته: محمد محمدی اشتهاردی

# دست‌نوشته شکر

جلد ۱

به مناسبت هشتصدمین سالگرد تولد  
مولانا جلال الدین محمد (مولوی)



## مولوی



ترجمه: ادوارد حق وردیان